Punjab



11

digitised by A.R.A.R.@

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ 1 Մահուան ժամանակի
անլռելի շշուկներէն, շշուկներէն...

ՍՈՒՐԷՆ ՍԱՆԻՆԵԱՆ 10 Ցուրտը

ԱՐԵՒԻԿ ԳԱԲՐԻԷԼԵԱՆ 17 Գիւտ եւ խաբկանք

ԻՎ ՄԻՐԱՆ ԵՒ ՀԱՆՐԻ ԿԵՐՈՒԼ 19 Օգտաւ

ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ 27 Սահակ Պարգեւեան

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ 43 Համաստեղ եւ Թոքովենց

ԻՒՐԻ ՄԱԼՑԵՒ 54 Միջակայ գրականութիւնը
եւ իսկութեան չափանիշը

ՆՈՒՊԱՐ ՉԱՐԽՈՒՏԵԱՆ 68 Արդի գրականութեան
դիմագիծը եւ տագնապը

ԿՈՐԻՒՆ ՇԱՀԻՆԵԱՆ 72 Պատկերակերտումը գրական երկին մէջ

ՍԵԴԱ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ-ՏԱՏՈՅԵԱՆ 75 Արդիականութիւն, ոճարարութիւն
եւ արդիապաշտութիւն

* * * 79 Նոպէլեան մրցանակակիր
Կապրիէլ Կարսիա Մարքէզ

ԱՒՆ 2010

digitised by A.R.A.R.@

201

Բարձր

ԱՄՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

ԻԱ. ՏԱՐԻ, ԹԻՒ 11 ՆՈՅԵՄԲԵՐ 1982 ԵՐԵՎԱՆ

Մ. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

ՄԱՀՈՒԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ԱՆԼՌԵԼԻ ՇՇՈՒԿՆԵՐԷՆ, ՇՇՈՒԿՆԵՐԷՆ

I

Խաւարն անկումն է բիւրեղին
եւ արեան բիւրեղներուն քառսն է մեկին:

Կը բացուիմ լոյսին՝
մահուան քարափի տենդին կը հասնիմ,
կը հակիմ մահուան
սեւ աւազներու խանգարուած էջին
եւ քար կը խօսիմ
շշուկները իմ:

Շշուկը արեան սկիզբն է լոյսին,
հեռագնաց խօսքը մութին,
հաւատարիմ իր կոչումին:

2000

II

Սեւ ադամանդն արեան աղօտ ժամանակի

167-2000 30278-ԱՀ
digitised by A.R.A.R.@

կը խտացնէ ստուերները երկինքի
աստղերու մութ հորերուն:

Լուսանետեր կը յաճախեն յանկարծակի՝
ինչպէս մահուան կարմիր ուռկան, կը մօտենան
ստուերներուն եւ խաւարին մէջ խարխափող ձայներն համայն
սնոնք կ՛որսան մահիճներէն քերթողութեան:

Ասուպ մը կ՛անցնի՝
ինչպէս այրուձի իր մահուան գրուած
եւ գիշերուան անտառի սաղարթներու ծէսին նման
կը քայքայուի ստեղներուն ժամանակի···

··· Եւ աստղերն իմ այսահար
առասպելներ կը դողան···

III

Գիշերն է ի՞նչ խտացում, կառոյցներու մօտեցում:

Աստղ մը կ՛անցնի յանկարծակի,
կ՛ընկողմանի յուսահատ՝ ստուերին մէջ իր կեանքին
եւ լուսեղէն մատներով կը քանդակէ ճակտի գիրը խաւարին:

Գիշերն է լեզուն, խօսքը գալիքին,
որ լռութիւնն իր կը հոսի
եւ կը հոսի···

IV

Արիւն մեղապարտ
եւ սպիտակ փսփսուքներ արեան աճիւններու:

Լռութիւն լռութեանց՝
դարանակալ ական ինչպէս գիշերուան,
գիշերուա՞ն ինչպէս, գիշերուան նմա՛ն···

Կը բարձրանամ իմ արեան մշուշներէն
եւ զորշ անհունին պարիսպին դիմաց մահն իմ կ՛արարեմ՝
իբրեւ հակախօս այբուբեն:

Բայց ես նետն եմ այս թեւաբեկ ժամանակին՝
պարիսպին դէմ գիշերներու անտառին···

— Սպասեցէք իմ գալուստին, սպասեցէք անպայման,
ըսաւ աստղը պանդխտութեան:

digitised by A.R.A.R.@

V

Ոչինչ կը գերպանցէ գիշերը խօսքին:

Ոչինչ կը գերպանցէ խօսքը գիշերին:

VI

Կը խոնարհիմ անտառին
լռութեան թաւշափափուկ կամուրջներ
եւ լուռ դէմքիս մշուշներէն ծիլ-ծիլ շշուկ կը քաղեմ:

Աղջամուղջին,
շշուկներն իմ դժուարօրէն կ՚արթննան
արթնացումին մէջ լոյսի՝ նշաններէ տարերկրային,
ուր սեւաջուր անձրեւներ ամպերն իրենց կ՚օրօրեն,
կը փափկանան, մետաքս-մետաքս կը հալին:

Կ՚ըմպեմ անձրեւները դառնութեան՝
արեւէն ծնած թարմ յիշողութեան հեղեղին նման
եւ իմ երաշտ արմատներուս հրդեհներու հրդեհներուն կը մեկնիմ,
կը մեկնիմ, կ···ը···մ···ե···կ···

VII

Ոչինչ կը գերպանցէ լոյսը լռութեան:

Ոչինչ կը գերպանցէ լռությունը լոյսին:

VIII

Օդը այստեղ չունի սահման
եւ ոչ ալ լոյսը տարիք:

Կէս գիշերուան լուռ անտառէն
կոյր տատրակներ փախուստ կու տան
եւ թեւերով դողդողացող կը գծագրեն
քարտէսն իրենց ճակատագրին
··· տարածութեան մէջ մահուան:

Երկինքը ծովն է մահուան
եւ ոսկի ափը լոյսին, ուր կանթեղներ
մահուան լոյսով թագադիր՝ խոշտանգուած
երակներու ալքոլներէն մեղմիկ-մեղմիկ կը վառին:

··· Եւ շշուկները լոյսի

digitised by A.R.A.R.@

իրենց ծանր ստուերներէն կը մերկանան:

IX

Արեւէն առաջ լեկու կը բացուի հմայքը մութին,
կ՚արթննայ հպարտ իմ երակներուս դժոխքի գինին՝
սրարշաւ նժոյգ, խօսք ժամանակի եւ այլակերպման,
մարմնիս կիսաքանդ դուռներուն առջեւ, բոցերուն համայն:

Ասուպ մը կ՚անցնի՝
ինչպէս այրուելի իր տօնին գրուած
եւ գիշերուան անտառի սաղարթներու ձայնին նման
կը պսպղան պողպատ սուրերն անձկութեան···

···Եւ աստղերն իմ դիւահար
արեան հեղեղ կը պոռթկան սահմաններէն ցնորքի
եւ կ՚ոստոստեն հրդեհ-հրդեհ սահմաններուն քաղաքի:

X

Օդը այստեղ չունի տարիք
եւ ոչ ալ լոյսը սահման:

Արշալոյսի անտառներէն
կոյր տատրակներ փախուստ կու տան
եւ թեւերու շարժումներով հարսանեկան
արդ կը գծեն քարտէսն իրենց ճակատագրին
··· անչրպետին մէջ լոյսի:

Երկինքը բանտն է լոյսին
եւ կայսրութիւնը անոր, ուր կառոյցներ
կեանքի լոյսով թագադիր՝ ալիք-ալիք կը խաղան:

Օրն է օրուան ծիածան:

Հեռագնաց խօսքն եմ լոյսին·
կիսակործան քաղաքի յարալէկեան մարմինին
լռութեան դէմ ճարճատող ես հոգի եմ բակմախոց,
որ մեղապարտ ժամերն այս նենգ, օ՜, կը խօսի, կը խօսի···

XI

Արիւն լուսաբոյր
եւ սպիտակ շարականներ արեան ծննդոցի:

Լռութիւն տաք, անսանձ,

digitised by A.R.A.R.@

դարանակալ ական ինչպէս նոր օրուան,
նոր օրուա՜ն ինչպէս, նոր օրուան նմա՛ն···

Կը շրջանցեմ մշուշները քայքայման
եւ բաց անհունին անհուններուն դէմ կեանքն իմ կը գրեմ՝
իբրեւ բեւեռագիր արձանագրութիւն,
ժամանակին այս մոխրագոյն···

Բայց ես նետն եմ այս հրարձակ ժամանակին՝
քարափին դէմ ովկիաններու ցերեկին···

— Պատրաստուեցէք իմ գալուստին, ձեր ծնունդին,
կ՚երգեն աստղերն արիւնին:

XII

Հեղբը լոյսին
— ինչպէս մանկան մետաքս ճիչ —
կը խորտակէ ներքին մութը մեր օտարող գիրերուն
եւ կը ցնծան նորափթիթ ուղէշները մանկութեան —
ծիլեր՝
որոնք աստղեր ինչպէս կ՚արթնան,
ծիլեր՝
որոնք միրգեր ինչպէս կը շողան,
ծիլեր՝
որոնք ձեւեր ինչպէս կը խաղան
եւ կ՚ողողեն երկինքները անձկութեան:

— Մօտ է գալուստը լոյսին, կարօտներու բիւրեղին,
կը փսփսան ծիծեռնակներն անկումին:

XIII

··· Բայց կը դիտեմ միմիայն բոցն արիւնին
սահմաններուն քաղաքի:

Ականջներուս՝
ի՜նչ կառոյցներ կը խորտակուին,
կ՚ընդելուզուին կառանցանքիս,
քաղաքամէջի եկեղեցիին լեզուակէն փրթած,
տժգունած, լռած կոչնակը ինչպէս,
ճի՛շդ մահերգին պէս:

Երակներէս կ՚անցնին հողմեր մահասարսուռ·
հրաթեւ, մետաղ հրեշտակներու խուճապն է կարծես
մարմինն իմ հրկէզ եւ քաղաքն այս կէս···

digitised by A.R.A.R.@

Օ՜, քաղաք իմ կէս,
լքուած իմ մատեան՝ հրեշտակներու կարմիր գրոհին,
քամիներուն դէմ, վոհմակներուն դէմ, մահաքաղին դէմ
եւ ընդդէմ, ընդդէմ, կէ՛ս մարմնիդ իսկ դէմ···

Ոչինչ կը փոխուի, ոչինչ եւ ոչինչ
ու ցարդ կը տիրէ մոխրագոյն մէկ ճիչ···

XIV

Աղաղակներու բառգիրք մը ինչպէս՝
կ՛այրիս ու կ՛այրիս եւ քարափներուդ մոխիրներէն ետք,
մահը կը փայլի ժամանակը իր:

Աստղեր կը գաղթեն,
շէնքեր կը վապեն,
ծովեր կը լռեն,
թաղեր կը թաղեն
սպասումն իրենց, սպառումն իրենց եւ քաղաքն ամբողջ···

··· Բայց բռնաբարուած կապար երկինքիդ
երկինքներուն դէմ պայթող ահապանգ, շանթ-երդումն եմ ես
եւ որբեւայրի դալուկ աստղերուդ արնախոց սրտին,
ճակտի մութ գիրքդ տրուին եմ ոսկի,
խոստումն եմ խօսքի···

Ողջո՜յն գիշերիդ —
ողջո՛յն գիշերիդ փրկարար ձայնին,
ողջո՜յն գիշերիդ —
ողջո՛յն դժոխքիդ նորաբաց խօսքին,
ողջո՜յն գիշերիդ —
ողջո՛յն գիշերիդ այս կիսկիչ տենդին,
ողջո՜յն գիշերիդ —
ողջո՛յն եւ տենդիդ ընկլուկիչ եռքին
եւ մահախուճապ քու սուրբ շարժումին՝
քի՛ւր, հապա՜ր ողջոյն:

XV

Կը սկսիմ մահէդ՝ դէմքիս կը հասնիմ —
«ճանապա՛րհս է այս», կը կանչեմ գինով,
կը սկսիմ դէմքէդ՝ մահիս կը հասնիմ —
«ճակտի գի՜րս է այս», կը շաչեմ ահով,
կը սկսիմ սերէդ՝ լոյսին կը հասնիմ —
«ան բպե՛տն ես իմ», կը գոռամ հպարտ,
կը սկսիմ լոյսէն՝ սիրոյդ չե՜մ հասնիր —
«պատուհա՞սն ես իմ», հարց կու տամ անպարտ
եւ անկումներու հարցումին վրայ հարցում կը դառնամ՝
ճակտի կոյր գիրքդ պարոյկին նման:

digitised by A.R.A.R.@

XVI

Ո՞վ պիտի ջնջէ գիշերն իմ դէմքին,
որ փայլփլին վերջապէս մութ գիծերը քարտէսիս
միջեւ ձիւնին ու ամպին:

Ո՞վ պիտի ցողուէ գիշերն արիւնին,
որ ձեւ առնեն վերստին կառոյցները քարտէսիս
միջեւ ծովուն ու լոյսին:

Ո՞վ պիտի գրէ լոյսը իմ աստղին,
որ քար դառնան վերջապէս անկումները իմ լեկուիս
միջեւ բառին ու բառին:

Գիշերն արիւնին օրհնեա՜լ եղիցի,
վի գիսաստղն է քերթուածին···

XVII

Կ՚երդնում յանուն փամփուշտին,
որ կը մեկնի առանց հետք մը ձգելու,
կ՚երդնում յանուն արիւնին,
որ կը ծաղկի աքսորի գիշերները թաղելու,
կ՚երդնում յանուն տատրակին,
որ կը սահի առանց «ա՜խ» մը կանչելու,
կ՚երդնում յանուն մանուկին,
որ կը ծնի աքսորի ճամբաներն իսկ ջնջելու,
կ՚երդնում յանուն կակաչին,
որ կը բացուի առանց արցունք թափելու,
կ՚երդնում յանուն գիշերին,
որ միմիայն խոստացեալ արշալոյսը կը խօսի,
կ՚երդնում, կ՚երդնում, դարձեալ կ՚երդնում,
որ ես տեսայ ծիածանը խաւարակոտ գիշերին:

Հրեշտակներն ունկնդրեցին հրաբարբառ պատարագին
եւ յարութեան շեփորները հնչեցուցին:

Ողջո՜յն լոյսին արեգական,
որ կենումի բոցերուն մէջ մահացումն իսկ իր կը մոռնայ,
մեկ կը տանի ձիւնէն ձերմակ գիշերներու
եւ կը չնջէ նախառաջին նշանները մահուան ծովին
եւ վերջակէտն անջրպետին, անջրպետին···

XVIII

Տեսանք աւեր, մահ ու արիւն
եւ եօթնամեայ ողբերգութիւն:

Տեսանք սէրեր, սուտ ու պատիր

digitised by A.R.A.R.@

եւ բիւրամեայ յոյսեր կարմիր:

··· Բայց տակաւին՝
բան չտեսա՛նք, ինչե՞ր տեսանք:

IXX

Ոչինչ կը գերպանցէ խօսքն այս աւերին,
որ ինչպէս հանգած մոխիր՝ կը մերկանայ իր մարմինէն,
կը բարձրանայ
ծիլի մը պէս, շողի մը պէս՝
իբրեւ շիրմաքար նահատակներու
եւ իբրեւ մահիճ զալիք մանուկներու···

Ոչինչ կը գերպանցէ քերթուածն աւերի՛ն, աւերի՞ն:

XX

Աճիւնները կ՚աղաղակեն, կ՚աղաղակեն, կ՚աղաղակեն
պատարագներ այլուրային՝ արեան ճերմակ երկինքներէն:

Աղաղակներէն
վարդերը վիշտի
անձայն կը բացուին,
յաղթական, խոնարհ, երկինքի ափին:

Ճիչ մը կը փոուի արեւու դէմքին:

Աստղեր կը մարին,
շէնքեր կը շարժին,
ծովեր կը խօսին,
թաղեր կը պարեն,
մայթեր կը ծափեն,
ծառեր կը ցատկեն,
ամպեր կը գաղթեն,
կանգեր կը հնչեն···

Քաղաքամէջի եկեղեցիին լուսամուտներէն
կիսաղէմ, դալուկ աղբանկարներ մէկ-մէկ կը թռչին՝
թօթափելէ ետք բրտութեան փոշին,
եւ խաղաղութեան լոյսին կը մեկնին:

Կիսաքանդ շէնքեր կարծես կը ծիծաղին
խունկն սպասումին եւ լուռ կ՚աղօթեն:

Շարժումը կու գայ ներքին թաղերէ,
շարժումը կու գայ լքուած խորշերէ,
շարժումը կու գայ մութ նկուղներէ

digitised by A.R.A.R.@

եւ քարափն ի դէմ տապալած, հանգչած
կմախք նաւերուն անձեւ քաոսէն, մամռոտ ղեկերէն
եւ կարօտահար նաւաստիներու ողջակէզ սրտէն···

Աւապապարկեր ոտքի կը կանգնին,
կը թօթուեն իրենց ձանձրոյթը դեղին
եւ ինքնականաչ փողոցներուն դէմ
կը վենուն վաղուան տառապանքն անդէմ:

··· Եւ շարժումին դէմ այս նորոգ
կը ծնրադրեմ, կը ծնրադրեմ:

XXI

Եղի՛ր թեթեւ ու մաքրաթեւ՝
արշալոյսի շողերն ինչպէս,
եղի՛ր հաստատ ու հրաթեւ՝
հրաշագործ բազուկին պէս
եւ թափանցէ՛ լուռ քաղաքի պատնէշներուն նեղ անցքերէն,
պարիսպներուն զաղտնի դուռնէն, մայր դարպասէն,
կի պարտէպդ եմ անցանկապատ, միշտ առանձին՝
ինչպէս հմայիլ եւ մոխիրներուդ ոսկեփոշին···

Թող ժամանակդ ըլլայ ոսկի՝
խօսքի, հոսքի···

Թող ժամանակդ ըլլայ ոսկի՝
վարդին,
միրգին,
աստղին,
լոյսին,
կակաչներուն եւ տատրակին,
տատրակներուն եւ մանուկին,
մանուկներուն եւ գիշերին,
որ գիշերներդ ալ միմիայն գլուխ դնեն
խաղաղութեան ճերմակ ամպի մետաքս եզրին···

Ցառաջացիր իմ շունչիս հետ,
յառաջացի՛ր հայեացքիս հետ,
յառաջացի՛ր քայլերուս քայլ իմ երգին հետ այս եօթնագոյն,
որ եօթնամեայ տառապանքիդ եօթ գոյներէն արդ փնջուած
ծիածան իբրեւ, յարութիւն իբրեւ, բարութիւն իբրեւ,
օ՜, ես թագադրեմ մարմինդդ պարթեւ···

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Պէյրութ, 1982 — ամառ

digitised by A.R.A.R.@

Ս. ՍԱՆԻՆՅԱՆ

ՑՈՒՐՏԸ

Կիրակի էր։ Քաղաքն ամայի և ցուրտ։

Դիշերը պարզկայ էր եղել եւ այժմ արեւ կար։ Բայց այդ արեւը մի կաթիլ անգամ տաքութիւն չէր տալիս այդ ցուրտ քաղաքին։ Ընդհակառակն։ Թւում էր, թէ ամենային այդ արեւի թոյլ ու դեղին շողերն է՛լ աւելի էին ցրտեցնում օդը։ Թւում էր, թէ այդ դեղին ճառագայթները տիեզերքից իրենց հետ բերում էին իրենց ճանապարհին գտնուող անխիղճ, անմարդկային սառնամանիքը։

Ամբողջ գիշերը նա մրսել էր։ Մրսելը քիչ է։ Ամբողջ գիշերը նա սառել էր։ Սառել էր բառիս բուն իմաստով։ Սառել էր իր ամբողջ մարմնով։ Ցուրտը բիւրաւոր բութ ասեղների պէս ծակծկել էր նրա մարմինը։ Մտել նրա ներքը։ Մտել նրա թոքերը, նրա փորոտիքը։ Ցա՜ւ, ցա՜ւ։ Անդադրում ցաւ։ Նա կորցրել էր գիտակցութիւնը։ Կորցրել էր մարդ լինելու իր նշանակութիւնը։ Դարձել էր ցաւակիր մի շարժուն արարած։ Բայց նա կարծում էր, որ շուտով շարժուել անգամ չի կարող, կը նստի մայթին եւ կը սկսի գոռալ եւ կանչել։ Նրան տաքութիւն էր պէտք, ինչպէս սովալուկին՝ ուտելը, տոչորուածին՝ ջուրը։

Ամբողջ գիշերը նա քայլել էր։ Քայլել էր՝ ցուրտ չզգալու համար։ Նա պործի մարդ էր։ Երէկ, ուշ գիշերին, օգտնուով մի այլ քաղաքից եկել էր այդ քաղաքը։ Օգտնուակայանից մի վարձակառքով եկել էր եւ մի հիւրանոցի դրան առջեւ իջել։ Երբ նա փորձել էր վճարել վարորդին, տեսել էր, որ դրամ չունի։ Նա կորցրել էր դրամապանակը։ Կառքում կատարուած մանրակրկիտ խուզարկութիւնները արդիւնք չէին տուել։ Ստիպուած՝ նա վարորդին էր յանձնել ժեռքի իր ժամացոյցը, որն հարիւր անգամ աւելի արժէր, քան կառքի վարձը։ Նա երիտասարդ էր եւ հպարտ։ Այլ կերպ նա կարող էր մտնել հիւրանոցը եւ վարձին բացատրելով եղելութիւնը սենեակ խնդրել։ Բայց նա չարեց այդ, կասկածելով, որ հիւրանոցի վարիչը կարող էր մերժել նրան եւ նա ամօթով մնար։ Նա մի քանի ժամ կարող էր նստել նաեւ հիւրանոցի նախադասիթում, բայց այդ էլ չարեց՝ երնելով միշտ նոյն հպարտութիւնից։ Եւ այժմ զղջացել էր, որ չէր արել եւ այդքան անհոգի տառապել։

Այն փողոցը, ուր նա դուրս եկաւ, պէտք է որ քաղաքի ծայրամասում գտնուէր։ Այդ փողոցն էլ ամայի էր եւ ա-

digitised by A.R.A.R.@

ւելի ցուրտ, քան քաղաքակենտրոնի փողոցները: Նա վերեւ նայեց: Այնտեղ ցաքուցրիւ մի յտրկանի չէնքեր էին երեւում: Վերեւից մի ինքնաշարժ էր դալիս տարտամ ընթացքով: Ճաքուրեան ոչ մի յոյս:

Ցուսահատութիւն էր:

Նա սկսեց փողոցն ի վար քայլել, տառապելով տաք մի անկիւնի մտասեւեռումից: Եւ նրան թւում էր, որ ինքը հիւսիսային բեւեռում է դտնւում, այլ ոչ ամերիկեան մի մեծ քաղաքում: Նա չգիտէր, որ ամերիկեան այդ մեծ քաղաքը Շաբաթ օրը, երեկոյեան ժամը վեցից յետոյ ամայանում է եւ անապատի վերածւում:

Ո՞վ հրաչք: Դիմացի մայթի վրայ խանութի դրան պէս մի դուռ բացուեց, այնտեղից դուրս եկաւ մէկը, դրսի ցրտից սրսրաց եւ արագ քայլերով մայթով վեր գնաց: Պարզ էր, որ մարդը դուրս եկաւ մի սրճարանից, ուր եւ չտապեց նա: Նա դեռ չէր հաւատում իր ենթադրութեանը, երբ ներս մտաւ: Իրապէս սրճարան էր: Երրորդ-չորրորդ կարգի մի սրճարան: Ճաքուցրիւ սեղաններ կային ու աթոռներ եւ չատ քիչ յաճախորդներ: Սակայն տաք էր, որ նա շղդաց: Նա կարծում էր, որ եթէ մի տաք տեղ ընկնի, տաքութիւնն անմիջապէս իրեն կը պարուրի, կը չոյի իր դէմքը, կը տաքացնի իր սառած մարմինը: Բայց այդպէս չեղաւ: Նա դեռ իրեն փայտացած էր զգում, երբ նատեց մի սեղանի առջեւ, դլուխը կախեց եւ սկսեց լաց լինել: Ներեցէք սկսեց լաց լինել: Նրան պէտք էր մի որեւէ տաք հեղուկ՝ ուրց, թէյ՝ իր ներսը տաքացնելու համար: Նա պատրաստ էր մուրացկանութիւն անել մի գաւաթ տաք ուրց դնելու համար, երբ նորից սկսեց քրքրել իր դրպանները: Նա կարծում էր, որ բաւական է մի դաւաթ տաք ուրց խմել, որպէսզի ինքը վերակենդանայ: Իր տաքատի մի անկիւնում նա դտաւ եօթանասունմից սենթ եւ դնաց դէպի վաճառասեղանը, որը համարեա՝ ձգւում էր այդ փոքրիկ սրճարանի մի ծայրից միւս ծայրը: Այնտեղ, սեղանի առջեւում, աշխատանքային ոպիտակ հագուստով մի երիտասարդ կին էր կանգնել եւ ժանձրանում էր:

— Մի դաւաթ ուրց,— ցրտից եւ յուզմունքից խզուած ձայնով ասաց նա՝ առանց կնոջ դէմքը տեսնելու: Ցրտից ամէն ինչ նա մշուշի մէջ էր տեսնում:

Կինն արթնացաւ իր մտածումներից, նրան նայեց իր սեւ և խաղաղանուագիւն արտայայտող աչքերով եւ նրա լաւ բերանի երկու անկիւնները ցնցուցին: Նրան կարելի էր ղեղեցիկ համարել, եւ ղդացում էր նրա կանացիութիւնը:

— Oh, boy, ես տեսնում եմ, որ դուք լաւ ասաել էք:

Նա լսեց: Նրա ամբողջ միտքը ուրցի վրայ էր, որ չվերցրեց, այլ խլեց կնոջ ձեռքից: Զդուշութեամբ մօտեցաւ մի սեղանի եւ նստեց: Նա կարծում էր, որ երբ արդ դաւաթ ուրցը խմի, կը սկսի տաքանալ: Բայց այդպէս չեղաւ: Մնացած սենթերով նա բերեց երկրորդ դաւաթ ուրցը, բայց նորից չտաքացաւ: Ուշ էր արդէն, եւ նա մտածում էր, թէ ինչ պիտի անի գալիք գիշերը, որ նրան ահաւոր էր թւում, երբ նրա սեղանին մօտեցաւ սպասուհին, նա՝ որ առաջին անգամ նրան ուրց տուեց:

— Ցաւում եմ,— ասաց սպասուհին տաք ձայնով,— մի քանի րոպէից սրճարանը փակում ենք եւ դուք պիտի գնաք:

Նրան նորից այնպէս էր թւում, թէ այդ կնոջը մշուշի մէջ էր տեսնում: «Մի՞թէ ցուրտը վնասել է տեսողութեանը, մտածեց նա եւ ասաց սպասուհուն.

— Փակո՞ւմ էք: Բայց չէ՞ որ դեռ շուտ է:

— Ժամը վեցն է: Կիրակի օրերին մենք շուտ ենք փակում:

— Հիմա, ես ո՞ւր գնամ,— ասաց նա ինքնիրեն, բայց կինը լսեց:

— Գիշերելու տեղ չունէ՞ք,— հարցրեց:

— Ոչ:

Կինը նրա հագուստ-կապուտին նայեց դարմացած.

— Բայց...

Նա ընդհատեց նրան եւ մի քանի բառով պատմեց իր գլխի եկածը:

Կնոջ նեղ, սեւ եւ մաղձոտ աչքերը փայլ ստացան: Այդ երիտասարդը նրան

digitised by A.R.A.R.@

դուր էր գալիս։ Նրա և՛ արտաքինը, և՛ ձայնը։ Մի վայրկեան եւս կինը նրան նայեց ուշադրութեամբ եւ զգուշութեամբ։ Յետոյ՝ նա ձայնը իջեցրեց.

— Դուք կարող էք մնալ ինձ մօտ այս գիշեր։ Ես այստեղից հեռու չեմ ապրում։

— Օ՛,— բացագանչեց նա՝ ուրախ զարմանքով։

— Կամաց,— զգուշացրեց կինը,— սպասեցէք ինձ արճաքանի դիմացի մայթի վրայ։ Ես մի քանի րոպէից դուրս կը գամ։ Ես չեմ ուզում, որ ուրիշները մեզ միասին տեսնեն...։ Հիմա ելէք եւ գնացէք։

Նա դժուարութեամբ ելաւ տեղից։ Երբ այդպէս արեց, նրան թուաց, թէ իր ներսի տառապանքները կոտրուեցին, որովհետեւ խշշոց լսեց իր մարմնամասերում։

1.

Կինն ապրում էր այն մի յարկանի սպիտակ ծեփուած տներից մէկում, երբ նա տեսել էր մինչեւ արճաքան գնելը։ Բնակարանը, որի հետ կինը ծանօթացրեց նրան, փոքր էր։ Այն բաղկացած էր մի նստելու սենեակից, մի ննջարանից, փոքրիկ մի խոհանոցից եւ լուացարանից։ Բնակարանում տաք էր, բայց ոչ այնքան տաք, որ հալչէին նրա ներսի սառոյցները։

— Նստեցէք այն բազմոցի վրայ,— ապրելու սենեակում նրան ցոյց տուեց կինը։

Նա նստեց բազմոցի ծայրին։ Կնկլուեց։ Գրկեց ինքն իրեն։

— Դուք դեռ շարունակում էք մրսել։ Հանեցէք ձեր վերարկուն, որպէսզի դիւրութեամբ տաքանաք։ Ես հիմա սուրճ կը պատրաստեմ,— ասաց կինը։ Թուաց, թէ նրա ձայնում ծիծաղ կար, որ նա ժրտում է։

— Դուք ծիծաղո՞ւմ էք, որ ես մրսում եմ,— հարցրեց նա։

Կինը սուրճի մասին խօսեց, երբ ասաց.

— Ինչ յետոյ պատրաստ կը լինի։

Կինը նրան էր նայում զուարթ աչքերով, որ հազուադէպ էր պատահում նրա հետ։ Նա այնպիսի զուրգուրանք էր ցուցաբերում նրա նկատմամբ, որ թւում էր, թէ նրանք շատ մօտիկ բարեկամներ լինէին։ Սուրճ խմելու ժամանակ կինը աշխատում էր տաք մթնոլորտ ստեղծել։

— Ամուսնացա՞ծ էք,— հարցրեց նա։

Նա՝ որ ագահութեամբ տաք սուրճն էր խմում, աշխատելով մի քիչ, գոնէ՛ մի քիչ տաքնալ՝ գլուխը շարժեց բացասաբար։

— Լաւ արտաքին ունեցող երիտասարդները չեն ամուսնանում,— ասաց կինը խաղալիր,— կողմնակիօրէն յաջողութիւն ունենալով կանանց մօտ՝ նրանք չեն ցանկանում իրենց ոտքը կապել ամուսնութեամբ։ Ամուսնացած կանայք սովորաբար նախանձոտներ են...

Նա լսում էր այդ կնոջը եւ չէր լսում։ Ճշմարտապէս նա ցանկանում էր մենակ լինել։ Լինել քաղաքի իր բնակարանում, իր անկողնում։ Փաթաթուել տաք վերմակով։ Անվերջօրէն տաք թէյ խմէր ալքոհոլով։ Պաղից առաջացած մարմնական ցաւերը չէին հեռանում նրանից։ Նա ուզում էր, որ այդ ցաւերը չքանային, որպէսզի նա բնականոն գտնուր։ Կարողանար մտածել։

— Ուսել ուզո՞ւմ էք,— հարցրեց կինը։

Չկարողանալով բերանը բացել, նա նորից գլուխը շարժեց բացասաբար։

Կինը նորից նրան նայեց զուարթությամբ։ Յետոյ՝ նա սկսեց խօսել իր մասին։ Այդպէս են կանայք։ Ցանկանալով իրենց խօսակցի սիրտը գրաւել, նրանք խօսում են իրենց անցեալի, անցեալում կրած իրենց սիրային դժբախտութիւնների, զրկանքների, նոյնիսկ սիրային յաջողութիւնների մասին։ Նրանք ցանկանում են իրենց խօսակցի մէջ խանդ առաջացնել, կիրք, նախանձ եւ վրէժխնդրութիւն։ Ի վերջոյ, ամէն մի վրէժխնդրութեան հիմքում սէր է ընկած։ Կինը պատմում էր, թէ ինչպէս, երբ ասնըվեց տարեկան է եղել, իր ծնողներից փախել է Հոլիվուդ, ցանկանալով դերասանների առաջ դառնալ։ Նրան այնպէս են

digitised by A.R.A.R.@

ներշնչած եղել, նրա ընկերուհիները, ծանօթները, նոյնիսկ նրա ուսուցչուհիները, որովհետեւ նա շատ գրաւիչ արտաքին է ունեցել։ Հոլիվուդում նա պատահաբար ծանօթացել է շարժապատկերի մի երիտասարդ «աստղի» հետ, որի վրայ նա սիրահարուած է եղել՝ նրա նկարները դիտելով։ Այդ «աստղը» նրան իր տունն է տարել եւ սկսել է կենակցել նրա հետ։ Բայց մի քանի օրից յետոյ պարզուել է, որ այդ «աստղը» ագէտ է, վայրագ, գինեմոլ եւ խաղամոլ։ Նա սկսել է ծեծել նրան եւ նրան ստիպել պառկելու ուրիշների հետ՝ դրամ վաստակելու նպատակով։ Այն ժամանակ նա հասկացել է, որ կեանքն այն չէ, ինչ որ մարդիկ երազում են։ Նա փախել է այդ «աստղից» եւ ընկել ուրիշների ձեռքը։ Բոլոր դէպքերում էլ նա հասկացել է, որ սէր գոյութիւն չունի, որ տղամարդիկ իրմով հետաքրքրուած են, որովհետեւ ինքը գեղեցիկ է համաբուում...

— Բայց մենք, կանայք, այդպէս ենք։ Մենք միշտ յոյս ենք տածում...

Նրան ամենեւին չէին հետաքրքրում կնոջ այդ պատմութիւնները։ Նա ուզում էր պառկել։ Ուզում էր տաքանալ, իր մաքերի հետ լինել։ Կիներ այդ չէր հասկանում, նա նրա դէմքի վրայ արտացոլուած ցրուածութիւնը բացատրում էր նրա դրամական կորուստով, թանկանոց ժամացոյցի գրաւի դնելուն եւ այլ պատճառներով։ Եւ երբ այդ մասին կինը խօսեց նրան, նա նորից չկարողացաւ բերանը բացել՝ ժխտելու համար կնոջ ենթադրութիւնները, այլ միայն գլուխն օրօրեց բացատրաբար։

Ուշ էր արդէն, երբ կինը ելաւ տեղից եւ յայտարարեց խորհրդաւոր.

— Գնանք քնելու...

Նա չատ ուրախացաւ։ Նա թէեւ դժուարութեամբ, բայց արտորանքով ելաւ տեղից, գնաց ընկաւ բազմոցի վրայ եւ սչխատեց իրեն ծածկել իր վերարկուով։ Սակայն կինը նրա համար վերմակ բերեց եւ բարձ։ Յետոյ՝ նա հանդցրեց էլեկտրական լոյսը եւ անյայտացաւ։

Լոյս էր արդէն, երբ կինը նրան արթնացրեց։

2.

— Ես պէտք է աշխատանքի գնամ,— ասաց նա, այս անգամ չոր ու պաղ,— ի՞նչ էք մտադիր անելու։ Ի վերջոյ, այսօր Երկուշաբթի է եւ քաղաքը իր բնականոն կեանքի մէջ է մտել...

Կնոջ ձայնում թաքնուած չեշտ կար, որ նա հեռանայ իր բնակարանից։ Նա թէեւ այլեւս չէր մրսում, բայց նրա ամբողջ մարմինը ցաւում էր։ Ցաւում էր դլուխը։ Բիթը վազում էր։ Աչքերն արցունքոտում։ Նա դիտէր, որ իրեն պէտք է պառկել եւ նա մի քանի օր հիւանդ է լինելու։ Թերեւս եւ նա բժշկի օգնութեան դիմի։

— Դուք շատ բարի դտնուեցաք իմ նկատմամբ եւ ես երբեք չպիտի մոռանամ ձեր այդ մարդասիրական վերաբերմունքը,— ուզեց հատ խօսել նա։

Բայց կինն ընդհատեց նրա այդ զգացական գեղումները։ Մի դիշերուայ մէջ նա փոխուել էր ամբողջովին։ Թւում էր, թէ նա այլեւս երկկուայ երիտասարդ կինը չէր։ Սիրող, գուրգուրող, տաք եւ հաղորդական։

— Լաւ կ'անէք, որ վերադառնաք ձեր քաղաքը։

— Այո, բայց ես ոչ մի սենթ չունեմ...

Կինը հառաչեց.

— Ի՞նչ կարող եմ ես անել։

— Ես այս քաղաքն եկել եմ օդանաւով, բայց կը վերադառնամ հանրակառքով, եթէ դուք...

— Ինչքան է ձեզ պէտք,— նորից ներքան ընդհատեց կինը անհամբեր։

Գարդ էր, որ նա այլեւս տանել չէր կարողանում այդ լաւ դէմքով երիտասարդին։

Նա մտածեց.

— Կարծում եմ տանը հինգ դոլարը բաւական է։

Կինը բացեց ձեռքի պայուսակը, այնտեղից գուրս հանեց նրա խնդրած գումարը եւ դրեց սուրճի ցածրիկ սեղանի վրայ։ Նա իրենից հրեց վերմակը եւ իր վերարկուն եւ ելաւ տեղից։

— Սպասեցէք։ Ես չեմ ուզում, որ

digitised by A.R.A.R.@

մենք միասին դուրս գանք։ Ես դուրս կը գամ, յետոյ՝ դուք։ Այնտեղ խոհանոցում սաք սուրճ կայ, կարող էք խմել եթէ ցանկանում էք, բայց յետոյ կրակը մարէք։ Դուրս գալու ժամանակ դրսի դուռը ամուր քաշեցէք։ Դուռը փակւում է ինքն իրեն։ — Նա խօսում էր շտապ եւ առանց զգայուն։

3·

Մօտ տասն օրից նա իր մէկ գործընկերոջ հետ վերադառնում էր այն քաղաքն, ուր նա այնքան շատ մրցել էր շաբաշար։ Երբ նրանք օգնաւում նստել էին իրենց աթոռներին եւ բացել իրենց թերթերը՝ նա դարձաւ իր ընկերոջը եւ ասաց.

— Ես, ըստ իմ սովորութեան, կարող եմ մոռանալ։ Բայց խնդրում եմ, երբ տեղ հասնենք ինձ յիշեցնես, որ ես պարտք ունեմ վճարելու։

Նրա ընկերն գիտէր նրա գլխի եկածն այդ քաղաքում, բայց չդիտէր, որ նա պարտք ունի վճարելու։

— Ի՞նչ պարտք,— հարցրեց նրա ընկերը՝ շրջելով թերթի էջերը։

Նա պատմեց իր եւ սպասուհու մասին։ Քաղաքում, երբ նրանք վերջացրել էին իրենց գործերը, նա ընկերոջն ասաց.

— Դու կարող ես մնալ հիւրանոցում։ Ես գնում եմ պարտքս վճարելու։

— Գնանք միասին,— ասաց ընկերը յօրանջելով,— ես ուզում եմ տեսնել այդ սպասուհուն։

Նրանք վարձակառք վերցրին եւ գնացին։

Սրճարանը նոյնն էր։ Նոյն այստեղ-այնտեղ գրուած առանց ծածկոցի սեղանները, որոնց վրայ լճացել էին թափուած սուրճ, թէյ եւ այլ հեղուկներ։ Նոյն տարիքոտ եւ մոայլ մարդիկ, որոնք իրենց զէմքերն իջեցրել էին իրենց սրճի գաւաթների վրայ եւ մտածում։ Մթնոլորտն անհրապոյր էր։

Նրանք գնացին դէպի վաճառասեղանը, բայց սպասուհին այնտեղ չէր։ Նրանք սպասում էին, երբ նա դուրս եկաւ եւ գնաց մի քիչ հեռու կանգնած յաճախորդների կողմը։

— Նա է,— ասաց նա իր ընկերոջը, ցոյց տալով սպասուհին։

Նրա ընկերը նայեց եւ ձեռքերի սփռոցը միմեանց խփեց ապշած.

— Օ՛, քոյ, նա մի գեղեցկուհի է...

— Գեղեցկուհի՞,— զարմացած հարցրեց նա եւ տրորեց աչքերն աւելի լաւ տեսնելու համար։

Այնտեղ, քիչ հեռու, կանգնած էր սպիտակ արտահագուստով երիտասարդ ու թուխ դէմքով մի կին։ Նա բարձրահասակ էր եւ նրա շարժուձեւերի մէջ կոկուածութիւն կար, մշակուածութիւն եւ մարդասիրութիւն։ Երեւում էր, որ նա բաւականութիւն էր զգում՝ սպասարկելով ուրիշներին, որ նրա համար մարդիկ մարդ էր։ Երբեմ-երբեմը նա տխրօրէն ժպտում էր իր յաճախորդներին։ Եւ այդ ժպիտը այնքան ցանկալի էր, այնքան քաղցր, որ ցանկանում էիր տեղն ու տեղը դրկել նրան եւ համբուրել, նրա այդ ժպիտի համար։

— Այդպիսի կանայք հազուագիւտ են լինում,— ասաց նրա ընկերը մտաքաղ,— դու պէտք է երջանիկ զգաս քեզ, որ նա քեզ է ընտրել, նոյնիսկ իր մօտ տարել...

Նա ապուշ էր կտրել։ Բայց, այդուհանդերձ, նա ձեռքի ափերով յարդարեց իր մազերը եւ կարգի բերեց հագուստը, սպասելով կնոջը։

Սպասուհին աւարտելով իր պարտականութիւնը՝ միւս յաճախորդների հետ մօտեցաւ նրանց.

— Ներեցէք, որ ձեզ սպասցնել եղաւ։ Մեր սպասուհիներից մէկը հիւանդ է այսօր եւ ես մենակ եմ մնացել։ Ի՞նչ կարող եմ անել ձեզ համար, պարոնայք։

Նրա ընկերը զարմացած նրան նայեց։ Կինը ցոյց տուեց, որ նրան չի ճանաչում, որին նոյնիսկ իր բնակարանն էր տարել։

Նա չփոթուեց։ Թեթեւօրէն հազաց, ներողամտաբար ժպտաց եւ, թերուելով վաճառասեղանի վրայ՝ ասաց.

— Բարեւ ձեզ։

— Բարեւ ձեզ,— պատասխանեց կինը, իր նեղ ու սեւ աչքերը նրան սեւեռ-

digitised by A.R.A.R.@

ուելով մտապաղօրէն։

— Զէ՞ք կարողանում ինձ ճանաչել, — չարունակելով ժպտալ, հարցրեց նա։

— Ի՞նչ էք ուզում,— իր հերթին հարցրեց կինը՝ նորից չոր ու անտարբեր։

Նա աւելի չփոթուեց, նայեց ընկերոջն ամօթահար եւ կնոջը պարզեց ձեռքում բռնած դրամը.

— Ես յետ եմ բերել ձեր տասնըհինգ դոլարը...։ Շնորհակալութիւն...

— Դրէք սեղանի վրայ,— ասաց կինը եւ դարձաւ նրա ընկերոջը,— ի՞նչ կարող եմ անել ձեր համար։

— Երկու գաւաթ սուրճ,— ասաց նրա ընկերը՝ մի բան ասած լինելու համար։

Երբ նրա ընկերը սուրճի գաւաթները վերցրած հեռացաւ եւ նրանք մենակ մնացին, նա թեքուեց վաճառասեղանի վրայով եւ քաղցրօրէն հարցրեց.

— Ինչո՞ւ այսպիսի վերաբերմունք։ Դուք ուրիշ էիք, երբ ինձ ապաստան տուեցիք։

Կինը նորից նրան նայեց անտարբեր եւ դիմեց մի նոր յաճախորդի.

— Ի՞նչ կարող եմ անել ձեզ համար, պարոն։

Նա հեռացաւ վաճառասեղանից եւ գնաց ընկերոջ մօտ։

— Հը՞,— հարցրեց ընկերը, երբ նա նստեց։

— Չեմ հասկանում։ Այդ կինն ամբողջովին փոխուել է։

— Այդ շատ երիտասարդ եւ շատ գեղեցիկ կինը շատ-շատ վիրաւորուել է քեզնից,— ասաց ընկերը։

— Վիրաւորուե՞լ։ Ինչո՞ւ։ Ի՞նչ եմ արել ես նրան։

— Դու նրան մերժել ես, իսկ մերժուած կանայք ահաւոր են լինում։ Նոյնիսկ մահացու...

— Մերժե՞լ։ Ես նրան չեմ մերժել, — արդարացաւ նա եւ նայեց կնոջ կողմը։

— Ցեռ մի նայիր, այլեւս ուշ է։ Ուղղել անկարելի է։ Ըստ երեւոյթին նա այն կանանցից է, որ չեն զիջում։ Այդպիսի կանայք անդառնալի են լինում։ Օ՛, բո՛յ, ես կ'ուզենայի, որ նա իմ կինը լինէր։ Գեղեցիկ։ Խելացի։ Խառնուածքի ուէր...

— Բայց, այդուհանդերձ, ես նրան չեմ մերժել։

Նրա ընկերն իրենից յետ հրեց սրճի գաւաթը եւ նրան նայեց լեչտակի։ Զրնոզական.

— Լսիր։ Թէեւ մենք տարեկիցներ ենք, բայց ես տեսնում եմ, որ ես քեզնից աւելի շատ գիտեմ կանանց հոգեբանութիւնը։ Փատօրէն, ես տեսնում եմ, որ դու ոչինչ չգիտես...

— Կանանց հոգեբանութիւն,— ծոր տուեց նա մտացրիւ։

— Այո։ Հոգեբանութիւն ունեցող կինը մի հրաշալի էակ է եւ այդ գեղեցկուհին դրանցից է։ Ինդրում եմ չխառնել հպարտութեան կամ կեղծ հպարտութեան հետ։ Հոգեկան աշխարհն ուրիշ է, հպարտութիւնը՝ ուրիշ։ Այս գեղեցկուհին այն դիւրը, երբ քեզ իր բնակարանն է տարել, չի տարել, որպէսզի դու խմես նրա սուրճը, պառկես նրա բազմոցի վրայ եւ նրա սուղ միջոցներից տասնըհինգ դոլար վերցնելով հեռանաս։ Ո՛չ, պարոն։ Այդ բոլորը նա արել է, որովհետեւ սիրել է քեզ։ Որովհետեւ նա ակնկալութիւններ է ունեցել...

— Ես կարծում էի, որ այդ բոլորը նա արեց քրոջաբար, որովհետեւ ես անապատելիօրէն մրսել էի եւ դեռ չարունակում էի մրսել...

— Քրոջականութիւնն էլ կայ։ Սակայն մի կին մի տղամարդի սիրում է նախ քրոջաբար...։ Բայց ոչ մի կին մի տղամարդի իր բնակարանը չի տանում, որովհետեւ նա մրսել է կամ մրսում է։ Կանայք չեն հաւատում, որ մի տղամարդ կարող է մրսել կամ մրսելուց հիւանդանալ։ Կանայք մրսող տղամարդկանց չեն սիրում...

— Այդ կինն այժմ ինձ ատում է, որովհետեւ այդ դիշեր ես մրսած եմ եղել կամ էլ չարունակել եմ մրսե՞լ, թէ՞...

— Ատացի։ Նա քո մրսելը չի ընդունել։ Բայց նա հաւատացած է, որ դու նրան մերժել ես։ Քո պատմելով՝ դու նրան մի հատիկ սիրային բառ չես ասել։ Ինչուշտ չպէտք է կարծել, որ նա ցանկանում էր, որ դու նրա հետ անկողին մտնէիր...։ Այդ ուրիշ խնդիր է։ Ուշա-

digitised by A.R.A.R.@

դրութիւնն ուրիշ է, անկողին մտնելն՝ ուրիշ... Անկողին մտնելն անպայման սէր չի նշանակում եւ ես չեմ կարծում, որ այդ գեղեցկուհին այդ էր ակնկալում քեզնից...

— Այդ բոլորը դու որտեղի՞ց գիտես։

Նրա ընկերը բռնեց նրա ուսը եւ ցընցեց.

— Փոքրիկ, բարեկամ։ Փորձիր եւ կանանց հոգեկան աշխարհն ուսումնասիրելուց։ Հրաշալի մի աշխարհ է այդ...

— Ի՞նչ անել հիմա։ Հիմա, երբ իմ աչքերը բացուել են, եւ ես նոր եմ միայն տեսնում Նրան...

— Հասկանում եմ քեզ։ Այլեւս ուշ է։ Դու բաց ես թողել առիթը։ Նա հրաշալի մի կին կը լինէր քեզ համար...։ Բայց հարցն ամուսնութիւնը չէ, այլ՝ բարեկամութիւնը։ Միւս անգամ եթէ հորից այդպիսի մի մդեւանոյշին գիշեր ապրես եւ մի գեղեցիկ կին քեզ իր բնակարանը տանելու լինի՝ ամբողջովին քո պաղով մի զբաղուի, մի քիչ էլ ուշադիր եղիր այդ կնոջ նկատմամբ,— ծիծաղեց նրա ընկերը։

— Հա,— դառն ծիծաղեց նա,— գընանք։

Սրճարանի դրան մօտ նա չրջուեց եւ նայեց կնոջ կողմը, յուսալով, որ թերեւս կինը ծածկօրէն դիտում է նրան։ Սակայն աղջիկը կլոնուած էր իր աշխատանքով և թուում էր, թէ ամբողջովին մոռացել էր նրան։ Նա հառաչեց։

Նրա ընկերը նկատեց այդ, ժպտաց եւ ասաց.

— Ի զուր են քո ակնկալութիւնները։ Կանայք մեծ վրիժառուներ են։ Եթէ նրանք ցանկանում են մի տղամարդի պատժել, էլ պատժում են...

— Հոդս չէ,— պատասխանեց նա,— նա իր պաղութեամբ ինձ չվնասեց։ Ես չէի եկել նշանախօսութեան եւ նա ինձ մերժեց։ Պարտք ունէի տալիք, տուեցի։

Սակայն իր հոգու խորքում նա ուրիշ էր զգում։ Նա այժմ գիտէր, որ մի կնոջից բուրող ցուրտը աւելի ծանր է, քան բնութեան ցուրտը, որ կարելի է չէզոքացնել արհեստական ջերմութեամբ։

Շատ ցանք պէտք է թափել՝ մի կնոջ պաղած սիրտը ջերմացնելու համար...։ Եթէ միայն կարողանալ...

Կանայք՝ կանայք են...

ՍՈՒՐԷՆ ՍԱՆԻՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԳԻՏՏ ՈՒ ԽԱԲԿԱՆՔ

Եւ այդ ինչպէ՞ս եղաւ, որ յայտնուեցիր: Ես քեզ չեմ յիշում երազներիցս, չեմ գտնում հեռից այնպէս, անփոյթ, ներտուած ժպիտների մէջ: Նախազգացումը քեզ չէր պատել իր խեցու մէջ՝ սեւ մարգարիտները իրենց գաղտնիքի միջից են ծնւում: Ես շտապում էի խառնուելու բոլորին, ես շտապում էի ետ փախչել բոլորից եւ ուրիշ ոչինչ: Իմ մանկութեան մէջ դու չես եղել եւ չեմ ճանաչում հոգիդ, բայց տես, թէ ինչպէ՞ս յայտնուեցիր:

Քո հարցերից չէ, որ վախենում եմ, այլ կծկւում եմ երկչոտ — իսկ եթէ պատասխաններս օրաթերթային բառերին շարուած զրկուեն իրենց թաքուն ծիածաններից: Քեզ ինչպէ՞ս պատմեմ, որ դրանք միայն եօթ գոյն կամար չեն, այլ, պարզապէս՝ ծիածան: Եւ ամաչում եմ ասել, որ երբեք չեմ կարողացել հաշուել եօթ գոյներ. այլ մի քիչ պակաս: Չեմ էլ հաւատում ֆիզիկոսներին ու այն մայրդանց, որ իբրեւ թէ տեսել են բոլոր եօթ գոյները: Ցեղոյ վախենում եմ, որ պատասխաններս քեզ անսովոր կը թուան ու դու կը կարծես, թէ մենք եկել ենք տարբեր ոգիների զոհասեղանների առջեւ ծընրադրելու եւ մեր աստղերն էլ ցոլք չեն պարզում իրար:

Բայց այդ ինչպէ՞ս յայտնուեցիր, տաղտուկից ծանրացած չրագրերը, որոնց ետեւում թաքնուել էի, մի կողմ դրիր, որ անպատուեմ բոլորից: Ուզեցի խռնեմ ու զմռսուած խօսքեր ասել, բայց չյիշեցի՝ մատներդ բանալի դարձան շրթունքներիս, որ լռեմ միա՛յն, քո մասին:

Այդ ինչպէ՞ս էիր խոյս տուել իմ երփներանգ, իմ խե՜նթ երազներից:

Հիմա ջնջուել է երազների եւ իրականութեան անհասկանալի սահմանը, բայց ասում են՝ կա՛յ: Ո՞ւր է, եթէ կայ, երբ անյարիր կատակներ ես անում, երբ ոտքերս մայթից պոկած ինձ տանո՛ւմ-տանում են, որ լաւ հասկանամ միօրեայ թիթեռի յաւերժական հանուանքը: Աշխատասեղանիս առջեւից թաքուն փախցնում ես կատարելագործուած աթոռս, որի անիւներում լրջութիւնն իսկ արտացոլուելիս ծամածռութիւններ է սկսում անել, իսկ ինձ խցկում ես թռով չգիտեմ, թէ որերորդ ամսի փետրամսեան փափկութեան մէջ ու այդպէս թողնում, որ ճօճուեմ անդադար, գործերին անվիճելի պատասխաններ հասցնելիս: Երբ յայտնուեցիր, գիտէի՞ր այս չարաճճի, պարզ, աշխարհից թաքուն կեանքին իշխողը լինելուդ մասին:

Հիմա այնպէ՞ս եմ խոնում բոլոր նրանց, ովքեր «քարի լոյս» չեն ուզում ասել անծանօթներին: Անծանօթներից մէկը չէի՞ր դու···: Ուզում եմ կրկնել յատկապէ՞ս «քարի» եւ անպայման՝ «լոյս»: Եւ դեռ ինչպէ՞ս կ'ուզենայի, որ բոլոր մարդկանց կամ շատերին, դէ, գոնէ նրանց, որոնք շատ են կիսած լրագրերի լուրերի ծանրութեան տակ կամ գէթ նրանց, որ քարի ու մխիթարիչ են, պատահէր այն, ինչ ինձ պատահեց: Որ մի առաւօտ, սովո-

digitised by A.R.A.R.@

ական ժամին, սովորական ճամբով, որ չգիտես էլ, ո՞վ է հնարել, սովորական շենքերից, մեջբերից, դեմքերից կտրէին իրենց աչքերն ու ո՛չ թէ նայէին, այլ տեսնէին, որ կայ հսկայ երկինք՝ հայեացքի սպասող: Մի տեսնէիք իմ խեղճ, իմ մեխրագոյն մարդիկ, որ հենց նոր տերեւները անփոյթ սրսրուցնող ծառը հենց ձեզ համար է այդտեղ յայտնուել, ծնուելուցդ շատ առաջ: Հաւատայիք, որ մէն մէկդ այն ոտնաձայնն ունէք, որին սպասել է մայրը, որ արձագանգի իր իսկական ձայնը առաջին անգամ փորձելու որոխութեամբ: Եւ այս ամբողջ աշխարհը յոգնել է այդտեղ սպասելուց ու յոյսը չի կտրել, որ կը գաք ու մի սովորական օր կը հասկանաք, որ դուք էլ տերեւ էք, մայր, ծաղիկ, գնացք, փոշի, ճառագայթ, դրանց նման սովորական ու դրանց չափ անկրկնելի: Դուք՝ նրանց համար, ես՝ բոլորիդ ու միասին կեա՞նք:

Իսկ ես յայտնուելը իմ բաժին արցունքներին ծիածան տուեց, ինչպէս բոյր, արմատ, փափկութիւն կը տան իմ բաժին հողին: Դեռատարեքի պէս ոգորկ ու մաշած օրերիս անուն տուիր, ես՝ անունը կամ ես անուան ամենաքանկ հոմանիշը՝ «կեանք», որից շնչակտուր եմ: Միայն նրանով եմ շնչում, նրա անուշ հզօրութեամբ թռչում, նրա թափանցիկ գոյութիւնը անվերջ ոգեւորւում, աղօթում նրան, աղօթում նրա՛ համար, աղօթում բոլոր տրտմօրէն երջանիկ սուրբերին, որ յանկարծ չփախչի, ինձ թողնելով օրաթերթերի ծանր լուրերի, ստի, տապանների տակ: Ո՞ւր փախչի, երբ պարփակուած է իմ մէջ. համբերութեան յատակը սուզուելով ես տեսայ ռեւ մարգարիտը՝ ինձանից զօրե՞ղ, ինձանից մե՞ծ, իմ մէջ բանտուած, ինձ բանտած ու ազատութեան խորհուրդն ի՛նձ ընծայած: Ի՛մն է ու ես նրա երջանկօրէն հլու խազալիքը:

Այնպէս կ'ուզենայի իմանալ, թէ որտեղից յայտնուեցիր, բայց գիտե՞ս, ինչ ոչինչ չեմ հարցնելու, որովհետեւ մարդիկ վախկոտ են ու դադարել են հրաշքների հաւատալուց եւ երբեմն նոյնիսկ Աստծոյն հարցեր են ուղղում: Չեմ ուզում ինձ հարցնես երէկուայ մասին, որ խուճացած պարանի նման ծալ-ծալ, օղակ-օղակ սպասում էր, որ ինձ կլանի եւ կամ ես ինքս պորտալարի պէս կտրեմ այն ու վերջ տամ մեր անյարիր, համբերութեանն խնկ պղծող միասնութեանը: Եւ ինչո՞ւ պատմեմ, որ գետնուղու պատուհանը արտացոլում էր յոգնած աչքերիս նոյն հարցումը՝ անորոշ, խեղդուած, առանց ես յայտնուելու սպասման կայծոռիկների-խամբած: Բայց կ'ասեմ, որ պարանը լաւ է նաւակներ քաշելու համար: Պարանը կտրելի է բաժանել երեխաներին, որ ցատկեն, ցատկեն ու քրքջալու առտինան խտղտացնեն մայրերին:

Եւ այդ ինչպէ՞ս եղաւ, որ ինձ հասկացրիր, թէ իսկականը ո՛չ թէ երկընքում, այլ թարթիչներիս կախուած ծիածանն է, բանի գոյն էլ ունենայ:

Գտնելու եմ քեզ:

ԱՐԵՒԻԿ ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

1982 Յունիս

digitised by A.R.A.R.@

ԻՎ ՄԻՐԱՆ ԵՒ ՀԱՆՐԻ ԿԵՐՈՒԼ

ՕԳՏԱՒ

(ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԷԿ ԱՐԱՐ)

Հայացուց՝ ՏԻՐԱՆ ԱՃԷՄԵԱՆ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁՆԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՕԳՏԱՒ	33 տարեկան
ՀԱՆՐԻ	33 տարեկան
ԺԱՆ	39 տարեկան-սենեկապան
ՍԻՄԶԱՆ	Օգտաւի հումանուհին

Թաղման արարողութեան պաշտօնեայ մը

Տեսարանը կը ներկայացնէ բաւական զարդարուն ռենեակ մը, խորքին՝ դուռ մը, եւ աջին՝ պատուհան մը: Վարագոյրը բարձրանալուն՝ Օգտաւ հագուած է իր անկողինին վրայ երկարած, անշարժ կը մնանայ կռնակին վրայ, ինչպէս մեռեալ մը, ձեռքերն մէկուն մէջ բռնած տօսախի ճիւղ մը: Անկողնին վրայ՝ ծաղիկներ, վառարանի վրայի ժամացոյցին երկու կողմերը՝ մէկ-մէկ մոմակալ, որոնց մոմերը կը վառին: Սենեակին մէջտեղ սեղան մը, եւ սեղանին վրայ՝ հեռաձայնի գործիք մը: Մահճակալին ոտքին կողմը սպիտակ անձեռոցով ծածկուած փոքրիկ սեղան մը, որուն վրայ օրհնուած ջուր պատուճակող պնակի մը մէջ՝ տօսախի ոստ մը. նոյնպէս տօսախի ճիւղեր՝ բաժակի մը մէջ:

Քանի մը վայրկեան բացարձակ լռութիւն:

Ա. ՏԵՍԱՐԱՆ

ԺԱՆ (ձեռքը բռնած է մահագի ծրար մը՝ լայն ու սեւ երիզով: կը դնէ զայն մէջտեղի սեղանին վրայ եւ, բեմին վրայէն անցնելով՝ կը մօտենայ վառարանին, ուր մոմերէն մէկը շիջելու վրայ է)·— *Լաւ, ահա՛ հատ մը եւս կը մարի:* (Զայն կը փոխարինէ ուրիշով մը, զոր կը հանէ գոգնոցի գրպանէն եւ կը մեկնի):

Բ. ՏԵՍԱՐԱՆ

ՕԳՏԱՒ (կը շարժի, կը կոտրտուի եւ երկար կը յօրանջէ)·— *Ա՛հ, ա՛հ, ա՛հ, ա՛հ, ա՛հ:* (Կը դառնայ կրկին, կը գալարուի դարձեալ եւ ձարէն կը յօրանջէ՝ երկար քուն արթնցողի մը պէս: Նստելով անկողինին եզրին): *Օ՜հ, այս հարուածը սոսկալի է:* (Իջնելով անկողինէն): *Օ՜, լա՜, լա՜, այս յոգնքս. ճկունութիւն կը պակ-*

digitised by A.R.A.R.@

սի իրենց։ (Դժուարութեամբ քանի մը քայլ կ'առնէ եւ ապա նշմարելով, որ դեռ հագուած է)։ Հանուելու իսկ ժամանակ չեմ ունեցեր. գրաւի կու գամ, որ առնուազն տասը ժամէ ի վեր կը քնանամ։ Բայց ժամը քանի՞ կրնայ ըլլալ արդեօք։ Երեկո՞յ է, առաւո՞ւ է։ (Բանկոնի գրպանին մէջ ժամացոյցը կը փնտռէ ու չի գտներ)։ Ա՛խ, ժամացոյցս գողցեր են (Ցայլով ձախ ձեռքին) եւ մատանիս։ (Ճակատը շփելով)։ Երբեք այսքան գինովցած չէի։ (Բեմին յառաջամասը կու գայ, ապա՝ կ'ուզուի դէպի վառարանը, նայելով վառող մոմերուն)։ Բայց նայեցէք անգամ մը այս շուն ծանին, որ, իմ քունէս օգտուելով՝ բոլոր մոմերը վառած ձգած է։ Որոշ է, որ վճարողը ինքը չէ։ (Հպարտ ժեսթով մը)։ Ա՛խ, այդ սրիկան։ Եթէ զայն փողոց նետեն։ (Կը կենայ յանկարծ, նշմարելով ձեռքը բռնած ոտը)։ Բայց ա՞յս ինչ է, մրտենի՞, ո՛չ, ոտախ է։ Ահա քեզի գինովի խելք մը ալ։ Ոտախի հիւղով քնանալ։ (Սեղանին վրայ կը դնէ զայն)։ Ամէն անգամ, որ կը գինովնամ, անպատճառ ձեռքս բան մը բռնած կը քնանամ, խեցիի մը պատեանը, լիմոնի փոսիկ մը, գինիի շիշ մը, իսկ այս անգամ ոտախի հիւղ մը։ Օ՛, յետ այսու բնաւ պիտի չխմեմ, կամ գրեթէ բնաւ։ (Ցանկարծ ակնարկը կը հանդիպի ոտախի ոտ մը պարուսկող պրնակին)։ Ա՞յս ինչ է։ (Ոտախ ամէն կողմ։ Դառնալով՝ անկողնի ոտքին կը նշմարէ փառուած ծաղիկներ եւ բոլորովին ծիծաղաշարժ արտայայտութեամբ)։ Օ՛հ, (Երկու կամ երեք անգամ անոնց շուրջ դառնալով)։ Մինչդեռ իմ տունս չէ։ Ուրեմն՝ ի՞նչ։ Կարծես ծաղիկներու ամբողջ շուկան կողոպտած եմ։ (Եւ հոգեթով՝ կը հասնի կեդրոնի սեղանին ու կը տեսնէ մահազգներու դէզը. փիլիոսոփայորէն)։ Բարեկամ մը եւս, որ համբորգեր է։ (Առնելով հատ մը ու կարդալով)։ «Կը խնդրուի ձեզմէ ներկայ գտնուիլ յուղարկաւորութեանը պարոն Օգստաւ Վինեբրոնին»... (Կը բացագանչէ)։ Ի՞նչ։ (Շարունակելով ընթերցանութիւնը)։ «...Որ մահկանացուն կնքեց երեսունմեկերեք տարեկանին՝ իր բնակարանին մէջ, փողոց՝ Փոնթիէօ։ Յուղարկաւորութիւնը տեղի պիտի ունենայ 3 Հոկտեմբերին, Ս. Փիլիպոս եկեղեցւոյ մէջ։ (Խօսելով)։ Իրապէս ծիծաղելի է։ (Նամակը սեղանին ետեւելով)։ Բայց ես պիտի չերթամ։ (Ամփոփելով յիշողութիւնը)։ Կը վերյիշեմ. տուն դարձայ ասստիկ գինովցած, սովորականէն աւելի տեւող տապնապ մը ունեցայ եւ այս անգամ կարծեր են, թէ անցեր եմ անդի աշխարհը... Բայց ժամանակին արթնցայ, որովհետեւ այս անպիտաններ պիտի թաղէին զիս։ (Բնազդաբար կը մօտենայ էլեկտրական կոճակին, որ հատատուած է մահճակալին գլխուն կողմը)։ Զանգակը պիտի հնչեցնեմ։ (Հնչեցնելու վայրկեանին ինքզինքին եկած կը խօսի)։ Ա՛հ, ո՛չ, ո՛չ, չեմ կրնար։ Այս կ'ըլլայ վերջին անխոհեմութիւնը։ Սիւզանին սրտի հիւանդութեան կրնայ մահացու հարուած մը ըլլալ այս։ Երկու մեռեալ մերինին նման փոքրիկ բնակարանի մը մէջ... չ'ըլլար (արգահատելով) խեղճ, փոքրիկ Սիւզան, այսուհանդերձ կը խորհիմ, որ զիս կորսնցնելու վրայ էր։ (Ոտնաձայներու աղմուկ մը կը լսուի։ Ականջ կը դնէ)։ Կարծեմ, թէ կու գան։ Դառնամ պառկիմ, եթէ ոչ՝ մէկուն մահուան պատճառ կ'ըլլամ։ Իրապէս ուրուական մը պիտի կարծեն։ Բայց այսպէս ժամանակ կը շահիմ եւ կրնամ կամաց-կամաց վերակենդանանալ։ (Կը պառկի անկողնին վրայ. կը խօսի)։ Ա՛հ (Նշմարելով յանկարծ, որ ձեռքին ծիւղը չկայ), բայց ձեռքիս ճիւղը (կը կանգնի. ամէն կողմ ապարդիւն կը փնտռէ, քանի մը բոպէ, սեղանին տակը, անկողնին վրայ, անկողնինն տակը), բայց ո՞ւր թաքնեցի այս ճիւղը։ (Տեսնելով զայն)։ Սեղանին վրայ դրած եմ։ (Կառնէ եւ աջ ձեռքին մէջ կը տեղաւորէ զայն, ապա՝ շուտ մը կը պառկի եւ գրեթէ անմիջապէս դուռը կը բացուի)։

Գ. ՏԵՍԱՐԱՆ

Օգստաւ, Սիւզան եւ պաշտօնեան։ Սիւզան ձեռքին ունի թաղկինակ մը եւ թարմրածայն կը հեկեկայ։ Պաշտօնեան լուրջ եւ հան-

digitised by A.R.A.R.@

դարտ, սեւ հագուած, մեծադիր գլխարկը կը դնէ սեղանին, ըէտին-կոթի ներսի գրպանէն կը հանէ մեթրը եւ կը մօտենայ անկողնին ու կը չափէ:

ՍԻՐԶԱՆ (հեծկլտուքներու մէջէն) — *Հանգստաւէտ բան մը չինեցէք իրեն համար, այնքա՞ն կը փնտռէր իր հանգիստը:*

ԳԱՇՏՕՆԵԱՆ (արձանագրելով չափերը) — *Երկարութիւն՝ մէկ մեթր 76, լայնք... Կաղնի կ'ուզէք, այնպէս չէ՞, տիկին:*

ՍԻՐԶԱՆ (շարունակելով հեծկլտուքը) — *Բնականաբար:*

ԳԱՇՏՕՆԵԱՆ — *Մենք շատ մը տեսակները ունինք, տիկին: Նախ կաղնիի սիրտ, էքսթրա, լաւագոյն տեսակ: Յետոյ՝ բնական կաղնի:* (Նուտ մը վերջացրնելով): *Եւ, վերջապէս, պարզ նմանութիւն:*

ՍԻՐԶԱՆ (հեծկլտուքներու մէջէն) — *Ի՞նչ են ձեր գիները:*

ԳԱՇՏՕՆԵԱՆ (ճայիով գրպանէն հանած գիներու ցանկին) — *Կաղնիի սիրտը* (գոց սորված դասի մը պէս) *տոկուն, մասնաւորապէս յանձնարարելի, երկու տարուան երաշխաւորութեամբ, հաշուեցոյցին համաձայն, երկու հազար քսանըմէկ ֆրանք:*

ՍԻՐԶԱՆ (լալով) — *Ա՛հ, Աստուած իմ:*

ԳԱՇՏՕՆԵԱՆ — *Բնական կաղնին շատ լաւ տեսակէն եւ գեղեցիկ երեւոյթով հազար քառասուներեք ֆրանք:* (Շատ արագ): *Պարզ նմանութիւնը՝ ինն հարիւր եօթանասուն ֆրանք:*

ՍԻՐԶԱՆ — *Այնքա՞ն պարզասէր էր: Կաղնիին նմանութիւնը տուէք:*

ԳԱՇՏՕՆԵԱՆ — *Գա՞րգ չըլլանակ կ'ուզէք, թէ արծաթեայ: Արծաթեան հազար ֆրանք է: Միւսները՝ երկու հարիւր չորս եւ ինսուն:*

ՍԻՐԶԱՆ — (հեծկլտալով) — *Միւսներէն:*

ԳԱՇՏՕՆԵԱՆ (անփութօրէն գլխարկը առնելով) — *Մնաք բարով, տիկին:*

Դուրս կ'ելլէ: Սիւզան կը պատրաստուի իրեն հետեւելու եւ անկողնին հասնելով գլուխին մէջէն կ'առնէ տօսախի ոստը: Երկու-երեք վայրկեան կը նայի Օգտուին, յուզուած արտայայտութեամբ կ'օրհնէ գայն, ոստը կրկին տեղը կը դնէ եւ դանդաղ դուրս կ'ելլէ:

Դ. ՏԵՍԱՐԱՆ

Օգտու առաջին

ՕԳՏՈՒ (անկողինին մէջ կը շտկուի, մտիկ կ'ընէ, ապա կը կանգնի, ջղագրգիռ կ'երթեւեկէ բեմին վրայ, ոստը կրնանիկ զարնելով) — *Այնքան չփայլած ժառանգորդուհիի մը համար մինչեւ ցին է: արտակարգ ծախսի մէջ մտնել չուզեր: կաղնիի սիրտը կարելի է, հակառակ պարադային կարելի է ըսել, թէ սուտ է: Կաղնիի սիրտ թող չըլլար: ասոր ըսելիք չունիմ, բայց թէ կաղնիի նմանութիւն, այն ալ կեղծ կաղնի, ա՜հ, ո՛չ: Մոպերն ալ նոյնպէս, երկու հարիւր չորս եւ ինսուն:* (Ոստը գրպանը կը դնէ, ծայրը դուրս ձգելով): *Այսուհանդերձ, անհրաժեշտ է, որ ժամանակիցներուս մէջ վերստին երեւնալու մասին մտածեմ: Մարդիկ այնքան ապուշ են, որ գրաւի կու գամ, թէ պիտի գանուին ասլոններ, որոնք ինծի համար փակուած պիտի ըլլան: Սակայն կ'երեւակայեմ ինքզինքս, որ, փայլուն երեւոյթի մը մէջ մտնելով՝ պրռամ: Ա՜հ, այդ հեռանկարը: Տարօրինակ է* (կը խնդայ: Միտքը փոխելով), *զարմանալի է եթէ կ'ուզէք. բայց ո՛չ, ինչո՞ւ այդպէս ըլլայ: Ես նոյնիսկ ապրած միջոցիս աւելի խելացի էի:* (Խօսած ատեն կը ցշմարէ, որ շապիկին վրայ պարզ գոճակներ կան միայն): *Ա՜յս ինչ է:* (Զննելով իր արդուզարդը): *Իմ նոր հագուստս ալ չէ:* (Երազկոտ): *Ա՜հ, կը հասկնամ: Վերջին արդուզարդս: Վերցուցած են ժառանգս, ժամայոյցս, ամէն ինչ: Հիանալի է ասիկա: Ահա այսպէս է, որ ուզած են զիս թաղել:* (Տուն ցէն լսուած աղմուկին վրայ, մտիկ կ'ընէ եւ վերստին կը պառկի: Ապա, յանկարծ

digitised by A.R.A.R.@

նլլելով)։ *Ճիւղս, ճիւղս ո՞ւր գրի։* (Գանի մը բոպէ ապարդիւն փնտռելէ ետք, գրպանէն կը հանէ գայն)։ *Վա՛յ անպիտան, գրպանս եմ դրեր։* (Վերստին կը պառկի, բիչ ետք կը մտնէ ժան, սենեկապանը)։

Ե. ՏԵՍԱՐԱՆ

Օգտաւ եւ ժան

ԺԱՆ (տիրոջը անկողինին ծայրը կանգ առնելով)։— *Ա՛հ, ահա՛ թէ ինչ է մեր ամէնուն վերջը։ Բայց պէտք է ըսել, որ շատ կը խմէր։ Ցաճախակի պատահող այն տագնապներով զարմանալի է նոյնիսկ, թէ ինչպէս աւելի կանուխ չպատահեցաւ ասիկա։ Կը յիշեմ, թէ ինչպէս, գիշեր մը, չորս ժամ նախասենեակին մէջ քնացած մնաց։* (Մտերմօրէն խօսքը տիրոջ ուղղելով)։ *Վերջապէս այս անգամ այլեւս չես խմեր։* (Խօսելով՝ թիկնաթոռը կը բաշէ սեղանին մօտ)։ *Անկեղծ ըսելու համար՝ կը յուսամ տեսնելով իր մեկնումը։ Ճիշդ է, որ վիշտէս պիտի շմեռնիմ, բայց ասիկա կեանքս պիտի խանգարէ։ Մենք վարժուած էինք իրարու։ Ան կը ճանչնար իմ փոքրիկ քմահաճոյքներս։ Նոյն ճաշակները ունէինք, կը խմէինք նոյն խմիչքները, կը ծխէինք նոյն սիկառները եւ երբեմն ալ նոյն մտքերը կը շոյէինք։* (Հանդերձակալէն Օգտաւի վերարկուն վերցնելով)։ *Եւ յետոյ չէր մաչեցներ, որով՝ նոյն հագուստներն ալ կը կրէինք։ Վերջերս, սակայն, հագուստները շատ լաւ չէին դար վրաս, որովհետեւ փորը սկսած էր մեծնալ։ Միշտ կ'ըսէի իրեն. «Զարոնը կը գիրնայ, պարոնը պէտք է շատ մարզանք ընէ»։* (Կը նստի բազկաթոռին վրայ եւ կը ծածկուի վերարկուով)։ *Կը կարծեմ սակայն, որ վերջին հագուստները գէշ չեն յարմարիր ինձի։* (Ցոյց տալով Օգտաւը)։ *Օ՜հ, այն որ վրան կը կրէ, բաւական է իրեն։ Ամէն զատ, անկեղծօրէն խօսելով, բնաւ չէի կրնար դուրս ելլել այդ հագուստով, որովհետեւ ցեցը սկսած էր մէջը։ Քիչ մը կանուխ, քիչ մը ուշ, պիտի փորձեմ քընանալ, եթէ ոչ՝ տաղտկալի պիտի դառնայ։* (Մէկ արմուկով կը յենու սեղանին եւ կը յօրանջէ ու կը փակէ աչքերը)։

ՕԳՏԱՒ։— *Ո՛չ, կը կարծեմ, որ հոս պիտի չքնանայ։ Ես անօթի եմ եւ այնպէս ծարաւ, որ* (զգուշութեամբ սեղանէն ջուրի գաւաթը կ'առնէ, կը մօտեցնէ շրթունքներուն եւ կը խմէ)··· *Փըհ, փըհ···* (Գաւաթը ադմուկով սեղանին վրայ կը դարձրնէ)։

ԺԱՆ (ընդոստ կ'արթննայ եւ դողալով կը պոռուրտի)։— *Հէ՞յ, ինչ կարծեցի, թէ շարժեցաւ։ Տպաւորութիւն մըն է, որ մարդս միշտ կ'ունենայ։* (Հանդարտած կը խօսի, բայց երբեմ չ'ինքնաճանաչ։ Վերստին կը նստի մնանալու համար։ Ներս կը մտնէ Հանրի)։

Զ. ՏԵՍԱՐԱՆ

Օգտաւ, միշտ մնացած։ Ժան եւ Հանրի ներս կը մտնեն։

ՀԱՆՐԻ (խօսքը ուղղելով ծառային)։— *Ժան, Ժան։*

ԺԱՆ։— *Հրամեցէք···*

ՀԱՆՐԻ։— *Տիկինը խնդրեց, որ հաղորդեմ քեզի, թէ քնանալու կրնաս երթալ։ Արդէն երէկ գիշերուան մէկ մասը դուն հոգեցիր։ Հիմա ես եւ տիկինը պիտի փոխարինենք քեզ։*

ԺԱՆ։— *Շնորհակալ եմ տիկինէն, բայց եթէ տիկինը ամէնաչնչին յոգնութիւնն իսկ զգայ, ես պատրաստ եմ այս գիշեր ալ հսկելու։* (Ցուզուած շեշտով մը)։ *Ես պարտական եմ պարոնին, ինք միշտ բարի եղած է ինծի հանդէպ։ Ա՛հ, ի վերջոյ ան մեռաւ է···։ Իրապէս բախտը կոյր ըլլալու է։ Միայն թէ շատ կը խմէր։ Ա՛հ, խիստ դաս մըն է ասիկա։*

ՀԱՆՐԻ (մեկուսի)։— *Ի հարկէ։*

Ժան դուրս կ'ելլէ։

Է. ՏԵՍԱՐԱՆ

Օգտաւ միշտ մնացած եւ Հանրի, մտազբաղ երեւոյթով, բանի մը

digitised by A.R.A.R.@

խոշոր քայլ կ'ընէ եւ ապա կանգ կ'առնէ Օգտաւին դառնալով:

ՀԱՆՐԻ.— Իրաւ որ գէշ ժամանակ ընտրած է մեկնելու համար: Ասոր կ'ըսեն ա լանկէ կծիկը դնել: Վերջին շաբաթները Սիւզան սոսկալի կը տանջուէր իր հիւանդութեամբ: Հապա հիմա՞ ինչ պիտի ըլլայ իր վիճակը... Ա՜խ, այն ժամագրութիւնները, ամէն յետմիջօրէի: (Այս խօսքերուն վրայ Օգտաւ զապուած բարկութեան մը արտայայտութիւնը կ'ունենայ եւ ոտը ձեռքին կը ձգէ. նոյն միջոցին Հանրի կը դառնայ): Ա՜հ, ոտը ժեռքէն ինկեր է... (կը վերցնէ զայն գետնէն եւ վերստին Օգտաւին ձեռքը կուտայ): Եւ յետոյ, առանց հաշուելու, որ երբ հինգ ոսկիի պէտք ունենայի, սրո՞ւն դիմէի... Օգտաւի՛ն: (Կը խառնէ գրպանը եւ դժուարութեամբ կը հանէ փիչ մը մանր դրամ, զոր խղճալի երեւոյթով մը կը դիտէ): Ձիշդ է, հարուստ չեմ (դրամը ձեռքին մէջ) այսուհանդերձ մեզմէ, ինչպէս կ'ըսէ Ժան... Երբեք չեմ հաւատար, որ այսքան ցաւ պիտի զգամ: (Դրամը գրպանը դնելով): Այն օրը, երբ էր բացակայութիւնը պիտի զգամ... Բայց ահա Սիւզանը: (Ներս կը մտնէ Սիւզան):

Ը. ՏԵՍԱՐԱՆ

Նոյնք եւ Սիւզան

ՍԻՒԶԱՆ (հեծկլտալով).— Բարեբախտաբար դուն կաս, սիրելի Բիբիս, ախ, որքա՜ն գժբախտ եմ, եւ դերձակուհին, որ չի գար, սոխպուած պիտի ըլլամ անպատշաճ ձեւով հանդիսութեան մասնակցիլ: Գլխարկավաճառուհին գեղեցիկ գլխարկ մը բերաւ...: Ես սեւ չզարշ պիտի չդնեմ եւ արդէն մենք ամուսնացած ալ չէինք:

ՀԱՆՐԻ.— Ես չեմ հասկնար նոյնիսկ, թէ ինչո՞ւ սուգ պիտի պահես:

ՍԻՒԶԱՆ.— Ո՛չ, պէտք է, անապահին պատճառաւ. աւելի յարմար է այդ: Եւ, ասկէ զատ, սեւ գոյնը այնքան կը վայլէ ինծի (կը նայի ածկոցին, եւ յենելով Հանրիի կուրծքին) ա՜խ, խեղճ բարեկամս:

ՀԱՆՐԻ.— Պէտք է ժխիթարուիլ, փոքրիկ Սիւզանս: Կրնաս չատ լալ, բայց ատիկա ոչինչ կը փոխէ: Եւ յետոյ, ես զայն լաւ կը ճանչնամ, ապահով եմ, որ կը նախընտրէր մեզ երջանիկ տեսնել:

ՍԻՒԶԱՆ (սեղանին մէկ կողմը նստելով).— Իրաւունք ունիս, չատ բարի էր:

ՀԱՆՐԻ (նստելով միւս կողմը).— Եւ հեզաբարոյ:

ՍԻՒԶԱՆ.— Եւ փափկանկատ:

ՀԱՆՐԻ.— Եւ երախտագէտ:

ՍԻՒԶԱՆ.— Եւ խելացի:

ՀԱՆՐԻ.— Խելացի՞: Ա՜, այդ ո՛չ: Բայց ատով ոչինչ կը պակսի իր բարեմասնութիւններէն: Բայց խելացի չէր: Խօսքը մէջերնիս, նոյնիսկ Քանձրամիտ էր:

ՍԻՒԶԱՆ.— Այդ դո՞ւն ես, որ զինք կը մեղադրես:

ՀԱՆՐԻ.— Ո՛չ, բնաւ չեմ մեղադրեր (ձայնը բարձրացնելով), բայց զինք խելացի գտնելու այդ յիմարութիւնդ է, որ...

ՍԻՒԶԱՆ (նշան ընելով, որ ձայնը ցածցնէ).— Սուս, լռէ:

ՀԱՆՐԻ (ձայնը ցածցնելով).— Եւ մեղմութիւնը: Ատոր վրայէն ալ անցիր: Կը յիշե՞ս, թէ ինչպէս օր մը ապուրին ամանը խեղճ սպասուհիին գլխուն պիտի փչրէր, այն պատրուակով, որ ապուրը պաղ է եղեր:

ՍԻՒԶԱՆ.— Ես երբեք չըսի, թէ մեղմաբարոյ էր, դուն էիր:

ՀԱՆՐԻ (պոռթկալով).— Ե՞ս, ե՞ս: (Սիւզան դարձեալ նշան կ'ընէ, որ ձայնը ցածցնէ: Հանրի աւելի ցած): Նոյնպէս նաեւ փափկանկատութիւնը: Արդեօք դարձեա՞լ ես էիր զինք անփափկանկատութեան մանողը:

ՍԻՒԶԱՆ.— Ա՜հ, ո՛չ: Իր այդ առաւելութիւնը չես կրնար ուրանալ:

ՀԱՆՐԻ (ձայնը բարձրացնելով).— Այո՛, խօսինք իր այդ փափկանկատութեան մասին:

ՍԻՒԶԱՆ (նշան ընելով, որ ձայնը

digitised by A.R.A.R.@

ցածցնէ) — Սաս...

ՀԱՆՐԻ (աւելի ցած) — Երբեք չէի կրնար հեռը հինգ վայրկեան քաղաքականութեան մասին խօսիլ, առանց որ փոխ առուած գրամը ինձմէ եւս չպահանջէր։ Սակայն, ասոր հետ մէկտեղ, շատ լաւ մարդ էր։ (Դադարէ մը ետքէ)։ Երբեւէք ինչպէ՞ս կ'ը լար, եթէ մեր խօսակցութեան նիւթը փոխէինք։ (Դադար)։ Քանդակագործ Գուս ոը Ֆոզին հետ տեսնուեցա՞ր։

ՍԻՐԶԱՆ — Այո, ես ընտրեցի ասաը հազար ֆրանքնոց գործը։ Ամիկա վերջին գլուխն է։ Անկէ աժան ու յարմար բան մը չկայ։ Շատ պիտի լրացնէ։ Գիւղ չմեկնած՝ պիտի յանձնէ գայն, որովհետեւ գիւղ պիտի երթամ...։ Ժամանակ մը կանայութեան մէջ կ'ապրինք ապտեղ։

ՀԱՆՐԻ (ճշգմ ելնէ, որ ցած խօսի) — Սաս...

ՍԻՐԶԱՆ — Ուր կարելի է ազատութիւն գիրաը սիրել։

ՕԳՏԱՒ (կոդմնակի) — Եով...

ՀԱՆՐԻ (տեղէն ցատկելով) — Հէ, ի՞նչ...

ՍԻՐԶԱՆ — Ես բան չլսի։

ՀԱՆՐԻ — Տարօրինակ բան է. ինձի թուեցաւ, թէ ապա, գիւղ կ'երթանք, բայց դեռ ժամանակ ունինք այդ մասին խօսելու, որովհետեւ հարկ է սկիզբները զդայլ ելլանք, վերջապէս չենք կրնար մէկ անգամէն միասին երեւալ։

ՍԻՐԶԱՆ — Ո՛հ, սիրելիս, շատ փափկանկատ ես։

ՀԱՆՐԻ — Շնորհակալ եմ։ Ըսէ տեսնեմ...

ՍԻՐԶԱՆ — Ի՞նչ։

ՀԱՆՐԻ — Հապա մահազդներուն հաստէնները, այսուհանդերձ, պէտք է առնով գրաղիլ։ Ո՞ւր է հաստէնները գիրքը։ Ան իր բոլոր ծանօթներուն հաստէին գիտաք նշան ըրած էր։

ՍԻՐԶԱՆ — Սեղանին վրայ է։ Ես կը կարդամ, դուն կը գրես (կ'առնէ գիրքը եւ կը թգթատէ։ Երկուքը մէկ կը նստին։ Հանրի՝ պատրաստ գրելու, Սիրզան կը կարդայ) Ամբլին ոը լա Գրեդիլէն, Թուր Մոզուր, պողոտայ 333 (Հանրի գրելով եւ կրկնելով) Մոզուր 333։

ՍԻՐԶԱՆ (կարդալով) — Առլի ոը Պաղուան։

ՀԱՆՐԻ — Ա՛յ, այս մէկը կը ճանչնամ. ան է, որ ամէն անգամ հոս ճաշի գա ուն, սեղանին տակը ոաքիս կը կոխէ։

ՍԻՐԶԱՆ — Ցիմաբ-յիմաբ մի՛ խօսիր։ Տե՛ս, կ'ուզե՞ս գրել, թէ ոչ (կարդալով) թիւ 34 փողոց Ֆրանսուա Առաջին (կը թգթատէ եւ մատով կը հետեւի), ուրեմն, Ա., ահա պարոն Անուան, Փարիզի մայր Եկեղեցիէն, 18 Գիս, Լաֆիերիէր փողոց։

ՀԱՆՐԻ (գրելով կը կրկնէ) — Լաֆիերիէր փողոց։

ՍԻՐԶԱՆ — Ա.երու մէջ ուրիշ ասնուն չեմ տեսներ։ Իսկ դո՞ւն։

ՀԱՆՐԻ — Ես ալ։

ՍԻՐԶԱՆ — Բնեերուն անցնինք ուրեմն։ (Կը փնտռէ մատով, հետեւելով սիւնակին)։ Փարիզ, քսլոնել Փարիզ։

ՀԱՆՐԻ — Ո՞ր գունդէն։

ՍԻՐԶԱՆ — Սպասէ, տեսնէն պանք ոը ոէս մոնտի։

ՀԱՆՐԻ (գրելով) — Ահա թէ բանտը ուր կ'առաջնորդէ։ Ա՛խ, այսուհանդերձ, շատ լաւ յարաբերութիւններ ունէր ոնպիտանը։

ՍԻՐԶԱՆ (կարդալով) — Թիւ 24, Գրիւքսէլ փողոց։

ՀԱՆՐԻ — Բնակարանաբար, սեղանաւոր մըն է։

ՍԻՐԶԱՆ (շարունակելով կարդալ) — Գոֆուր։

ՀԱՆՐԻ — Ամիկա թատերագիր մըն է։

ՍԻՐԶԱՆ — Ո՛չ, գերծակ է։ Եւ յետոյ ոգամարդութիւններու ատենը չէ հիմա, դրէ։

ՀԱՆՐԻ (գրիչը վար դնելով) — Դերձակ ըսիր, մխոքս ինկաւ, չմոռնամ բեռնիկոքս գերձակին գրկելու, որովհետեւ արդուկի պէտք ունի։ Եւ յետոյ, ես ծանրացայ հասցէ գրելէն։ Ճաշարան երթանք, կ'ուզե՞ս։ (Դուրս կ'ելլէ։ Սիրզան, գուրս ելլելու միջոցին սեղանին առջեւէն կ'անցնի, կ'առնէ պնակին մէջէն տօտախի ճատը եւ Օգտաւը կ'օրհնէ ու դուրս կ'ելլէ)։

digitised by A.R.A.R.@

Թ. ՏԵՍԱՐԱՆ

Օգտաւ առանձին. ապշած եւ զրգռուած երեւոյթով կը կանգնի։

ՕԳՏԱՒ։— Օ՜հ, անպատեպի էր ասիկա եւ շատ խիստ։ Բայց ես ի՞նչ պիտի ընեմ։ Այո, ի՞նչ պիտի ընեմ։ (Զեռքէն կը ձգէ ծառը եւ քանի մը վայրկեան կը խորհի)։ Ամէն պարագայի տակ, պէտք է տապանաքարի ապպրանքը ընել։ Չեմ ուզեր ի զուր այդքան դրամ վճարել։ (Մօտենալով հեռաձայնի գործիքին)։ Կարծեմ, թէ Գուա տը Ռոզ ըսին։ Գէ, գէ, ահա՜ Գուա տը Ռոզ։ Այս չորս հարիւրները Լավի՛ էթէն են, ողջութեանս այս քիւրոյի միջոցաւ հազորդակցութիւն հաստատելու համար երկու ժամ պէտք էր սպասել։ (Հեռաձայնի զանգակը կը հնչեցնէ, ընկա՛ուչը ականջին կը դնէ եւ քանի մը բոպէ ապասելէ ետքՕ) այո, օրիորդ, տուէք ինծի չորս հարիւրները։ Ճոմբայ չկայ։ Բնականաբար զուք երբիք ճամբայ չունիք։ Լո՜ւր պիտի տաք, ա՜հ, օ՛չ, կատակը մէկ կողմ, կը սպասեմ։ Ի՞նչ։ Չիս լսե՞ք լաւ, աւելի քա՞ղաք խօսի, չեմ կրնար։ (Ձայնը բարձրացնելով)։ Ձեզի կ'ըսեմ, թէ չեմ կրնար աւելի բարձր խօսիլ։ Այո, այդպէս։ Տանս մէջ մեռեալ մը կայ... Շատ ազնիւ էք, օրիորդ։ Ո՛չ, մեր ընտանիքէն չէ։ Ո՜հ, եթէ ըսէի, թէ ով է, շատ պիտի զարմանայիք... Լավիլլէ չի պատասխաներ, ճշմարի՛տ որ չափազանց զեղեցիկ ձայն մը ունիք, օրիորդ, թռչուն մը, որ կը ճլուռդէ։ Լավիէ՞թ...։ Եկած է, վերջապէս դժբախտութիւն մը չէ, քաղաքավարը լալու համար՝ քիչ մը յանդուգն էք, օրիորդ։ Տուէք ինծի չորս հարիւր քառասունչորսը, քառասունչորսը, հինգ անգամ երկու, հինգ հատ չորս, ինչպէս հինգ արարուած եւ տասը պատկեր։ Այս ինչ բան է, 444.44, Գուա տը Ռոզի բնակարա՞ն է, ա՜հ, վերջապէս. ահա՛ յանախորդ մը, որ գործակրութեան մէջ գտնուող ապպրանք մը ունի։ Այո՛, եթէ վարպետը հոդ է, կը նախընտրէի, ա՜հ, պարոն Գուա տը Ռոզ, (խոնարհելով) յարգանքներս, տասը հազար ֆրանքնոց Վիներրոն տապանաքարին համար է, ձեր կարծի՞քը ընդունիմ, կտրած սիւնը եւ տատրակները (կաղմանակի), ա՜խ, տատրակներ կայեն, դիտէ՞ք, պարոն Գուա տը Ռոզ, տատրակները դիս չին հեռաբերքեր, զանոնք փոխարինել պակներով։ Բայց ո՛չ, խընդրեմ, խնդիրը ապպրանքը ընելու մասին է, կը նախատեսեմ, որ ասկէ վերջ հաւանաբար պէտք պիտի չունենամ յիշատակարանին...։ Ինչպէ՞ս։ Կարելի չէ՞։ Ներողութիւն կը խնդրեմ։ Ապացոյցը ա՛յն է, որ ես ի՛ընեմ։ Անկարելի՞ է։ Պարոն խօսք։ Շինութիւնը սկսա՞ծ է։ Բայց տատրակները շատ դիւրութեամբ կրնաք ծախել։ Հացի պէս՝ կ'ըսեմ ձեզի։ Անշուշտ կա դտնուին մարդիկ, որոնք պիտի ուզեն հանդիսաւոր կերպով թաղուիլ, որովհետեւ ես չեմ ուզեր, չե՛մ ուզեր այլեւս, երբեք չեմ ալ ուզած արդէն։ Ես ո՞վ եմ։ Պարոն Վիներրոն։ Բայց ո՛չ...։ Հա՞յրը։ Ես որբ եմ, պարոն Վիներրոնը ի՞նքն իսկ, հանգուցեալը։ Այո՛, պարոն, ես եմ հանգուցեալը...։ Գէ՞չ կատակ։ Բնաւ երբեք։ Այս իմ հաստատ համոզումս է։ Բայց ի՞նչ կ'ուզէք, որ ընեմ։ Այս է իրողութիւնը։ Կը հասկնամ, թէ զուք անշուշտ պիտի նախընտրէիք, որ ես իրապէս մեռած ըլլամ։ Բայց անգամ մը ինքզինքիդ իմ տեղս ենթադրեցէք...։ Յարգանքներս, պարոն Գուա տը Ռոզ։ (Գործիքը տեղը դնելով)։ Ի՜ւֆֆ։ Տասը հազար ֆրանք։ Բայց ես հիմա ի՞նչ պիտի ընեմ հոս։ (Շուրջը նայելով)։ Այո, ա՜խ, այս ծաղիկները։ Այս մահասարսուռ սենեակը։ Ո՜հ, երթամ, եթէ հինգ վայրկեան եւս մնալու ըլլամ, զարհուրելի գազափարներ պիտի յղանայի։ (Կառնէ վերարկուն եւ կը դնէ գլխարկը)։ Այս երկու անպիտանները հոս կը ձգեմ, իրարու հետ։ Գեղեցիկ նուէր մը չէ ըրածս ո՛չ մէկուն, ոչ ալ միւսին, ցտեսութիւն, Սիւզան, համբեւառա՛յլ Սիւզան։ Ցտեսութիւն, Հանրի, ազնի՛ւ բարեկամս։ (Դէպի դուռը կ'ուղղուի)։ Ո՜հ, ո՛չ, ասիկա չ'ը.լար, քանի որ դիս կը տեսնեն անմիջապէս։ Եւ յետոյ, կայ անպահը, որ շատ ազնիւ կին մըն է, ասկէ սիրտ մը

digitised by A.R.A.R.@

ունի, որուն համար իմ տեսքը կրնայ վը-տանգաւոր ըլլալ։ Լաւագոյնն է պատու-հանէն անցնիլ։ Այս առաջին անգամն է, որ զոհ եմ գեանայարկը վարձած ըլլա-լու համար։ (Գլխարկը կը հանէ եւ կէս հեգնական եւ կէս ժպտուն երեւոյթով մը)։ Այս կողմէն, պարոնայք, եթէ կը համձիք։ (Կը ցատկէ պատուհանէն վար)։

Ժ. ՏԵՍԱՐԱՆ

Հանրի, Սիւզան, յետոյ՝ Օգտաւ

ՍԻՒԶԱՆ (մտնելով)։— *Եկուր չարունակենք։*

ՀԱՆՐԻ։— *Շատ լաւ, սիրելիս։* (Կը նշմարէ ոստը)։ *Տես, զարձեալ ոստը ձը-դեր է։* (Կը մօտենայ՝ զայն վերցնելու համար եւ անկողինը պարապ տեսնելով)։ *Ա՛հ, Աստուած իմ։*

ՍԻՒԶԱՆ։— *Ի՞նչ կայ։ Կը վախցնես զիս։* (Հանրի ցոյց տալով անկողինը) *ա՛հ, Աստուած իմ։* (Վազելով՝ կ'անցնի բեմէն եւ Հանրիի թեւերուն մէջ կ'ապաստանի)։ *Սոսկալի՛ է։*

ՀԱՆՐԻ։— *Թերեւս պատէն տակ ինկած է։* (Նոյն վայրկեանին պատուհանը կը բացուի եւ կը յայտնուի Օգտաւ։ Ընդհանուր զարմանք եւ ապշութիւն)։ *Մա՛-նաւանգ բնաւ մի հաւատար, սիրելիս։*

ՍԻՒԶԱՆ։— *Այո, յուզման արդիւնք է։*

ՕԳՏԱՒ։— *Ցուզում է, զիտեմ, փոքրիկ ամարանոցը, ծառաստանին մէջ կաբելի է ազատօրէն զիրար սիրել։ Հականակի համար չէ վերադարձա։* (Խոսքայց վստահ եղէք, *որ երկար ժամանակի համար չէ վերադարձա։* (Խոսքը Հանրիին ուղղելով) *կու գամ պարզապէս քեզի նուէր մը ընելու, սիրելի բարեկամ։ Կը նուիրեմ քեզի Սիւզանը, ընդմիշտ թող քեզի ըլլայ։* (Հանրի կը շարժի)։ *Բնականաբար, քեզի ձգելով թողչունը, կը ձգեմ նաեւ վանդակը։* (Գրպանէն բանալիներու տրցակ մը հանելով) *ահա՛ բանալիները, ասիկա մուտքի դրանն է, ահա՛ փողոցի դրանը, մառանի բանալին խոհանոցն է եւ այս մէկը Գրէտի Լիոնէի իմ սնուցիչի բանալին է։* (Բաժնելով զայն տրցակէն)։ *Կը թոյլատրես, չէ՞։ Ահա՛ մնացեալները։ Եւ հիմա, ցտեսութիւն, ինչպէս կ'ըսեն՝ շնորհակալութիւն։ Օ՛հ, այս ոստը։* (Կը մօտենայ ու կը վերցնէ զայն գետնէն)։ *Մի մերժեր, կը տեսնես, թէ որքան արժէք կու տամ. յիշատակ մը պիտի ըլլայ, որ այնքան առատօրէն ցանած էք։ Ձիշդ տեղն է բերու. «Բազում աշխատանք վասըն ոչինչի»։* (Դուրս կ'ելլէ)։

ՎԵՐՋ

digitised by A.R.A.R.@

Ց· ՕՇԱԿԱՆ

ՍԱՀԱԿ ՊԱՐԳԵՒԵԱՆ

Դուք չափով մը գիտէք, թէ ով էր եղած անիկա Փարիզ, ուր, զաւակին հայրութիւնն անգամ չէր յօժարած ընդունիլ, գերմարդկային այլուրութեամբ մը իր ժամանակէն ու անոր հրամայականներէն: Չէր յօժարած, ոչ անշուշտ անգրաժուութեան գերադոյն բրիոր մը կոտրելու ոնամիտ ապաբարոյութեամբ մը, որուն հանդէպ մասնակի կիջումներ ան ունէր արմանագրած կենցաղին, ինչպէս գրականութեան մէջ, այլ խուլ ու վատ այն երկիւղին համար, զոր կը զգան թուղթի, գիրի, պարսաւի, քարոզի ասպետները իշխանութեան հետ որեւէ չփումէ: Մելանի մարդն իրենց իւրացուցած մեծամտութիւնը, ամէն օր իրենք վիրենք հեղինակութեան հովէ մը վերցուած գիտնալու պատրանքը զանոնք կ'ընէ ծաղրելի ու ցաւագար, երբ իյնան Ուժին իրական առանցքին վրայ, որ պարզ է, կոչտ, գիւղացի ու կ'ուրանայ գիրենք հիմնովին: Թագակալի կտոր մը նոյնիսկ, իր ժողովուրդէն աւելի կ'արժէ, քան տասը Գարդեւեան: Մեծատաղանդ գրագէտը հոյհոյեց այդ կարգերուն, բայց չունեցաւ քաջութիւնը անոնց դէմ ճակատելու: Ջաւա՞ղ մը: Ո՞վ գիտէ, թէ ինչ անակնկալներ խանձարուրուած են նորածնի մը ափ մը մարմինն ի վար: Ու լքեր էր անիկա, ժայրութեան խուլ տունի մը անկիւնը յղի ուսանողուհին, Անգա Կէօրկէօվնա, սլաւ երկիրներէ, նո՞ւրբ, նո՞ւրբ, ա՛նքան՝ որ մարդուն հաւատալը չէր դար այդ կաղապարին տակ ծածկուած ձեւին իրականութեան: Կան այս պատկերները, որոնք միշտ կը տպաւորեն չեռ գիտեր ինչ անիրական յարդարանքովը իրենց աչքերուն ու կ'անցնին մեր քովէն երազի մը պէս: Դասական զեղեցկութիւնը չէ ասիկա, որ միշտ ոտքերը գետնին կը քալէ: Անգա Կէօրկէօվնան պուպրիկ մըն էր, հրաշքով մը մեծցած մարմինէն, բայց արտայայտութեան մէջ պահած իր մանկութիւնը, գիծէ ու մորթէ անլուր դրաւչութեամբ, բարի՞, բայց աստուածային երակէն· մէկ անգամ ինքզինքը զոհող՝ ինչպէս պուպրիկը, որ կ'իյնայ ձեռքէդ ու առ կ'ըլլայ իր վերջը, բայց մա՛նաւանդ անսահման ընկալչութեամբ, որ սիրեր էր զինքը իր երկրին մեծ մղումովը, առուսի լայնալիր սիրտով ու··· խորտակուեր՝ անոր անհասանելի փոքրութեան, վատութեան, ապազգայութեան զարնուելով: Մեծատաղանդ արմակագիրը լքեց զայն, հասցէն չտալով ու չառնելով· օրիորդին պահեսաի, զուկին հոգեգինը նեկայող դրամն իսկ գրպանելէ հաքը, ահաւոր խղաղութեամբ, գնեց չոգեկառքի տոմսակ մը ու վազեց··· գրեթէ յիսնամեայ կուատի մը պանդոկը, հարաւային Ֆրանսայի մեծ նաւահանգիստին մէջ· առաջին կինը Ֆրանսա ասք դրած

digitised by A.R.A.R.@

օրէն, որ գրաւեր, գներ, ապրանքի պէս, բոյծի էր դրեր զինքը իր «զգուելի անձին ընչահեղձող» ու ապարոյր, ազիճահիւս գտադատուս կ'նոտ մէջ. շաբաթ մը ամրողջ իր սենեակին մէջ բանտարկելով Արեւելքի սեւաչուի իշխանը: Ի՞նչ էր գործը այդ ճիւաղին պանդոկը: Սեռային փորձառութիւնը ինքնագլուխ բան մը չէ մեր ենթաշխարհին մէջ: Անիկա կը հպատակի որոշ չափով մեր միւս փարթութիւններուն: Մեծ վտանգներու առջեւ խմացականութիւնը կը քաշուի երկրորդ ֆլանի, տեղը տալով բնազդին: Հինգ տարի առաջ, ազատակէ մը աջոր մը թոցնող ագուէսը, ամէն անօթութեան առջեւ, անդամ մը պիտի փորձուի զէպի նոյն թաւուտները ազատակին: Ու այս օրէնքը դուցէ ճիշդ է մարդոց համար ալ: Ոչ ոք՝ որ պատմէր Տիկինին, Գոհարեանին, թէ ինչ նուաստութիւն էր անոր սիրահարինը, երբ փախչելու համար իր զաւկէն, շրսեանք սիրուհիէն, անիկա յանձն առաւ կրկին այդ բռնաբարութիւնը ու քանդհինգ չեղած իր թարմութիւնը ծծցնել առուաւ այդ մսակոյտի՞ն: Ձեղաւ մէկը, այլ օրերէն կենդանի վկայ, որպէսզի պարզէր աւելի տխուր դրուագներ, միշտ այդ կաւատներու կայսրութեան դաշտերէն: Ու Տիկին Գոհարեան, թռչունի ուղեղ, ինչպէս էր տարազը գրադէտին, բոլոր կին դրողներուն մասին, անկարող էր հասկնալու անոր նշանաւոր մէկ էջը, կազմուած՝ երկիմաստ, բայց կորուածքով տպաւորիչ ապոթիզմներէ, նիցէական երակէ, ու խստագոյն պարսաւի մը վառ թոյներով կաթ-կաթ ականակուտ, սրամիտ ու կծկուած, ինչպէս հնոցէն նոր ելած խարանիչ պայտը. եւ որուն մէջ անիկա կիները կազմող տարրերուն վերլուծական բաշխումն էր ըրեր, ու բզիկ-բզիկ, երկաթէ ճիրաններով փետտելէ վերջ, ինչ որ կիներուն տուաքինութիւնն է հռչակուած, նուիրումէն մինչեւ մայրութիւնը, նետեր էր մէկդի ու հաստատած՝ անոնց բոլորին հոգեյատակին, գարշագիտ միս ու ադրապարար հեշտաթիւ, կարմ ու ահաւոր վճռականութեամբ մը: Ատիկա գրած էր ան հարաւային Ֆրանսայի այդ պանդոկին մէջ, երբ ադտոտ մահիճին վրայ ա՛լ պեխերը բուսած այդ կնոջ երանքները ծածկեր էր մատիսին քիթովը ու թեթեւ, եւ արիւնով, վէրքերէն ծիլող, լիներ էր ճիւաղ դիմանկար մը, սպասելով անոր աղջկան, մօտիկ գեղի մը մէջ ան ալ պանդոկատէր... ու աւելի ատոր, քան անասունը, անիկա ծակծկեր էր իր ալ կոպերը նոյն մատիտով, քանի որ անոնց ներքեւ կը բուսնէր, աստուածային իր մաքրութեամբը ու անմեղ գեղեցկութեամբը ու շաղտ կուսութեամբը միւս նը-կարը, այդ պահուն մայրութեան տունին մէջ, կեանքի եւ մահուան ալթէրնատիւի մը մէջ զուր տեղը փնտռելով իր անարին իր ապաւէնը, սարմաճ, աստուածը ու պաղատագին կու տար անունը իր զաւկին, որ՞ու, որ պիտի ունենար իր դէմքը, հօրը դէմքը, ու աւա՜ղ, դուցէ անոր ալ ճակատագիրը: Այս մղձուա՜նջը, որ չէր յոգնած իր ուժգնութենէն եւ եօթը կիներու ծոցն ալ յաղթահարած, կանգնելու իր ոգեղին մէջ, թեւերը կտրած, դէպի կոպերը ու ահեղօրէն խռովիչ: Այո՞: Սահակ Պարսեւեան: Ըսի՞ ձեզի, թէ Տոսթոեւսկի չէր կարդացած: Այլապէս, փոխանակ այդ շաղիղոտ ալֆորիզմները ստորագրելու, անիկա իր խժլտուն տենդին մէջ պիտի ստորագրէր խորագոյն վէպերէն մէկը հայ գրականութեան: Սո՞ւտ մը՝ Սթոմրակինը անոր այդ վիճակին մէջ դրուած: Այդ նշանաւոր էջին մէջ անիկա կը դրէր յատկանշական ուրիշ նախադասութիւն մը, որուն համեմատ, կիները վերլուծողները ներքինիներ էին, եթէ դարշադին միսէն ու

digitised by A.R.A.R.@

աղբատարար հեշտանքէն դուրս դանէին ուրիշ բանե՛ր։ Ո՛վ պարզուութիւնը ամէնէն խոր բաներուն, զոր չենք տեսներ դժբախտաբար առաջին ակնարկով։ Անշուշտ սեռը հերքելը հերոսութիւն մը չէ՝ կիները, մա՛նաւանդ զաւակը ուրանալէն եռքը։ Բայց հակառակ իր ահաւոր, անորակելի ապաբարոյութիւնն, անիկա չէր յաջողած լռեցնել մղձաւանջը։ Ու կը տառապէ՛ր, եղկելի ու նենգ, յիշատակովը, մինչեւ սա ծերութիւնը, անմոռն տեսարանին, որուն մէջ Փարիզի ամէնէն գեղանի աղջիկը, իր մէկ ոչ-մայր, ինքզինքը դրեր էր իր արբամաղրութեան տակ, պաղատագին նայուածքէ մը եռք, երբ անգին այդ աղջիկան համար խենթացողներ, մարդերու աւագ ընտանիքներէն, արիւնի ու փառքի իշխաններէն, վոնտուած ու յիմար, կը ջանային իրենց վրկպանքը հասկնալ ու չյաջողիլ։ Այո՛ ամէնը, որպէսզի ճշդուի տարողութիւնը գոլիք պատահարին, այսինքն՝ փախուստին,

զոր ըրին տակայն։

— Անոր իշտկաճ, իշական յիմարութիւնը,— ինչպէս որակեց անիկա այս արարքը, առաջին շարժուն իսկ, ու նեռեց, այդպէս պիտակուած տարաղը, իրեն յատուկ չնչանութեամբ մը, իրեն հետեւող տիկինին երեսին։ Պիտի գործածէր նախագասութիւնը, հետզհետէ աւելի զայրագնոտ, աւելի կծու՝ շեշտէն՝ ինչպէս արհամարհանքէն, երբ տիկինին սնտուկը թեթեւնար իր յուսութքէն, քիչիկրիչիկ, տարիներու ընթացքին։ Այդ անրմբռնելի անասնութիւնը, այդ իշական ըլլալ յեռոյ իշխանական իշուքի՛ւնը, իր գոյութեան խայտարղէտ գարշանքին վրայ յաւելեալ գերազանց, ծիծաղելի, անբաւե՛լի արա՛տ։ Ոչինչ կ՚ընէր այնքան տխուր զայն, որքան ծիծաղելին։ Իր իրաւունքը, մենաշնորհը կը նկատէր անիկա ուրիշները ծաղրելի ընել ու բսել այդ բանը յանձնապատան լրջութեամբ։ Պարտաւոր տապալել։ Գիտէր ատիկա։ Փիծուլեին ուռեցնող, ծաղրանկարին իմնալ,— երկորդ նախադասութիւնը։ Իր թշնամիները, որոնք լեզէն կը հացմէին ու յաչադիտ բերնով խնդալ ունէին անձին, ի՛նչ ստատուչ երանութեամբ չահագործեցին պատահարը։ Զեմ հետեւիր աղմուկին, բարոյախօսական տեսութիւններու հեղեղին, պժգանքի հանդիսաւոր ցոյցին, զոր յառաջացուց այդ փախուստը մեր գրուած ու բերանացի մամուլին մէջ։ Անիկա «գոհ էր» ականջին ծանրութենէն։ Բայց, խորտակումէն վերջը, իրենց մեծութե՞ն մէջ։ Այդ արա՛տը։ Զոր պարտաւոր էր հանդուրժելու, բայց ոչ առաջիններուն, նախկիններուն նման, խուսափելի, քանի որ ուղի չունէին ատոնք, այլ անծածկելի, աշտարակի մը գագաթին ինչպէս, ու պիտի հանդուրժէր ահաւոր կեղի մը նման արուեստի իր արքենի դգայարանքներուն վրայ։ Զոր պիտի չամչնար տառապանքի գործիք մը անկիլէ, իր «ինկանոր» ալխին, ամէն անկողինէ վերջ ու ամէն ցոփութիւններէ յաղնադարձ իր բիկումին առենները, աւելի եռքը գբաական իր վրիպանքը գետեղելու չափ այդ փախուստին կենդանակերպին ներքեւ։ Ու պիտի պուռար, աւաղող ու արտասուալեղց, ինքզինքը գոհ, իր տաղանդը՝ նահատակ ու զիտ՚ակ։

Ինչպէ՞ս։

Այսինքն ո՞ր իրաւունքով։

Ան ոչ մէկ ատեն ուրիշին վրայ չփնտռեց ատիկա, որպէսզի փնտռէնք իր մօտ։ Բայց անիկա պիտի հարցնէր միշտ-միշտ, կարմրը հեղ մը գոնէ։

digitised by A.R.A.R.@

— Ինչպէ՞ս։

Այսի՛նքն։

— Ինչպէ՞ս ինկած էր անիկա «հաղորդին» մէջը այս կնիկին, ինք՝ որ եղեր էր չատ աւելի խնող, խոր, «մեծ ոճէ» պաշարումներէ, փարիզուհիներուն ուռկանները էն, «ողջ–առողջ», ու եղեր մա՛նաւանդ, արտառուչ, անհուն մեծութեամբ Անգա կէօրկէօմնային ապաստանքէն, դայն լքելու ատեն գտնելով անհաւատալի տխրութի՛ւն։ Ինչպէ՞ս։

Հարկա՛ւ։

— Ծանօթ էք անոր չունեցած կամքին։ Բայց անծանօթ էք անոր այն միւս վիճակին, որով տիպարը կը դառնայ եզական ո՛չ միայն մեր մտաւորականներուն ինքնին խնող խաժամուժին մէջ, այլեւ՝ բոլոր խաւերէ ապրողներու, կիսահարուստներու՝ հօրէ կամ ժառանգովի, հանրային կարծիքը թուքի իսկ անարժան նկատողներու զանգուածին մէջ։ Անոր այդ վիճա՛կը։ Զայն կը նմանցնէր, բանաստեղծօրէն, ծովային, ժեյութիւնով հիւսուած զանգակներու, կուկղամորթ կենդանիներ՝, իրենց «գեղակերտ» ծփանքին մէջ, երբ նստած ծովափ՝ կը համբէր գտնղող գանգակներուն փոքրագէր գմբէթիկները, ջուրին կապոյտին կամ ծիւնին մէջը, այնքան թոյլ, հեշտ, լը–պրծուն, իւրաքանչիւրին մէջ խորհրդանիշ տեսնելով իր տարիները, վարերէն, բացերէն, միշտ այսպէս «լպրծուն», միշտ «չեղ», առանց յատակի, ու անօգո՛ւտ՝ հրուած դէպի եղկելի մահը իրենց, ըլլալու բզիկ–բզիկ, ժամանակին խարակներուն վրայ։ Ի՞նչ պայծառ ենք երբեմն մենք մեզի հետ, երբ մեր վրիպանքը կը կամբլենք կիսակործան կամարներու վրայէն, արագ ցատկելով, վար չնայելու համար այլեւնիս գոցած, ու եւ դառնալ վախնալով։ Այդ պահերուն խաղաղութիւն կայ մեր մէջ։ Ծովափին նստիլ ու նայիլ ջուրի՞ն։ Տխուր ու առինքնող նոյն ատեն, այդ հանդէսը, երբ միայն է սեւով։ Այսինքն՝ երբ մեր ուղեղին կը վերադառնայ դուցէ սկզբնական քառսին մէկ պատառիկը, ծուէնը, մութ, բայց կայծով յղի, ունկազմ, բայց հնարաւոր՝ հրաշակերտներ ճարտարապետելու։ Ի՞նչ որ տիեզերք կը կոչենք, ուրիշ բան չէ, եթէ ոչ մեր ուղեղին մէջ կաթիլ մը սեւին, նախաքաոսին արտարձակումը, երկարումը դէպի ամբաւութիւնը։ Ու մենք կ'ապրինք, մեր մտքին սեւովը, անհունութիւնը աշխարհներուն, փոխն ի փոխ լոյս ու խաւար, գոյ եւ ոչ–գոյ։ Ու ըլլալու համար աւելի հակնալի, մենք մեզ կը դնենք առջեւը դոնղող գանգակներուն, ու անոնց դիակներուն, ափունքի varechներուն ու փուտ փայտերուն կողերն ի վար ու սեպերուն նիզակներէն խոցոտուն, իրենց լազուարթ ու քիւրեղ ծփանքէն յեռոյ այսպէս ելլենք, գաբլուքիւն, զոր կանանչ ճանճեր պիտի բեղմնաւորեն ուրիշ թռիչքի, ուրիշ ճակատագրի համար։ Ո՞վ մեր կեանքը։ Քեզ ապրիլը պարտքն է մեր ճիտին։ Բայց ինչո՞ւ՝ դրին մեր վիզին միւս պարհուրելի պարտքն ալ նորէն, քեզ մեզով դատելու։ Ի՞նչ են դիրքի մը հարիւր, հինգ հարիւր, հազար էջերը այն անհուն բեկումին, ցիսումին, ատքին կամ ստորնութեան մօտ, որոնցմով չինուած են քու անհասելի բեհեղին հէնքերը։ Ո՞վ մեր կեանքը, զոր կը կրենք երբեմն այնքան անուշ, այնքան թեւ ու թռիչ, երբեմն ալ այնքան կապար, երկնաքաշ։ Քեզ տալու համար ի՞նչ դիրք է հարկաւոր։ Սահակ Պարգեւեան, կեանքին հոսանքին վրայ իր գանգակ–տարիները արձակած, «տեղաւորա՛ծ», բայց էն հովերուն անմնատուր, ուրիշին

digitised by A.R.A.R.@

դերի, ուրիշին գրուած։ Անշա՛ւշտ, ինչպէս ժելաթինոտ ծովամայրերը։ Սի՛ն։ Անշուշտ։ Բայց գեղեցի՛կ, աւա՛ղ, ինչպէս ըլլալ պարտքն է բոլոր ձեւերուն, երբ կը նաւէն անոնք տակաւին հեռու՝ մահուան դարունակէն։ Բայց փխրուն՝ ինչպէս պարտքն է ըլլալ մեր կառոյցներուն, հոգ չէ թէ մենք մեզ թէ մենք դուրս կառուցողներ ըլլանք։ Գրադէտը կը տիրէր ի վերջոյ, չհանդուրժելու չափ բազմատարմ արշաւը դոնդողներուն, կու տար կոնակը ծովուն, ու ափընեայ պանդոկներուն պատուհաններէն ծաղկող կնիկի մը դէմքին տրեւելով իր հոգին, կ'ուրանար ամէն բան, ամէնէն առաջ մա՛հը, այսինքն՝ ափունքին varechները, նման զանգակներու նման ու նման ամէն ճամբորդի։ Իզմիրեան ծովափնեայ սրճարանէն սկիզբ առնող այս հոսումը կեանք-զանգակներուն պիտի չմոռնար անիկա։ Ու «գեղայօրէն» ծովասղին նման, անիկա հետեւեցաւ Տիկին Գոհարեանին Պոլիս, Եւրոպա, Եգիպտոս, ո՛ւր որ քշեցին իրենց մանրանկար, կիսայոյզ դմբէթները գիրենք ապրելու, մեռնելու, նորէն ծնելու, բայց ճա՛նաւանդ իրար ապաննելու նախասահմանուած։

Դանոթ էք մասով կեանքին, զոր չինեց մեծատաղանդ արձակագիրը այդ կնիկէն։ Ա՛ելի՛ն։

— Այս վէպին ոահմանը չ'արտոներ լայնալ։

Վանդի առանձին վէպ մըն է ասիկա արդէն, որտառուչ ու խեղճ, պարզ իր աւերակին առաջին փլանովը։ Ու ամէնքս ալ գիտենք, թէ որքան քիչ է առածը մեր ակնարկին, երբ դուրսէն, հեռուէն մանէ չփոմի համապատկերին։ Իջէք ներս, պարիսպէն ու սիւներու ոսկորներէն։ Իջէք վար, մառաններէն ու նկուղներէն։ Այն ատեն միայն պիտի դնահատէք միլիոններու պողիկին, հոգեբանական ողկոյզը, որոնց մահովը յօրինուած է այդ աւերակային թախծութիւնը։ Ու կը ձգեմ ընթերցողը այդ մուռքին։

Խեղճ, խե՛ղճ, խե՛ղճ խորտակումը մեր մատուռին — դուք դրէք կեանք անունը անոր — զոր օրին մէկը որոշեցինք քանդել հիմերէն, նորոգելու հերոսական ցանկութեամբ։ Զոր կը տապալենք մեծ կրակի մը ճարակ ընելով, ու երբ կը փորձենք այրած պատերը կործանել դեռին, խորանալ հիմը, նորը դնելու, վերցնելու համար, կը գտնենք մեր մատները շոփոպանց յոգնած, մկանաթափ։ Այն ատեն է, որ անհուն բեկումով կը նայինք մեր իսկ ձեռակերտ շուառ աւերածին։ Ցեառո՞յ։ Կը փախչինք, որպէսզի մեր տառապանքը խնայենք ուրիշներու վայելումին։ Կամ՝ նոյնքան խղճալի համակերպո՞ւմ մը, մեր մատուռին աւերակին մէջ բնակելու կրկին, մինչեւ որ փլին կիսայրեալ պատերը ժամանակին փոշի ժանիքէն ու թաղեն մեզ, մեր միամիտ, քաղցր, անվերադիր յիմարութիւնը։ Մե՞նք՝ որ ուզեր էինք «ճանդել մեր շտեմարանները եւ նոր մեծամեծս շինել»։ Շատ են տուն փլողները, իրենց իսկ ձեռքով։ Քանի հոգի՞՝ որ ունենար սիրտ այդ ազրակոյտէն նոր մը հիմնելու։ Տիկին Գոհարեան սկսաւ իր տունին քայքայումը մեծ հերոսութեամբ մը։ Բայց այդ քայքայումը լրումին տանելու, պատկելու ուժը պակասեցաւ իրեն։ Ցոգնած էր անիկա, առաջին իսկ շաբաթէն։ Բայց՝ պարտաւո՞ր, ծուէն-ծուէն հանդուրժելու իր աւերումը, ա՛լ ուրիշ բանի ատնատակ ըլլալուն։ Կրակը կարգ մը մարմիններու տարբրաթանական յատկութիւնները կը փոխէ ընդմիշտ։ Մոխիրէն չի չինուիր ադամանդ, թէեւ այս վերջինը իր բիւրեղները ըլլայ պարտական հերմակ այդ ածխացումին։ Արեւմտեան մշակոյթէ, բարքերէ կին մը, մե-

digitised by A.R.A.R.@

բիններէն տասն անգամ աւելի բախտ ունի իր սիրածին հետ գէշ–աղէկ տանելի մտաուս մը մէջտեղ բերելու հաստատակաց ստուգութեան։ Անիկա կեանքը հագնելու, տանելու, տիրելու մեր կաղապարուած, կրուցած ձեւերէն ալ ազատուած է համեմատական չափով. ինչո՞վ ապրի՝ քաղքենի մեր տիկինը անգամ մը ինքզինքը դուրս գտնելէ ետքը, իր բոյնէն, մեծ գայթակղութեան մը գնով։ Հեռանկա՞ռը՝ նորը սկսելու։ Բայց ո՞ւր։ Որո՛ւ համար։ Մենք կը հանդուրժենք ձեւէն փրկուած շնութիւնը, սանկ ու նանկ հաւասարակշռուած հոմանիութիւնը։ Բայց կը հայածենք ազատ արտայայտութիւնը սեռային հորձքին։ Իր տունէն փախած կնիկ մը այդ իսկ քայլովը մեռած է մեզի համար։ Ցետո՞յ։ Ինչ յիմար է երբեմն մեր հարցումը։ Ու վիպողը պարտաւոր է կենալ ու չդատել։ Ու վիպողը պարտաւոր է կապ մը ճարել ընդմէջ մեծատոհոնդ արձակագրին ու գեղայօրէն, մեծակառոյց, արքենի Տիկին Գոհարեանին։

Այո՞։

— Այո՛։ Կայ անիկա, երբ պատասխանի մը սիրոյն, փոքրենք սարսղութիւնը մեր բառերուն ու սեռային մարդը նկատենք գերագոյն աւստանը, գաշտ ու հովիտը, ուր պարտին դիմել բոլոր աչերակները մեր սէրերուն կամ տենչութեանց։ Այսինքն՝ երբ խորտակենք մեծաշնորհ արուեստագէտի մը հիմնական գգայարանքը, ուրիշ խօսքով՝ զայն հանենք դուրս իր արքայութենէն, ձեւերուն ու պատկերներուն անծայրածիր կայսրութենէն ու դնենք սայլին մէջը առօրեայ որակուած ազգութիւններուն, սին, փուճ, չիմար, փրթուճ, խլեակ բաներուն, որոնք կը յորինեն մեր ամէնուն կեանքին ընթացիկ ածուները, հող ու պոյտ, բայց բերուած ուրկէ՛, ո՛ր ախոռներէն ու ո՛ր խրուտքէն։ Կամ մեծցնենք միւսը, այսինքն՝ իր տունին մէջ արժէք մը բերող, զաւկրներր մեծցնող, էրիկը սանկ ու նանկ օրօրող ու օրինաւոր ծերութեան հասող կնիկը առնենք իր ապահով չրջանակէն ու դնենք ծիրին մէջը առաջինին։ Այո՛։ Բայց ինչպէ՞ս։

Գիտի՞ ըլլա՞ր ճիշդ այս «կեցուածքը» հանդէպ մէկու մը, որ «արուեստներու փարթամ աշխատաւոր մը» կը դաւանէր ինքզինքը, եւ կ'արժեզրկէր ուրիշ ամէն ախորժակ ու կեանքը պարագրկել կարենալու համար կը յանձնարարէր իր ընկերներուն, հերետիկոսներուն, նորընծաներուն լայն, լայն բանալ բազուկները, անսահման ընելու չափ լայն, արպէսզի յօդակուէին անոնք կնիկի մը մարմինէն։ Ոչ կը ցաւէր իր ակարութեանց ճիշդ այդ դեռինէն ու չքմեղանք կը փնտռէր իր վատութեանը հանդէպ, իր չուքէն իսկ ինքզինքը վեր ըրած ըլլալուն։ Վանդի միամիտ էր ան, առանց կեղծիքի՛, հաւատալու չափ մեր միտերէն անդին ուրիշ ալ կեանքի, առնուազն բառին, վանկին, գոյնին, պատկերին, կեանքին, որոնք, «ըստ հանգամանաց ու առուրց», կը յուզէին զինքը աւելի քան ծարաւ չրթներէն «խղդող» համբոյր մը։ Չէ՞ որ գրագէտ էր անիկա, ու ռէի վարպետ։ Ու ձեւի կախա՞րդ։

Մարմնէն անդի՞ն։

— Այո՛։ Ա՛ւ, երբեմ, չորեցա՞ այո՛, երբ մա՛նաւանդ զբաւանքով իջնէր, փախէ՛ր մահիճէն։

Գատրանաթա՞փ։ Բայց վատօրէն ոփոփելով ինքզինքը՝ կտոր փրթուած իր սրտմտութիւններէն ուժ բերելով իր զգուանքը ոսկեզօծելու։ Սա «մանրուքները կու գային անշուշտ անդրագոյն փորձառութիւններէ։ Կիները Ը՞րբ ծնունդ տուին գեղեցիկ բանի, բացի մեղ-

digitised by A.R.A.R.@

գերէն։ Անիկա յաճախ կ'անդրադառնար դասական, հանրանանօթ իր առեղութեան, զոր կը պոռթկար սեռին դէմ, հանդէպ կասպոյտ-զուլ-պանիրուն, ֆրանսական բնական փոխանունութիւնը փոխադրելով մեր դրականութեան ու բարքերուն։ Ան էր պատճառը գուցէ, որ չատ վերնաթեւ արհամարհանքով մը հանդուրժէր կիներուն մօտ խելք ու դատում, չրսելու համար ազնուութիւն ու բարձրութիւն, պանոնք ցիդերոտ տղրանի մը պիտակն ու մէջ իսկ զգալի ընկ·ով տեսակ մը շնորհ, գիջում ու զգլում։ Կնատեսցուբի՞ւն։ Բայց ե՞րբ ընդունեց արդէն անիկա ուղեղն ու սեռը նոյն գիծի արժէք։ Անիկա ստոնց հերքումն էր դիտած, տարազած երկար իր փորձառութեամբ։ Այնպէս որ՝ ստոնց փէչերէն մչտապէս ձգուած (նեւռոնեան տատմով), պանոնք կ'արհամարհէր տարօրինակ արագութեամբ մը, իրական, անհերքելի վճռողութեամբ, ինք՝ որ ամէն ինչ դիտակ կամ ոնդիտակ, դրական կ'ընէր։ Հոտո՞վ կը տանէր կիները, որոնք իրեն համար «ապիմաց» կենդանիներ էին, շրսելու համար «ապուչ»։ Կ'ուրանար ստոնց ամէնէն անհերքելի առաքինութիւնը ու ղոյին մարդերէ խոր ընկալչութիւն մը, նոյն այդ գրութենէն՝ թրթռման ուժի դարոյն հէնք մը։ Փարատոքսի սիրահար՝ անիկա այդ յատկութիւնները կը վերածէր առնական նիարդիրներու, ընկալչութիւնը փոխարինելով հպարտ տուչութեամբ, ու սեռային spasmը կը շփոթէր orgasmին հետ, կամովի։ Ու կ'ատէր, նմանելու համար դերման ժիտոդին, որ, բնախօսական պայծառ փաստերով, կործանած է ոկար սեռին վրայ արմատացած գեղեցկութեան հեքիաթը, մեկնելով ստոնց մարրամասերուն իսը աններդաշնակութենէն, որ կը սիւնանայ ստոնց զիսաբերուն ու դլուխ, յանկէջ համաչափութիւնը կը փոխարէ անազնիւ կեղրոններ, դէպի փորը եւ երանքները։ Հետեւելով «Միրոյ բնաղիտութիւնը» տեսութեան, անիկա իկած է hոգեբանութիւն, ըսել կ'ուզէր՝ բարոյախօսութեան։ Անիկա մչտակոն պայքար է յայտարարած ստոնց sensibilitéին դէմ։ Ամէնէն հաշուբուած ստոր անգթութի՞ւնը։ — Կիներուն արցունքին դիմաց վայրկենաբար ճակատեցուցած իր լրբութիւնն էր, լրբութիւն՝ որ համաձայն էր ոպանութեան, ա՛յնքան՝ որ մէկ բոպէի մէջ անիկա կը դադրեցնէր ինքզինքը մարդկային զգայութիւններէ ու կ'ըլլար անզսանելի մեռաղ մը, որպէս թէ արիւնը ատէր մէկէն ու չինէր ստոր աչքերը այդպէս ոգակի, միֆա, բայց հեգնական, չար, դժխեմ մեռաղայնութեամբ մը, դիմացինին աչքերը համակրօրէն սառեցնելու ատելեան։ Թերեւս կիները արհամարհող այս խստաբարոյ դեղծիչն էր, որ կը ատեղծէր ստոր դառնագոյն հաճոյքներէն մէկը, — չարչարել իր մարմնին խռովքով միամիտ ուսանողուհիները, երբ էր երիտասարդ, ժառնալով ստոնց թատերական անկեղծութեամբ, դրաւելով նոյն այդ շնորհով, բայց կատարելապէս էջ պընչանքով մը ղրկելով զինքը ստոնց թեւերուն, իր ահաւոր, «ահմբոկեցուցիչ» դիմածռումը պարզելով իր եւ ստոնց մէջտեղը։ Անիկա, թէեւ ցանցառակի, բայց բաւ էր իրեն, ով գիտէ ի՛նչ փրկիմդրութիւն փոխարինելու, էգերէն կրած իր նուաստութիւններուն հաշուոյն։ Ան կը խարէր իր ճառագայթումին մէջ մոլորած բոլոր պարզամիտները, աղջիկ թէ կին։ Տիկին Գոհարեանը։ — «Ամ մը ուզեցով, ո՞չ, պաղունց մը ուզեցով» եղկելի «թուքակ» մըն էր, ինչպէս պատկերած էր զայն, հանդիսման առաջին գիշերն իսկ, երբ քիչ-չատ գրաց-բրաց տիկին մը, որ կաճանց հանդէսի մը յօդուածներ կը ատե-

digitised by A.R.A.R.@

լրագրէր ու իրեն հով կու տար ֆրանսերէն ոտանաւորներ թխելու վա-
հոռականական օրաթերթի մը պարապ, այսինքն՝ ծանուցումի հա-
մար անվարձ սիւնակներուն մէջ, հարցուցեր էր իրեն, աւելի ճիշդ՝
հարցաքններ էր մեծատաղանդ, հոգեբան արձակագիրը իր «Գոհար-
եան» տպաւորութեանը վրայ։ Կատաղի կապոյտ-գուլպան սիրաբա-
նած էր ատեն մը տիկինին ամուսինին հետ, գրաբարին, այո՛, գեղ-
բախտ գրաբարին արահետներէն, քանի որ անոր միւս նանրամտու-
թիւնը դեռ մինչեւ այդ տարիքը կը մնար անոր ,— ու-
սանողութեան շրջանին հայկական չափով գրաբար բերբոդագրելու
մեծահռչակ արժանիք մը։ Մատաթիա Գարագաշ, Յակոբ Գուրգէն
օրհնութեան դիր ունէին երանելի տիկինին մօտ, որոնցմով կը դրբ-
ատէին անոր բիւրեղեա նախանձելի չնորհնե՛րը։ Ո՛վ դարեր։ Ո՛վ
մարդեր։

Ու անոնց կապը եղաւ նման բոլորին կապին։

— Իրարու վիզէ անցուած օղակ, կեանքի արօրին։ Մէկէ՛ օ-
ղակ ու միւէ քեղի։ Դէպի ո՞ւր։ Գէտք չէ հարցնել, երբ դուրս է
լուծքը, այսինքն՝ երբ արտ չկայ մեր ոտքին։

Ու եղաւ անոնց կեանքը կանոնաւոր, անսղոք բզկտում, փո-
խադարձ, անապրեալ, ամէնօրեայ, նոյնիսկ ամէնժամեայ։ Վատնզի
չատ, չա՛տ, չա՛տ են դանակները, հերիք է, որ մենք յօժարինք զի-
բար սիրելու փոխարէն, զիրար բզկտելու։

«Հիմնախոյս» (իրն է բառը) մեղրալուսինը սկսաւ «դատնա-
կորով» ձանձրոյթով։ Սահակ Պարդիւեան, որ faisandé կիները հան-
դուրժեր էր Փարիզ, ու շաղոտ, ճպուռի պէս աշխոյժ գործաւորու-
հիները չէր մերժած իր թեւերէն, անհուն զգուանքով մը կը պատ-
կերէր հրեսունը անցած ու ներսէն քիչ մը աղօտ այդ կինը, որուն
պտղ, թուքակի մրոքէն «հոգնկան վայելքի» ոչ մէկ ծուէն կու գար,
պիտի գար իրեն։ Փափկանաչակ արուեստագէ՛տը։ Ինչ այ լրջու-
թեամբ կը փնտռէր բաներ, որոնք մերժեր էր տանէն կիներու գա-
սակարգին։ Ինչ սոփեստութեամբ կը սպառէր միջակ այդ կնիկէն իր
միտքը հրահրող արուեստի, զգացումի կայծերը, որոնք սեպհակա-
նութիւնը, մենաշնորհը ըրաւ այրերուն։ Ու չէր խորհեր, որ անիկա
իր շնականութեամբը բզկտած էր սիրտը ուրիշ աղջկան մը, որ ճիշդ
իր հիմիկու պահանջածները կը խտացնէր իր չատ խոր, թափանցող
ուղեղով, այր մարդու չափ ուժգին ու շողարձակ։ Ու չէր խորհեր,
որ ատենին արգիլած էր անոր խոսիլ, հրամայելով հանուիլ ու լռել։
Հիմա՞։ Նոյնն էր պարադան։ Միայն շրջուած։ ԿԻ՛ՐՔԸ։ Այո՛։ Վատ
անասունէ, առանց ճիգի իր յաղեցումը փայփայող արուի հաշիւը ա-
սպին զսպանակն էր այս մրցումին։ Բայց կիրքէ՞ն նոքը։ Անիկա
չէր կրնար հանդուրժել անոր մարմինը, մա՛նաւանդ մերկութիւնը,
ու կը փախէր իր «աշխատանոցը» գիշերուան կէսերուն։ «Գիշերա-
խոյսը» ինք հնարած է՝ պատկերելու համար հակադիր վիճակ մը։
Ճիշդ պիտի ըլլա՞ր, հետեւելով իր բառակազմութեան, հնարել գու-
ցէ անկողնախոյս ածականը։ Ցեսո՞յ։ Ամէն գիշեր իր ցերեկը ունի՛,
ով Լափալիս։ Իրար ատողնե՞րը։ Անիկա լեղի անկողինէն յապաղած
ժահր մը կախած՝ գէմքէն ու լունչէն։ Միւսը՝ յուսախաբութեան ու
վիշտին մուրճերէն ծեծուած ու ծեծուած, Թոյլ, «բզիկ-բզիկ»։ Զզ-
ուելի նախանձը։ Ու մի մոռնաք անոր հեշտախոյզ ախորժակը ու-
տելու ախթէն։ Հիմա՞։ Զզուելի նախանձը, որ Տիկին Գոհարեանի
քիչ մը անինամ թուլութեամբը կը գոհհկանար, ակռոներուն տակ

digitised by A.R.A.R.@

վաստութեան խմորի մը վերածուելու չափ։ Ու դո՛ւրս։ Փողոցները։ Պարապ–պարապ, որսո՛րդ՝ ձեւերու եւ յուզումներու։ Իր ճակատագիրը կը կատարէր այս կիսագունտին վրայ։

«Հիմնախոյս» մեզրալուսնին հետ պիտի սկսէր ոչ–նուազ դառնակիրով ուրիշ գրեհկութիւն մը։ Սարիկա պզտիկ, ամօթալի բաւավէճն էր, դրամի շուրջ հեղինակուած։ Ամէն առտու, գրագէտին պարապ դրամապանակը պիտի բացուէր, իր խեփորէն կիսուած ուլականջի մը նման, լուռ՝ դնելով իր դանդատը ակսող օրէն։ Ամէն առտու, Տիկին Գոհարեան, որ գրագէտէն չորս անդամ աւելի կը հասկնար լուկայէն, գոհարեղէններէն, դրամէն, դնէր պիտի անոր «փորին», «ականջին» օրական պարբերը, միշտ քիչիկ մը աւելի, նըկատի առնելով «բացառիկ պարագաները», այնքան առատ անոր ժանգոտ, աղքատութեամբ կղզուած ասպարէզին համար, երբ մէկ օրէն միւսը դրամ կ'ունենար։ Քաղքենի կնիկ, իր զոյգ էրիկներուն դարձնական տենդին մէջ, կատարելագործած էր իր սկզբնատուր բընազդը, «պահելու», «խնայելու»,— բնա՛զդ՝ որմէ զերծ կինը հազուագիւտ է, որքան ուռէ զերծ կինը։ Այս զգայարանքն էր, որ ըլլար էր անոր անուուկը փարթամ ու «ռակիյորդ»։ Ու ակնեղէ՞ն։ Զարդասիրութիւնը, երբ կ'արտայայտուի մետաղով, ոչ թէ մետաքսով, չըլլուած կծծիութիւն է յաճախ։ Ու մի մոռնաք միւս մեծ օրէնքը, որուն համեմատ ամէն կին մայր է ամէն բանէ առաջ։ Այսինքն մա՛յրը՝ կարգուելիք աղջկան մը։ Այսինքն, արդի կարգերով՝ օժիտի հայթայթիչ։ Աւելին։ Տիկին Գոհարեան ի բնէ ժլատ — վասնզի դրամը բիւրեղի, չոգի վերածելու գիտութիւնը անկէ չքաժնուելու այնուապետական ձեւ մըն է — ողորմելի տարտափով մը հաստատեր իր սիրահարէն նոր մորթափոխութիւն մը, որով կու գար հրապարակ տարօրինակ տիպար մը, անհեթեթ, որքան յիղկարծ։ Բացուած էին անոր ձեռքերը, առատ ու թատերական մեծածախս խրճոյներու, զարեղուրի փաթիներու, մեծ ոռմ՛ (ի՞նչը փոքր ոռ է անոր մօտ, սկսելով դրեւէն) դրօսապտոյտներու։ Կը ծախէր ոսկին նոյն վայելչութեամբ, ինչպէս իր գրիչը՝ բառերը, առանց հաշիւի, «բարձր», «ազնուապետական» թոնով։ Հաճո՞յք։ Նանրամտութի՞ւն։ Ստորնութի՞ւն։ Ինչ հարկ կառչիլ բառերու։ Մարդիկ երբեմն մեծադործութիւնները կը բերեն հետերնին։ Ծախսելը ուրիշ բան չէ յաճախ, ինչպէս չուտել, վրան ցատիլը,— խառնուածքի հեղում։ Ցեասոյ, հիմնակա՛ն, ո՛վ էր վաստկողը։ Անիկա կը ցանէր։ Որո՞ւ։ Բայց ամէնուն։ Հանդիսպողին, հերիք է, որ վաւերական յիմար մը չրլլար ատիկա, որու՝ ընկերակցութիւնը,— սեղանակցութիւնը ու դուք կը գուշակէք հետեւութիւնը՝ զովեստը ապտեղի կամ ինքնաբուխ, չընէր գինքը ծիծաղելի։ Անոր դիւտը եղաւ «ուսումնասիրական նպատակներով», բոլորել ինքզինքը պարզ մարդերէ, երբեմն՝ կատարեալ դատարկապորտ, երբեմն՝ տախտակէն պակաս, երբեմն՝ բանի յանախորդներ, խմցնել անոնց մինչեւ որ խելքերնին, ոճերնին, ինքնատպութիւններն վազէր քիթերնուն, ու իրենց ներքինին վաւերական լուսանկարը զնէին դուրս։ Իր գրելիք վէպերուն համար ատոնք հում նիւթ ու նո՛թ կու տային։ Իրականին մէջ, ալքոլին տակ ատ մարդոց սքողուն անասնութիւնը կարկառի կը հանէր անիկա՝ իրեն միայն ծանօթ հեշտանք մը հեռապնդելով, տեսակ մը անորակելի սատիզմ, երբ Նոյեան հեղուկին — արդի քաղաքակրթութիւնը ինչ ձեւերով կը ներկայացնէր զայն — քակէր, շղթայազերծէր այդ

digitised by A.R.A.R.@

կոմիչներուն մէջ խանձարուրուած գազանը ու թափէր գետին, ինչ որ մարդկուն ողբերգութեան անկորուստ ակն ու ապրիւրն է յաւէտ։ Ի՞նչ էր իր ուզածը, երբ այդ թշուառական խլեակները, իրենց անկարող լեզուները կը բզկտէին, մեռ փրցուցածի պէս, իրենց այլերէն կտոր-կտոր քակելու համար մանեակները իրենց ցաւին, տէրտին։ Բայց այդ օրը կ'անցնէր անոր գլուխէն մեծ զուարթութեամբ։ Մարդիկ կ'ընեն բաներ, որոնց զգալանակները միշտ չեն ենթարկուիր իրենց տեսանելի մտաներուն։ Ու դուք գիտէք, թէ մեր անտեսանելի մտաները հարիւր անգամ աւելի հզօր են մեր վրայ։ Անիկա կ'ախորժէր նաեւ միւսներէն, տանկ ու նանկ մարդեր, գրաչար, վարժապետ, դրասէր, արուեստագէտցու։ Ով որ շնորհքով տարազ մը գտնէր անոր գրականութիւնը պիտակող կամ փաստը տար դայն հասկնալու, սրտանց սիրելու — անիկա հիացումը կ'ատէր իւր կիզուած նախանձ, այնքան ընթացիկ՝ դրողներու կենակցութեան մէջ — շարթ մը իրաւունք կ'ունենար ապրելու մեծատոնդ վարպետին մտերմութեանը մէջ։ Ամէն տեղ պիտի չպակսին «վարպետ» չինող այդ ցուցարները, որոնք դպրոցին մէջ կը կնուիր մուռներէն ու կը քերթեն։ Որքան եղկելի են անոնք, յաճախ հիւծախտաւոր, երբ իրենց ատանաւորները կ'ենթարկեն հրապարակի կուռքերուն ու իրենց կեանքի կամ մահուան վճիռը ապատող դատապարտեալի մը նման երկնչիկ են, հերիք է, որ Պարգեւեանի պէս մարդոց պատգոնեան հայեացքը իյնար իրենց երկունքի՞ն։ Թափանցող, արդարակորով անոր դատաստանը ծնունդ կու տար մինթիֆ էմբազի, երբ էջի մը վրայ դառնար գիր։ Զայն ունեցողը պիտի ծախէր մօրը գոհարեղէններուն վերջին փչուրն ալ ու պիտի ապէր ղրքոյկը՝ «Պարգեւեանի յառաջաբանով»։ Մեծատաղանդ գրագէտը յառաջաբանի գրականութիւն մը ստեղծած է այդ ձեւով, մա՛նաւանդ չունեցած դարաշրջանի՛ն։ Բայց շուայտութիւնը կը վայելէր անոր։ Կը լուսաւորուէր «փողփողինէջ», մեծ իր ճակատին վրայ՝ գեղանի, կանացի իր մատները լարած, երբ կը սուզուէր մօտիկ իր տաքիներուն, մօտ երկոտասնեակ մը, բոլորն ալ գրեթէ չինուած կապոյտ (Եղիա պիտի ըսէր՝ եթերայնացած), գիշացեալ անօթութեամբ մը, ուր, մեր ժամանակներու խմաստի բարիան, Պրոմեթէոսէն աւելի եղկելի իր պատուհասումին ստիպուած էր տանելու, ոնւ, լուռ, ինք իր աղտին վրայ կոթաքամակ, ամէնալու չափ իր տաղանդէն, զոր կեղը կը կրծէր, բարոյական քաղքենի խլիրդին, երբ բերան մը չոր հացի համար երբեմն վարձու կը հանէր ինքզինքը։

Տարիներո՞ւ, թէ ամբողջ իր գոյութեան մշտավառ երազ, գուցէ ապատուհի անոր մօրը արիւններէն բիւրեղ կապած անոր մէջ, ճոխութեան սա գաղո՛ւնը, որուն մղձաւանջը ամէն օր կը ծեծէր դուռը անոր հոգիին, վիրաւոր, բայց հաւատարիմ չունի մը թաթերովը, առատուն մեկնող, մութին չդարձող, նոյն խլտին,— փետտուած սի՛թաը անոր, փետտուած հաղար-հաղար ցաւերէ, ամէնէն չատ իր ցեղին անապօրոյն ապերախտութենէն, որ վատօրէն ուրանալէ յետոյ անոր հանճարը, լաւ էր զինքը հացի խրուտքին, անդին, ոսկեզօծ վառքով մը չքաւորելով հոպիանները, անտեսցուները, էշ-քշողները, լարախաղացները, բոլորն ալ տաղանդակից իրեն, առնուազն անպարար ու չոզոմոզ։ Իր հզօրագոյն ցաւերէն մէկն ալ այն նուաստացումը եղաւ, որ պարտադրուեցաւ իր ոսրպան տաղանդին, երբ տանկ ու նանկ տաքիներով, մարդիկ իր անունն ալ մօտիկը կը դը-

digitised by A.R.A.R.@

նէին այդ սողուն կենդանիներուն, որոնք փոխանակ փորի վրայ, օրինաւոր, անթերի իրենց սողը ընելու՝ ոտքի, կանգուն կը սողային։

«Հիմնախոյզ» այդ մեղրալուսնին, անիկա հոսեցուց մեռաղը, իշխանաւոր առատութեամբ, բոլոր իր սիրելիներուն եւ ասելիներուն։ Վրէժ կը լուծէր։ Սահակ Պարգեւեան, ծնունդով մակաբոյծ (անիկա այդ վերադիրը ազատեց, սրբադրեց քաղքենի ու նուաստ իր իմաստէն ու, առաջ տարաւ իր արհամարհանքը զինքը այդ դիրքէն անարդողներուն դէմ, զայն փառքով կրելու չափ։ Երանգ մը, թէեւ փոքր, բայց բաւարար, որպէսզի տիպարը չհակասէ ինքնիրեն, գոնէ իր հիմնական երեսէն։ Անիկա ունէր այն stigmateը, որով հոգիները կը դատուին հոգիներէն, ըլլալու համար ինքզինքնին, stigmateը չամբշնալուն։ Դուրս էր, այս ցուցաբարութեան մէջ, փարիսեցիներուն, ճարտարուղներուն, վաւերական սողուններուն կեղծիքէն ու կը հաւատար իր դասակարգին եւ անոր իրաւունքներուն, մ'նաւանդ մ'ը իրականութեան համար, ուր իմաստի տարբանակը ինկած է գերութեան տակ ոչ իսկ սամարացիներուն, այլ՝ փղշտացիներէն ալ վատ մարդոց, պասմայի կամ խուրտայի վաճառականներ, որոնք կը տնօրինեն մեր մտքին ամէնէն նրբին մեքենականութիւնը իրենց դարբնի խելքով։ Առիւ զատ, դուք ծանօթ էք անոր վարդապետութեան հիմնադիծերուն։ Ըստ այդ հանդանակին, քաղքենիները պիտի վառարկին ու քուծանոն զիրենք, այսինքն՝ մարդերը, որոնք ցեղերուն տունը փրկեցին ժամանակէն ու անոր հոգին կերպադրեցին։ Իր իրաւո՞ւնքն էր պահանջելու «փոր մը կուշտ» այս վայելքը։ Այնպէս որ՝ իր թշնամիները մակաբոյծ վերադիրը ի զուր ընդասեղեցին անոր համբաւին), նոյն այդ ծնունդով աշխատանքի անընդունակ, դիւթքին մէջն էր ապրիլ, շաղխուեր դեղին մեռաղին։ Բայց կը սարքերէր «անշահախնդիր», իմացական արծէքներ մուենտիկոդ» շարշիներէն՝ իր մտածումը մեծատաղանդ լրբութեամբ մը յայտարարելով ի վերայ տասնեաց։ Անշուշտ, այս սողերը մեղադրանք չեն բանաձեւեր, այլ մտայնութիւն մը կը հաստատեն, որ մեր մտաւորականները եղաւ որոշ քանակով, երբ եւրոպական մայրերու վրայ իր ցեղէն ո՛չ միայն լքուած, այլեւ «յատենի աշխարհէն» ուրացուած, մէկ կողմէն այրուելով ցեղին անմահ ցաւէն, միւս կողմէն՝ ջանաց մարդկային իր զաւածումները պատմուճանել։ Այժմեան սերունդը, ղ.խաւորաբար որբ, գոնէ տարտամ ապահովութեամբ մը, առաւ օտարութեան ճամբաները։ Ա՞ռնք, այսինքն՝ մեր յեղափոխական, վտանգաւո՛ր մտաւորականնե՞ր...։ Ուրիշի կռնակէն ապրելու զիտութիւն մը անշուշտ չի փրկուիր, ոչ իսկ Սահակ Պարգեւեանին տարանդոյը։ Այն առեն ալ, ինչպէս հիմա, կան յիմարներ, որ պիտի աշխատին «Ջորջի» նման ու իրենց վայելքի բաժինը պիտի զոհեն ցեղին խուլ, հեռաւոր ձայներուն, կարիքներուն։ Բայց նոյն բառերը չեն հաստատուն ջորիութիւնը եւ մեծախաբթամ, պատմուճանուած սինիզմը։ Ուրիշի կռնակին ապրելու իր բարձր, հրարեացակամ յօժարումը իր կողմէ նուէ՛ր կը նկատէր անիկա մեր քաղքենիին, դուք պիտէք ատիկա։ Հիմա՞։ Երբ իր վրանին տակն էր յուսուքին տապանակը։ Ու ինք իշխան մեր դպրութեան եւ «անհասանելի կամօքն Աստուծոյ» քահանայապե՛տ։ Նիւթական, բիրտ, արիւնող լրբութեամբ ու փոխ առնուած շարշարանքին խստութեամբ (մտքին ուժգին կծկումները կ'անդրադառնան մեր մարմինին եւ մեզ կ'ընեն թոյլ նիւթին մարզերուն) մը կը հարկադրէր իր հոմանին «հանելու»,

digitised by A.R.A.R.@

«բանալու» կծիկները ոսկիներուն։ Զարհուրելի էր իր պզտիկ, գոնեհիկ բարկութիւնը այդ բոպկներուն, սպասուհիական, ինչպէս դիտուց իր համանին, բայց վախցաւ բանաձեւելէ։ Ու ասիկա ամէն առտու, առաջին շաբաթէն ետքը։ Անիկա պարտուեցաւ իր միւս պահանջին դիմաց, որով տնտեսական իր դիտութիւնը ուզած էր արժեցնել, մէկ անդամէն ծախելով սնտուկը ու փոխարժէքովը գնելով շահաբեր թուղթեր։ Տիկին Դոհարեան ընդդիմացաւ, բայց վնռական։

Անգամ մը գրպանը այպէս «տոք ու լիք» զլալէ ետքը, կ'ելլէր խորխէն դուրս, «զղեցած»՝ իր մենապայծառ զուարթութիւնը, ը լալով հակոտնեան քիչ առաջուան նեղսիրտ չըՓըտին։ Անոր կը պատնար խոտիլ իր գիտցկութիւնը, ծորուն ու քաղցր իր հոգին ու, մա՛նաւանդ՝ փաղաղիչ, խրոխտաճեմ իր առնութիւնը։ Բայց նախքան հեռանալը տունէն, անիկա կը պատմուճանէր ինքզինքը թերաստուերովը իր տղանդին, այնքան աղոտ վերարկու՝ չորս պատերու մէջ։ Տուն մը ամէնէն շատ կը նեղուի առաքինութիւններէ, որոնք արձակութեանց կը վայելեն։ Տղանդը անիմաստ է մէկ յարկի ներքեւ։ Անիկա կը դարմանէր, ո՛չ թէ զթալուն, այլ իր իսկ երանդին ինկող իր համ տրտաքինոտը, տիկինին պատճառուած ցաւին, արցունքներուն խեղճ, քաղքենի, «սի՛ն» տրտմութիւնը, ձգելով անոր վրայ մէկը իր ողողիչ, մերկացնող նայուածքներէն, որոնք դիրկընդխառնում մը կը գերազանցէն երբեմն, այնքան սիրտին կը խաղտին միսերը։ Մարդխականութիւնը դիրքերու վրայ կապուելիք բան չէ միշտ, կայ անիկա կեանքին մէջ ու կայ անիկա տչքերուն խորը։ Հաչուուած, օծուն, ժպտուն, վոռէն ու գլխէն հատատարպէս պարարտ, կ'ելլէր անիկա զուրս։

Դո՞ւրսը։

Նո՛յնը, ամէն տեղ։

Անիկա արեւելքցիէն կը ջանար պահել աչքերը միայն։ Ձեւ, քաչուածք, ընտանութիւն, օտար ժողովուրդներու մէջ ինքզինքը վիրաւորիչ չընելու դիտութիւն, լեզու եւ բարեկենցաղութիւն անշուշտ օրինակուն յօդուածները չեն կրպմեր բարքերու դիրքի մը։ Անիկա կ'ըլլար անհատը այն երկրին, ուր տոք կը դնէր։ Ու կ'ըլլար տարիկա, արագ, անթերի։ Տաղանդի չքեղ, ապշեցուցիչ տուրքերէն մէկը, ամէն միջավայրի, պայմանի դիւրեկան ընտանեցումը անոր, կըրկնելով՝ անոր ընդունակութեանց ընդհանուր կշռոյթը, որով, առանց կարդալու, գրեթէ աչք պոլցնելով, խմած կ'ըլլար գիրքերուն հոգին ու քանի մը օրուայ կատարումով՝ թափանցած երկրի մը թաքուն հոսումներուն։ Այդ տուրքով է, որ, առանց տասը փաթա փատրիկու, տասը ու աւելի տարիներ անիկա դիմացաւ մայրաքաղաքներու գժպահի զոհին մէջ։ Հացկատակ, յեղափոխական, բեմախօս, խմբագիր, գրագէտ, ուսնակոզ, փոխեց անիկա հազար ձեւ, մշտապէս ինքզինքը նոր տեսնելու հաճոյքէ՞ն բանամար, թէ մշտապէս յոգնա՞ծ, կենալու, բան մը ըլլալու, ինքզինքը տանիլ չկրնալու ամօթէն տարտապուն։

Դո՞ւրս, «լիքը» գրպանով։

Աչխոյժ ու հպարտ։ Դէպքին «յուսութիւնը» բարեբաստութեան յուսութիւնը մըն է հին գարեւէն սկսեալ։ Անշուշտ ոսկիին հուրքը ոչ մէկ ժեզմութիւն, աղօտացում բերաւ դարչանքին, որ անոր հոգիին նահիճը կը յօրինէր։ Մարդիկ չատ բան կ'ըսեն անով, բայց ծնունդի սրամութիւնը կը դիմանայ մա՛նաւանդ «դեղնախտին» մէջ։ Շատ

digitised by A.R.A.R.@

գժուար պահանջ մըն է այս համանաբուծութեան պահանջը։ Տարիները անցած էին անոր մէջ ժանդի հաւասարակշռութեան մը։ Անոր հոգին կարծես կոնք մըն էր, զետեղուած խորը անոր մխեբուն, բայց՝ կոնք մը աղբի, անմերածելի ատոմութեան։ Այպէս էր ծնած։ Ու ըրաւ ոչինչ այդ ծնունդը հակակշռելու։ Մարդիկ կ'արժեն ճակատագրին դէմ իրենց հակազդեցութեան հիդրոլը։ Ամբողջ արուեստ մը, ու բարձրագոյններէն մէկը, կը մնանի այդ միակ հաստատումէն։ Հելլէն ողբերգութիւնը զեղեցիկ է այդ իսկ ճակատումը ընդունած ըլլալուն իրը խարիսխ իր եղափոխումին։ Կիսատուա՞ծ՝ Սահակ Պարգեւեանը։ Ձեմ գիտեր որոշ՝ հիները ինչ կը դնէին յղացքին խորը։ Բայց որու է ինձի ողբերգութիւնը, որ անոր տիպարը եղաւ, շատերու վրայով։ — Ոչինչէն համ չառնելու, իր նսը դերաձուն ընելէ ետքը, անոր տարբական պահանջներուն իսկ հառնելու անկարող ըզգային կամ մկանային իրենց անբաւարարութեան երեսէն, ու կեանքը ապրելու տեղ, զայն մաղմով ներկելու, մշտապէս ծամծմելու ու թքնելու մշտական կեցուա՞ծքը։ Արուեստը չօգնեց անոր։ Ան լուսաւոր իր վայրկեաններուն, առանց պատրանքի դատեց ինքզինքն ալ, իր ցեղին առհաւական վոտութեամբը վիրաւոր։ Որ չունէր տալիք մինակ արժէքէ — նկատի ունէր ազգերու մէջին արժէքները արուեստի մարգերէն — գործ մը նոյնիսկ իր ժողովուրդին։ Անիկա մխիթարանք գտաւ դարձեալ օտարներու մեծ գեղեցկութիւններէն, որոնք կը խօսէին իր ուղեղին, բայց չէին քներ սիրտը։ Ատ էր պատճառը, որ ջախջախուած հիացումով կը հանդուրժէր «Ֆաուստ»ը, զոր կը դատէր պայծառ զգայարանքով մը իրը նոր ժամանակներու ներկուած ապրանք։ Բայց անոր թատերական խեղճութենէն անկախաբար, խաղը կը սիրէր սադայէլեան մթնոլորտին համար։ Բոլոր անոնք, որ կեանքին չեն, չմեռնելու համար պարտաւոր են հեքիաթին ըլլալ։ Բոլոր անոնք, որ տրտում են, պիտի չուրախանան չիրնալուն։ Արարչութիւնը (ներեցէք հին բառին) չինած է օձը, որպէսզի մահը պտրտի անոր ականակուռ գլխովը։ Այդ էր պատճառը թերեւս, որպէսզի սիրէր հեքիաթին զերազոյն մարմնաւորիչը, աստուածային Մէֆիսթոֆելեսը, բայց հայհոյէր անհանդուրժելի, յիմար ծերունիին, որ ծիծաղելի էր մանաւանդ իր ծերութեան զգայութեամբը ու կ'ուզէր դառնալ այնքան խեղճ, անարժէք բաներու ու կը նուաստանար, աղջիկի մը համար, զոհել զիջելու նոյնիսկ իր հոգին, ամէն գարերու իմաստութեան զանակներով գեղակերտ հրաշալիք։ Արուեստագէտի հոգի՞։ ...։ Անիկա ինչո՞ւ չէր տեսներ ինչ որ սրտերը կը բանին ամէնէն չքեղ գեղօրին ալ մէջը։ Ու ինչո՞ւ կը յամառէր իր պատրանքին մէջ, մշտապէս զանազանութիւն մը դնելով ընդմէջ իր եւ ուրիշներու հոգիներուն։ Գուցէ այդ պատրանքն էր, որ հեւացուց իր զգայարանքները նոր ժամանակներու մեծագոյն կիրքէն, զանգուածին պաշտամունքէն, յեղափոխական պարունակով թափանցած արդէն մտահոգութեանցը մէջ իր սերունդին։ Այս պատրանքն էր, որ կ'արգիլէր զինքը «ռուսամնասիրական նպատակներէ դուրս», նոսել երբորդ էլան, ճամբորդել, չփոյթ խուսափելու համար ամբոխին հետ։ Իր «գեղակերտ», «աստուածաներգ», «ադամանդ» հոգին՝ նո՞յնը, սա ուեւլածուին կը-բած աղտոտ բանին հետ, որ անոր մարմնին մէջը եկը դարշանայ ու անհաղո՞րդ է հացէ, ալքոլէ, կնիկէ զատ ուրիշ ամէն յուզումի։ Իր, ի՛ր, ի՞ր հոգին։ Ու կը հայհոյէր յիմար ծերունիին։ Ի՞նչ ապա-

digitised by A.R.A.R.@

կի, թիթեղ մատնի մը խակ պիտի չտար, չէր տուած — վկայ իր ոնգեալը — ամէնէն բիւրեղ, ամէնէն ազամանդ աղջկան մը հոգիին։

Գրպանէն՝ դեղին յուսութքը կը ճառագայթէր դէպի ամբողջութիւնը անոր անձին, կնճռոտ, ծալուր, դժպհի մատերուն մէջ խակ փոխագրելով իր համբաւին թեթեւութիւնը, զայն դնելով շողշողուն, պճլտուն, կծու, քաղցրօրէն հաճելի, փնտուուած ու յարգալիր։ Տարիներով, ժանդոտ ու զալիր արհամարհանքէն վերջը (որ անոր աշխերուն երկրորդ կերպը, ղէմքը, մարմնառութիւնը — առաջինը ոմի եկաւ կիներու աչխարհէն — ու նոյնացաւ դիմակի նման անոր անուանին, արտասանուած առանն խակ դիմագիծերը փոթելով լսողին ու ընթերցողին հաւասարապէս) սժգոյն անոր դէմքը վերջապէս դառաւ փախընտրեալ պայծառութիւն մը, հերկելու չափ անոր մռայլ, մարդախոյս խառնուածքին ընդհանուր գոյնը, որ կը քարեխառնուէր, կ'աղուորնար, նոյն այդ դեղնութեան պարունակէն, ողողելու չափ իր շրջապատը։ Դրամը կ'ընէ այս կարդէն այլայլումներ։ Մշտապէս ինքնախոյզ՝ անիկա չփախցուց փոքրագոյն ծուէններն խակ իր ներքին աչխարհին։ Այդ դրամի օրերուն անիկա ոչ-նուազ զարմանքով հաստատեց իր մէջ այլութիւն մը։ Անիկա ինքզինքը պարպուած զգաց պայծառ միւս մասնայատկութիւններէն — կիները տպաւորող անվրէպ իր հմայքէն — որմէ պատմուճանուած էր անիկա որքա՞ն առնէ ի վեր։ Անծանօթ է ձեզի ուրիշ մէկ երկունքը, թատերական մարզէն, «Տոն ժուան» վերնագրուած, որուն վերջին տարին վարագոյրի տեսարանը գրած էր մտովի, ամբողջ ու վերջնական, եւ ուր իր սերունդէն վերցուած տիպարի մը մէջ ան զետեղեր էր ինքզինքը, տարիներէ հալածական, մաղերէն հերմակ, բայց սիրտէն Ֆաուսթ, ունեցած կիներուն յիշատակովը հարուստ, հաստատ յառաջանալով դէպի նուանումը պարմանուհիի մը, ինկած իր ճառագայթումին մէջ, տպաւորուած անոր անմրմդ շնորհէն, բայց ազատած ինքզինքը օգնութե՞մբը քանամենի տղու մը, պարզ միսի կտոր, որ երեւցեր ու առանց գիտնալու տապալեր էր պատրանքին ոտաքները, աղջիկը քշելով դուրս այդ ծերութիւններէն ու տանելով տարիքին դարաստանները։ Տեսարանին տպաւորիչ յուզումը անիկա կ'ապրէր խոր անձկութեամբ, ինք՝ որ ինքզինքը վեր կը կարծէր ծերութենէն, այսինքն՝ ժամանակէն ու միջոցէն։ Պատճա՞ռը էր վրիպանքին։ Որո՞շ։ Ու պիտի լար Տոն ժուանը դիակներուն խակ վրայ այն կիներուն, որոնք այդ եղերական պահուն պիտի անցնէին անոր մոքին էջրանէն, ինչպէս սինեմայէ, ու նայէին պիտի իրեն, խոր ու պարզ, ամէն մէկը շինելով անոր վաւերական մէկ պահը, տարբեր՝ գործէ՛ն, բայց նոյն՝ կատէ՛ն։ Վարագոյրը պիտի իջնէր ծերացած գրաչէտին վերայ, ինչպէս քաղցր պատանք մը, որով անիկա կ'ազատէր իր զգայարանքները ընդմիշտ, աղէն ու փոթորիկէն կիներու աչխարհին։ Այս խաղին յղացքը ունէր անիկա տակաւին երիտասարդ։ Կ'այցելէր անիկա անոր ուղեղին ամէն անգամ, որ կին փոխէր։ Ու հաստատ հաւատրով կը սպասէր ծերութեան՝ զայն արժանաւոր արուեստով ու վաւերական կատարելութեամբ անմահացնելու համար։ Հիմա՛։ Երբ ունէր դրամ։ Երբ ունէր տարիք։

Այդ վայելքի ու արձակութեան օրերուն անիկա ինքզինքը հեռու դտաւ կիներէն։ Անիկա այնքան անակնկալ էր, որ չվրիպեցաւ շրջապատէն անգամ։ Նուրբ վերլուծող, փորձեց բացատրել այս տարօրինակութիւնը իւրայատուկ իմաստութեամբ։ Կիները կը դագրէին

digitised by A.R.A.R.@

իրմով տասրուելէ ու չէր դիտեր, թէ ինքն էր դադրեցը անոնցմէ։ Թափանցելու համար առեղծուածին, անիկա տրամաբանեց պարզ, հաղթող, կողմնակալ, ինչոյէս միշտ ու բաւ.

— Դրամը, էլլր կին սլիտի բերէ, գիտի բերէ անոր կեղծը, անարժէքը։ Ու չէր խորհեր, թէ այս զառիթափէն, մոռծման այս տարբերը զատորոշիչն էր իր իսկ գոյութեան, երբ սեռերը լրջուէին, այլինքն՝ բերուածը ըլլար այր։ Ի՞նչ էր արժէքը, ի վերջոյ, դրամով գնուած այրերուն։ Ցնոյ եղաւ աւելի իմաստուն։ «Ինչեցուց առաղասանիրը», ոչ ամչուչտ նուտահանդիստ մանողի անտարբերութիւնամբ, ու դրաւ մէկդի վրիպած մարդու իր ժանդահար հոգեբանութիւնը։ Ամէն բանի մէջ նուաստ — անոր համար կամենալը հոմազոր էր հիւանդոտուլուն — անիկա զարմաւ աւելի պարզ, տապակ մտածումներու։ Առայժմ դրամը վայելքի կահաւորակ մըն էր, ու այն փոքր, սովորական, ամէնուն բաւող վայելքներուն, որոնք զբաղեցան անոր օրերուն։ Կտոք նստելու, անապատակ՝ չոգենաւ մը տանելու, նոյնիսկ աւելի համեստանակ՝ ինք իր գլխուն ծախսել կրնալու ճշմիտ, բայց անմահ ամենչանքները, որոնք մտքով հարուստ ու միջոցով քիչ մարդոց ողբերգութիւնը կը կազմեն, երբ պակսին։ Նուա՞ղ վայելք, կի՛նը, կիներբ.

— Տառապանք տառապանաց...

Բացագանչութիւնը պատմական է իր բերանէն. ժողովրդին նման ու նանրամտութեան հետ չի չփոթուիր այս անկեղծ ցայտքը անոր դառնագոյն փորձառութեանց։ Այսպէս գալու անոր պատմանիրէն կը գեղչեմ սովորականները, դասականները, ինչ որ տառոնդական ու անապահով կեանքին նուէրն է մեր ջիղերուն եւ ինչ որ արուեստին ճամբով կը դիզուի նման տիպարներուն հոգեդաշտին, ու կու տամ ինչ որ իրը եղաւ բացառաբար։ Զոր ծածկեց խնամքով, ամօթէ՞ն, թէ անկէ վեր անծուկէ մը ճգմուած, բայց անկեղծ, արցունքի իր պահերուն զգալի բրաւ քանի մը սիրածներուն, աւելի ճիշդը՝ անոնցմէ մէկուն, իր անիրաւ, անկանգնելի կործանումին մէջ փըրկել փորձելով իր անարգուած հպարտութիւնը, իր անունին հետ կապուած հոգեբանական հրէշայնութիւնը, ու թերեւս թեթեւնալ ուզելով իր իսկ մտածէն։ Միշտ հացի համար, հետեւաբար՝ խուլ զզուանքով մը մտած ծոցը կիներուն, անիկա ի վերջոյ գայն, սեռային վայելքը անկիտակցաբար նոյնացուց տարապարհակի, դէրութեան աւարքի, շահագործուող արարածին հոգեկան նուաստութեան։ Ցնոյ ձեղի ծանօթ է ամայութիւնը անոր օրերն, սիրել չկրնալու երկնապատիժ իր դժբախտութիւնը։ Ատելութեան այս աղեղն էր, որ գլնքը կ'ընէր դրեթէ անանական, խոշտանգող, սպառող ու քայքայող, կիներու մարմինին վրայ, որոնք, ո՞վ զարհուրանքը աշխարհի բաներուն, այդ չարշարանքը կը կրէին անհուն հանոյքով։ Ո՞վ երկրկիմութիւնը մեր զգայարանքներուն, որոնք իրենք զիրենք պիտի ուզղեն իբարու անծանօթ ասեղնելէ եւ հակադիր զառիթափեր, որ մէկը արիւնին մէջ պիտի գովանայ, ուրիշ մը՝ սերմին։ Այդ ատելութիւնն էր, որ զայն ըրաւ բարբարոս, մա՛նաւանդ սեռէն դուրս, հանդէպ իր ընկերներուն ու գրական հրապարակին, կործանելով վանտալի ախորժակներով ու այդ առաքելութեան մէջ ընդունելով անիմաստ իր գոյութեան վրիպած մէկ իմաստը գոնէ։ Ինքզինքը ըլլալու այս տարօրինակ, դժբախտ ձեւն էր գուցէ պատճառ, որ անոր անունին կապուին արտառոյ, ասատուածային քաղցրութեամբ աղջիկ-

digitised by A.R.A.R.@

ներ, բոլորն ալ մեղր ու շաքար, հոգի ու պատկեր։ Աղջիկները ոչ ոքի կը հարցնեն իրենց սիրտին պատգամները։ Անոնց ողբերգութի՛ւնը՝ երբ խոր, վեր, անհասց տարփանքով մը պարուրեցին անոր գպայարանքները, ուզեցին իր նայուածքը, շունչը, գոլը, բայց մերժեցին դժգոհ, վայրագ, եկեղեցաբիթ իր տեսը ու զայն կառավարելու, գոնէ իրենց եթերայնութեան հասնելու իրենց ճիգին մէջ եղան չիմար, այսինքն՝ քաշուեցան վար, անոր ճահիճէն։

— Ինկո՞ղ հրեշտակնե՛ր,— կը հեգնէր անիկա, այդ աղջիկներուն եզկեր յուսաբարութիւնը, յանձնարարելով անոնց կարդալ ու հասկնալ Ա. տը Վինչի Եկուան։ Ու քալեց իր բանին։ Տառապանք առառպանաց։ Անշուշտ։ Մա՛նաւանդ չկրնալ տառապելու դը-ժոխային չորութեան մէջ, որ երաշտի ամիսներու նման երբեմն կը բռնէր անոր հոգին։ Անիկա կը լայնէր զանոնք ու ինք անկարող էր արցունքի, յուզուելու, գոնէ խորուելու, մարդկային չբլլալու գեղազանց գրկանքէն կատաղի ու վատ։

ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ

(Շար. 7)

digitised by A.R.A.R.@



Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

ՀԱՄԱՍՏԵՂ ԵՒ ԹՈԹՈՎԵՆՑ

— ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՒ ՀԵՌԱՑՈՂ ԳԻԾԵՐ —

Զարմանալի են դրողներու ճակատագիրն ու կտրած ուղին եւ զարմանալի են այն կապերը, որոնք կ'երկարին դրողներու միջեւ — կը հեռանան, կը նմանին յաճախ, բաղդատական հետաքրքրական եզրեր կը ստեղծեն, նոյն տաղնապներուն կամ հարցերուն նկատմամբ՝ տարբեր հակադրեցութիւններ ու մօտեցումի անկիւններ եւ այլ բաղում զուգակցումներ կը բերեն։

Իսկ ինչո՞ւ Համաստեղ եւ Թոթովենց։

Հայ նոր արձակի այս երկու վարպետներուն ժառանգութիւնը կ'արժէ բաղդատել մէկէ աւելի պատճառներով։ Հայրենի բնաշխարհի նոյն շրջանին՝ Խարբերդի այս երկու զաւակները կը մեծնան գրեթէ նոյն ժամանակաշրջանին, կ'ուսանին նոյն վաստակաւորին՝ Թլկատինցիի շունչին տակ, իրենց հայրենակիցներէն շատերուն պէս կը դաղթեն Միացեալ Նահանգներ, ուրկէ կը բժշնուին իրենց ուղիներն ու գրական հետաքրքրութիւնները։

Վահան Թոթովենց կամաւորներու հետ կը մեկնի հայրենիք եւ աւելի ուշ, Միացեալ Նահանգներ նոր երթուղարձէ մը ետք, կը մնայ Խորհրդային Հայաստան եւ զոհ կ'երթայ ստալինեան ախուր լուծարքին, իսկ Համաստեղ կը մնայ Ամերիկա, հայրենիք կորսնցուցած մարդու կացութեամբ։

Սակայն, վերջին հաշուով, Թլկատինցիի երկու աշակերտներու ստեղծագործութիւններուն լաւագոյն էջերը կը բերեն այն աշխարհը, զոր կը ճանչնան եւ որ կ'նայ իրենց արեան ու յիշողութեան ոլորտներուն, եւ յատակ, խիտ գիծերով ու կենդանի գոյներով կը պատկերանայ իրենց գրականութեան մէջ։

Ինչպէս նշեցինք, Համաստեղի եւ Թոթովենցի միջեւ առաջին զուգահեռը կու գայ երկուքին ծննդավայրէն՝ Խարբերդէն, որ սոսկ կենսագրական առեւալ չի մնար, կը կազմէ երկուքին հասարակաց ենթահողը, այսինքն՝ ա՛յն աշխարհը, ուր կ'ուսանին, կը կազմաւորուին եւ կը ծանօթանան շրջանի տիպարներուն ու բարքերուն։

digitised by A.R.A.R.@

Համասեղ ծնած է Խարբերդի Փերչենճ գիւղը, 1895ին, իսկ Թոթովենց՝ Խարբերդի Մեզիրէի շրջանը, հին հռոմէական ճամբուն վրայ, 1894ին։ Այս վերջինին ծննդեան թուականը (1894) ընդունելու պարագան կը հիմնաւորուի իր ինքնակենսագրականին վրայ, սակայն այլուր յիշուած այլ թուական մը՝ 1889ը, աւելի տրամաբանական կը թուի, մեկնելով քանի մը փաստերէ կամ ենթադրութիւններէ։

Առաջին՝ Թոթովենց իր առաջին բանաստեղծութիւնը կը տպէ Զմիւռնիոյ «Արեւելեան մամուլ»ին մէջ, 1907ին, եւ 13 տարեկան պատանի մը պիտի ըլլար, եթէ 1894ը ընդունինք իբրեւ ծննդեան թուական։

Երկրորդ՝ Թոթովենց 1908ին, Սահմանադրութենէն ետք, կ'անցնի Գուլիս եւ Ցունատանի ու Փարիզի ճամբով՝ Միացեալ Նահանգներ, ճամբորդութիւն մը, զոր դժուար է պատկերացնել 14–15 տարեկան պատանի մը համար։

Թոթովենց եւ Համասեղ կ'ուսանին Մեզիրէի կեդրոնական վարժարանին մէջ։ Աւելի ուշ, երկուքն ալ պիտի ընդունին Զարդարեանի եւ, մա'նաւանդ՝ Թլկատինցիի ազդեցութիւնը իրենց կազմաւորումին վրայ։ Եւ երկուքն ալ իրենց գրական ասպարէզը պիտի սկսին... բանաստեղծութեամբ։ Այսպէս, հայրենի բնաշխարհն ու Թլկատինցին կը դառնան կոչմաւորման հիմնական տուեալներ։ Իսկ իրենց Մեզիրէի կեդրոնական վարժարանը յաճախելու պարագան չահեկան է նաեւ Թոթովենցի վերը արծարծուած ծննդեան թուականին առընչութեամբ։ Եթէ Թոթովենց ծնած ըլլար 1894ին, երկուքը տարեկիցներ կամ հաւանաբար դասընկերներ պիտի ըլլային եւ Թոթովենցի դէպի Ամերիկա կատարած երկու ճամբորդութիւններուն ու կեցութեան՝ իրբեւ համաքաղաքացիներ, դասընկերներ կամ դպրոցական ծանօթներ եւ գիր ու գրականութեամբ չահագրգռուած մարդիկ, այս կամ այն մեւի կապ կամ նամակագրութիւն պիտի ը լար երկուքին միջեւ։ Սակայն նման յարաբերութեան մը մասին որեւէ տեղ որեւէ յիշատակութիւն ծանօթ չէ առնուազն մեզի։ Իսկ այս բոլոր ենթադրութիւնները Թոթովենցի ծննդեան թուականը 1889ը կը տանին։

Կենսագրական տուեալներու մասին այս սեղմ տողերը պարզապէս կ'արձանագրենք ու կ'անցնինք։

Համասեղի եւ Թոթովենցի միջեւ բաղդատութիւնը կը կեդրոնանայ որոշ թեմաներու զարգացումին մէջ։ Թեմաներ, որոնք, խորքին մէջ, իրենց ծննդավայրի կենցաղային առօրեայէն ծնունդ կ'առնեն կամ ամերիկեան փորձառութենէն, որովհետեւ իրենց ծննդավայրէն ետք, երկուքն ալ գաղթական հայերու նոյն շրջանակը պիտի ճանչնան Միացեալ Նահանգներու մէջ եւ ամերիկեան նոյն ընկերութիւնը։ Սակայն պիտի տեսնենք, որ ամերիկեան շրջապատին ու տիպարներուն կապուած իրենց մօտեցումը ամբողջութեամբ պիտի տարբերի եւ պիտի զարգանայ այլ գիտանկիւններէ։

Այս շրջանին՝ Թոթովենց, անկախ իր բանաստեղծութիւններէն, կը հրատարակէ «Տօնօն» (վիպակ՝ Թիֆլիս, 1917), «Հայաստանի Տոն Քիշոթը» (կ. Գուլիս, 1921) եւ «Պատմուածքներ» (կ. Գուլիս եւ Գոսթրն, 1921), որոնք արեւմտահայերէնով գրած անոր ստեղծագործութիւններն են։

«Պատմուածքներ»ը դրուագներ կամ պատկերներ են, որոնք չահեկան են զլխաւորաբար այն իմաստով, որ կը ներկայացնեն կարգ մը դրուագներ կամ տիպարներ, որոնց աւելի ուշ պիտի հանդիպինք «Կեանքը հին հռովմէական ճանապարհի վրայ» գործին մէջ։ Տուեալ երկու գործերուն պարզ բաղդատութիւնն իսկ կը նշէ Թոթովենցի արձակին հակայաքայլ զարգացումը։

Փոքր փակագիծ մը բանալով այս առթիւ մեր, «Կեանքը հին հռով-

digitised by A.R.A.R.@

մէկական ճանապարհին վրայ»ի հետ բաղդատութիւն մը կատարելով՝ կը գըտնենք հետեւեալները — «Հօ՛, հօ՛, հօ՛...»ի մէջ կը հանդիպինք այն գէպքին, ուր Խարբերդի բողոքական համայնքի անդամները զոհ կ'երթան օտար կրօնաւորի մը խաղերուն. կը սկսին «հոգին սուրբը» առնել, աշխատանքի չնչթալ եւ այս պատճառով ընտանեկան պատակտումներ կ'առաջանան եւ ամբողջ ընտանիքներ կը սկսին քայքայուիլ։ «Ազգին բարերարի գերեզմանը» պատմուածքին մէջ կը հանդիպինք Մեսրուպ աղային, որ, հետզհետէ մտային հաւասարակշռութիւնը կորսնցնելով՝ այլեւս ձեռքը գրպաններէն դուրս չի հաներ։ «Դուն իմ գործիս մի՛ խառնուիր» պատմուածքին մէջ կը տեսնենք նոյն Մանուկ Փեսան, որուն գրագումն է գիշերով նոր թաղուած թուրք մեռելներուն պատանքը գողնալ եւ ծախել...։ Իսկ «Մայրս նախամօր մասին» պատմուածքին մէջ կը հանդիպինք հեղինակին մօրը, որ հարսին իր առանձին մեկնաբանութիւնը կու տայ դրախտի Եւային ու կիներուն մասին՝ ընդհանրապէս։

Ցիշեալ գործերը կարելի չէ պատմուածք կոչել, անոնք նոյնիսկ գեղարուեստական ծրագիր կամ յստակ յղացք չունին, սակայն նախանձիքերը կամ սկզբնաղբիւրները կը բերեն հեղինակին «Կեանքը հին հռովմէական»ին, ուր կը վերածուին կենցաղային ու տիպարային կենդանի խճանկարի։

Սակայն այս շարքին մէջ կ'իյնայ «Ամերիկա գացող հարսնցուն» անուն պատմուածքը, որուն եղելութիւնները կամ հանգոյցը չատ նման է 1923ին հրատարակուած Համաստեղի «Վարդանը» պատմուածքին։

Նմանութիւնը պարզապէս թեմաթիք է եւ ազդեցութիւններ չի նշեր։ Կը վերաբերի այն ժիջին տարիքի գաղթական տղոց, որոնք Ամերիկա տարիներով աշխատելէ ետք, կ'ենթարկուին ամուսնանալու յանախանքի մը։

Համաստեղի հերոսը՝ Վարդան, ճաղատ, ժիջին տարիքի այն գաղթական հայն է, որուն հարս ճարելու բոլոր միջոցները կը սպառին Ամերիկայի մէջ եւ, բարեկամներու խորհուրդով, իրեւ վերջին միջոց, կը նախաձեռնէ Գոլիս ճամբորդութեան մը, հոնկէ հարս բերելու համար։ Միջնորդի մը միջոցաւ կը հանդիպի Վարդուհիին, կը համաձայնին եւ արագօրէն Ամերիկա կը վերադառնան, իրենց հետ առնելով նաեւ Վարդուհիի «եղբայրը»։ Անշուշտ, Ամերիկա հասնելէ ետք, Վարդուհին ու եղբայրը՝ Գիգոն, կ'անհետանան, երկտող մը ձդելէ ետք, ուր կը յայտնեն, որ ամուսիններ են...։ Եւ ի յայտ կու գայ, որ բոլոր հանդիպումները բեմադրուած խաղեր եղած են՝ Վարդանը չահագործելու։ Նոյն կացութիւնն է Թոթովենցի «Ամերիկա գացող հարսնցու»ին պարագային, ուր տարիքը առած նպարավաճառ Սահակ աղան, նամակագրութեամբ կը ծանօթանայ եւ Ամերիկա բերել կու տայ Մաքրուհին եւ անոր եղբայրը՝ Գեղամը։ Պատմուածքի աւարտին կրկին ի յայտ կու գայ, որ Մաքրուհի եւ Գեղամ պարզապէս Սահակ աղան միջոց դործածած են Ամերիկա հասնելու, որովհետեւ Գեղամ մանկութենէն որդեգրուած է քրոջ ընտանիքին կողմէ, զիրար կը սիրեն եւ, բնականաբար, Գոլոյ բարքերը չեն կրնար ուրանալ նման ամուսնութիւն մը։

Վերջ ի վերջոյ նոյն ցաւն կը տառապի Խարբերդէն գաղթած Տօնօն, որ սիրային խաստով զօրաւոր տաղնապ մը անցուցած է արդէն իր հայրենի քաղաքին մէջ, իսկ Ամերիկա հասնելէ ետք, այլեւս ճաղատ, ամուսնութեան մասին կը սկսի խորհիլ։ Աւելի ուշ՝ Տօնօն Հայաստան կը մեկնի կամաւորներուն հետ, հայրենիքի պաշտպանութեան համար զինուորագրուելու։ Սակայն Տօնօն առանձին հարցեր ունի, որոնց կ'անդրադառնանք աւելի ուշ։

Կենցաղային տարբեր թեմա մը, ուր երկու տարաբնոյ արձակագիրները կը հանդիպին, աղաւնիներու եւ աղաւնի թռցնողներու պարագան է, որ երկուքին ալ առանձին ուշադրութիւնը կը գրաւէ։

Համաստեղի «Աղաւնիները» առաջին անգամ լոյս կը տեսնէ «Հայրենիք»

digitised by A.R.A.R.@

ամսագրի 1923 Հոկտեմբերի համարին մէջ, իսկ Թոթովենց այս նիւթը նախ կ'արծարծէ «Կեանքը հին հռովմէական»ի մէջ (1933), որուն վերջին գլուխներէն մէկը կը կազմէ ազատի թոցնող Ակոբի տառապանքը: Տարի մը ետք, հեղինակը զարգացնելով այս պատմութիւնը, կը հրատարակէ առանձին գրքոյկով՝ «Աղաւնիներ» խորագրով:

Աղաւնի թոցնողներու նկատմամբ ժխտական վերաբերումը ծնունդ կ'առնէ անոնց շրջապատէն, այսինքն՝ այն ընկերութեան կեցուածքէ է, ուր երկու գրողները կազմաւորուած են: Աղաւնիներուն հետ առընչուող ենթական կամ ենթակաները ընկերային արագ անկում կ'արձանագրէն եւ դէպքերու հոլովոյթը կը վերջանայ ողբերգութեամբ: Իսկ այս երեք յատկանիշները կը գտնենք երկու համանուն գործերուն մէջ:

Պէտք է նշել, որ Հմմատեղի «Աղաւնիները»՝ շուրջ 28–29 էջ իր ծաւալով, հեղինակին ամէնէն երկար պատմուածքներէն մէկը կը կազմէ, ինչ որ յոյց կու տայ հարցը ամբողջութեամբ քննելու եւ քանի մը անկիւններէ զարգացնելու հեղինակին բծախնդիր մօտեցումը: Այսպէս, Թորիկ Օվանի տան՝ Խաչիկ, կ'որուչ Մանոնի եւ Աղաճանի նման ազատի թոցնող ըլլալ. հօր եւ մօր բոլոր ճիգերը ի դերեւ կ'ելլեն՝ զինք իր մտադրութենէն հրաժարեցնել տալու: Խաչիկ աղաւնիներ կ'առնէ Մանոնէն, որոնց դիմաց իրենց արտէն ցորեն գողնալով կը հատուցանէ: Խաչիկի եղբայրը, որուն ուսերուն կ'իյնայ դաշտային աշխատանքի բեռը, եղելութիւնը իմանալով եւ եղբօր գրաղումին պատճառով՝ ատելանարար կը բաժնուի տունէն, ինչ որ պատճառ կը դառնայ Թորիկ Օվանի տան քայքայման:

Այս խմաստով՝ ընկերային վերաբերումն ու այս թակարդին մէջ բռնուած Թորիկ Օվանի հոգեվիճակը բաւական յատակօրէն կը գծագրուի.

«Թորիկ Օվանի մէջքը կարծես աւելի ծռած էր: Շտկէ շիտակ մարդու նման չէր կրնար նայիլ: Իրեն այնպէս կը թուէր, թէ բոլոր մարդիկ իրմէ նրան կը դարձնեն, որովհետեւ իր տղան Մանոնի ու Աղաճանի պէս ադուրնիկ խոզցրեց է նրանց» (էջ 180):

Եւ անշուշտ պատումը կ'աւարտի ողբերգութեամբ, որովհետեւ ծախուած աղաւնիներէն կապուտակի պատճառաւ Խաչիկի եւ Մանոնի յարաբերութիւնները կը վատթարանան եւ կը հասնին այնպիսի՛ կէտի մը, որ այս վերջինը դանակոծելով կը սպաննէ Խաչիկը:

Խորքին մէջ, ընկերային խմաստով աղաւնիներու նկատմամբ ժխտական վերաբերումը կը բխի նման կրքոտ վէճերէն ու արիւնոտ կռիւներէն, որոնք, ինչպէս այս պարագային, ողբերգական կացութիւններու կրնան յանգիլ, ինչ որ աղաւնի հետ զբաղումը, անկախ այս թռչուններուն նկատմամբ բարի տրամադրութիւններէն, դէջ եւ նոյնիսկ ողբերգական նշան կը նկատուի:

Թոթովենց նոյն տուեալները կը զարգացնէ տարբեր ուղղութեամբ: Իր գլխաւոր տիպարը՝ Ակոբ, աղաւնի թոցնող է եւ նոյն ատեն սափրիչ, սակայն աղաւնիներուն նկատմամբ ունեցած մոլութեան պատճառաւ չի կրնար իր գործին հետեւիլ:

«Կեանքը հին հռովմէական»ի մէջ ծանօթ կացութիւն է: Ակոբ, աղաւնի խաղցնող ըլլալով՝ յարգանք չի վայելեր, իսկ իր միակ աղջկան մեծնալը երկրնտրանքի մէջ կը ձգէ զինք — կա՛մ պէտք է հրաժարի իր սիրելի աղաւնիներէն (որովհետեւ ոչ ոք պիտի ուզէ աղաւնի թոցնող մարդու մը աղջկան հետ ամուսնանալ) եւ կամ՝ աղջկան ճակատագրին պատճառ պիտի դառնայ...

Թոթովենց նոր տուեալ մը կը մտցնէ հանդոյցին մէջ, երբ 1934ին առանձին կը հրատարակէ «Աղաւնիներ»ը: Ինչպէս «Պատմուածքներ»ու փոքրաւութիւնէն տեսանք, Թոթովենց սովորութիւն ունի իր սրտին մօտ թեմա-

digitised by A.R.A.R.@

ները զարգացնելու եւ նոր շրջադիծի մը մէջ ներկայացնելու։ Այս պարագային՝ թէքսթին ամբողջութիւնը, նկարագրութիւններով ու խօսակցութիւններով, գրեթէ անփոփոխ կը պահուի։ Անոնց վրայ բաժիններ կ'աւելցնան։ Ներմուծուող նորութիւնը Հաճի Թումայի տղուն պարագան է, որ, քաղաքէն վերադառնալով՝ կը սիրահարի աղաւնի Թոցնող Ակոբի աղջկան՝ Էլլոյին։ Անշուշտ ստեղծուած նոր հանգոյցը քիչ մը արուեստական կը թուի, սակայն յաջող ներմուծում մըն է, որ առիթ կը ստեղծէ նոր հարցադրումներու։

«Արան հրապակաւ զգիստով, օգայած օձիքով եւ թիւնոցով» (էջ 26) Ստամբուլէն հասնող այն նոր հոսանքը կամ մտայնութիւնը կը բերէ, որ չի կաշկանդուիր գիւղի կամ գիւղաքաղաքի բարքերով ու սովորութիւններով։

Հաճի Թումա կը զգայ, որ իր տղուն ոգին կը վնասէ իր վարկին եւ ընկերային դիրքին։ Եւ հոս է, որ երեւան կու գան ընկերային արժէքներու հակասութիւններն ու յաճախ սնանկութիւնը։ Հաճի Թումա, որ իր հարստութիւնը դիպած է վաչխատութեամբ եւ չհագցուցմով՝ կը յարգուի ընկերութեան կողմէ, իսկ իր տղուն անկեղծ զգացումները Ակոբի աղջկան նկատմամբ՝ կը նկատուի այպանելի, անընդունելի։ Եւ հաւանաբար այս հակասութիւնը կ'ուզէ չեչտել Թոթովենց, Աբայի տիպարը մէջտեղ նետելով։ Եւ կրկին հարցը կը վերջանայ ողբերգութեամբ, որովհետեւ հոգեկան ճնշումի եւ անորոշութեան դիմաց, Էլլօ անհանգստանալով կը մահանայ։

Տուեալ ընկերային սուր եզրը, որ առկայ է Թոթովենցի հայաստանեան ստեղծագործութիւններուն մէջ, հիմնական տարբերութիւնը կը դնէ՝ ե՛ւ Համաստեղի նոյնանուն գործէն, ե՛ւ իր առաջին շրջանի ստեղծագործութիւններէն։

Այլ թեմա մը, որուն կապը անմիջապէս կամ ուղղակի ձեւով կարելի չէ տեսնել երկուքին մէջ՝ պարագան է այն երիտասարդին, որուն հետաքրքրութիւնները գործնական իմաստով «պիտանի» չեն նկատուիր ընկերութեան կողմէ, սակայն այդ ոգոց հետաքրքրութիւնները, վերջին հաշուով, փոփոխութեան կամ զարգացումի աղդակ կը դառնան։

Այս իմաստով՝ Թոթովենց երկու տարբեր տիպարներ կը բերէ։

Առաջինը՝ Փալանճի Գրիգորի որդեգրած Թորիկն է, որ միամիտ է, բարի եւ առաւելաբար կ'երազէ կամ կենդանիներով կը հետաքրքրուի։ Թորիկ իր պարզամտութեան ու ասպարէզին համար յարգ չի վայելեր ընկերութեան կողմէ եւ ոչ ոք իրեն աղջիկ կու տայ։ Իսկ վիպակի վերջաւորութեան՝ Թորիկի ամուսնութիւնը պոռնկատան մէջ հանդիպած Անժէլին հետ, ընկերային հասկացողութիւններուն եւ շրջապատի կեղծ բարոյականին ուրուած հարուածի մը կը վերածուի։

Երկրորդ տիպարը Ցովնաթանն է, «Ցովնաթան որդի Երեմիայի» վիպակին հերոսը, ուր կը տեսնենք Ցովնաթանը, որ իր հայրերուն պարզ բրուտագործութենէն և աղիւսներէն անդին կ'երթայ եւ կը սկսի կաւէ արձաններ քանդակել, որոնք օգտակար կամ շահաբեր չեն նկատուիր հօրեղբայրներուն կողմէ։ Կարգ մը դէպքերէ ետք, Ցովնաթան ստիպուած կ'ըլլայ մերժել շրջապատի կեղծ բարոյականը եւ մեկնիլ։ Ցովնաթան կը վերադառնայ տարիներ ետք, ենթադրաբար Իտալիայէն, ուր հանդիպած է մեծ վարպետներու գործերուն։ Ցովնաթան կու գայ՝ մաղերուն մէջ ոսկեայ թելեր, կը քնակի քրոջ տունը եւ կը սկսի քանդակել, սակայն իր արձանները ընդունելի չեն նկատուիր շրջապատին եւ չեն համապատասխաններ տեղական պահանջներուն, ինչ որ զինք աստիճանական մեկուսացումի եւ հալածանքի կ'ենթարկէ։ Մահէն ետք միայն, յեղափոխութիւնն ու ապստամբած ամբոխները դուրս կը բերեն հալածուած ու մոռցուած արուեստագէտին քանդակները, որոնք առաջին ըմբոստութիւնը հանդիսացած էին ընկերային կարգ ու սար-

digitised by A.R.A.R.@

ին հանդէպ եւ իր «Զգաստութիւն» արձանին տակ կը գրեն՝ Ցովնաթան որդի Երեմիայի։

Համաստեղի «Մակաբի տղան Մարգարը» այս թեմային մէկ այլ հոլովոյթը կը բերէ։ Համեստագործ Մակաբի տղան՝ Մարգար խառնուածքով քանաստեղծ է եւ հօրմէն ժառանգած արեւելեան տակ երազելու ունակութիւնը։ Սակայն մինչ Մակաբի հորիզոնը հոն կը վերջանայ եւ կամ կը սահմանափակուի՝ տղան ուսանած եւ եկեղեցիին մէջ Աւետարան կարդալը պատկերացընելով, Մարգար կը շարունակէ իր ընթերցումներն ու կը զարգացնէ իր ներքին աշխարհը։

Մարգար յուսախաբ կ'ընէ հայրը, երբ դպրոցէն վերադարձին չի կրնար եկեղեցիին մէջ լու Աւետարան կարդալ, որովհետեւ իր մտքին մէջ ուրիշ բաներ կը տողանցեն...։ Հետեւաբար, Մակաբի փայփայած տարիներու երազը՝ Տիրացու Գեւոյին դաս մը տալու՝ փորը կը մնայ։ Մարգար փայլուն չէ նաեւ հաշիւներու մէջ։ Ուրեմն՝ իր ուսումն ու հետաքրքրութիւնները այն գործնական գիտութիւնները չեն, որոնք շրջապատի մէջ «օգտակար» կրնան ըլլալ եւ վարկ ապահովել։ Ուրեմն արդիւնքներէն դժգոհ, Մակաբ պարտքի տակ կը մտնէ՝ տղան Ամերիկա դրկելու համար։

Դրամին առաքման ուշացումը Ամերիկայէն՝ Մակաբի երազները կը վերածէ յանախանքի, սակայն պատմուածքը կը վերջանայ հօր համար անակնկալով մը, որովհետեւ Մարգար նամակով մը կը դրկէ պարտք վերցուած 25 ոսկին, ինչ որ կը նշանակէ, թէ Մարգար իր շրջապատին մէջ ենթադրուած ալպիտանի երիտասարդը չէ վերջին հաշուով եւ իր ուսումն ու ներքին աշխարհը կրնայ ե՛ւ պիտանի ըլլալ, ե՛ւ տարբեր հեռանկարներ հետապնդել։

Թէ՛ Թոթովենցի եւ թէ Համաստեղի տիպարներու մէջ մասը այս ներքին, ինքնաբուխ միամտութիւնն ու բարութիւնը կը բերեն, որ անյարիր է շրջապատի մթնոլորտին։

Ինչպէս կը տեսնենք, նոյնիսկ երբ թեմաներու իմաստով Համաստեղ եւ Թոթովենց կը հանդիպին, երեւան կու գայ յստակ տարբերութիւն մը, որ կը բխի իրենց մօտեցումներէն։ Թոթովենցի ընկերային հետաքրքրութեան եզրը հիմնական տարբերիչը կը մնայ այս առընչութեամբ։

Սակայն այս հարցին չանցած, կարդ մը երեւոյթներ պէտք է տրապօրէն քննարկել կամ թուել։

Մինչեւ 1921 երկարող Թոթովենցի գրականութիւնը, որ արեւմտահայերէնով մշակուած ստեղծագործութիւն է, ոչինչ ունի ուշագրաւ յղացքային, ոճային կամ բովանդակային իմաստով։ «Պատմուածքներ»ը (1921), որոնց անդրադարձանք, իր հայրենի շրջապատէն կամ Ամերիկայէն տիպարներ կամ կացութիւններ բերելով հանդերձ՝ հազիւ «Վեսաեֆը հին եռովմէական»ի որոշ գլուխներուն տեւաբութիւնը կը յիշեցնէ։ «Ցօնոց» ժարող տիպակ մըն է, ուր կը տեսնենք, որ ոլորդամիտ տիպարին անկարելի սիրահարութիւնը մտային ու ֆիզիքական քայքայումի կ'առաջնորդէ զինք, իսկ հայրենիքի համար տարած պայքարն ու զոհողութիւնները կը վերակազմուորեն իր հոգեկան ու մտային աշխարհը։ Դժբախտաբար, հայրենիքի մէջ, գաղթականներու շարքին Ցօնոյի հանդիպումը՝ Խարբերդէն սիրած աղջկան հետ, իր հոգեկան ապաքինման վրայ ժխտական անդրադարձ կ'ունենայ եւ զինք վերջնականապէս կը խորտակէ։ «Ցօնոց» (1917) լեղուական կամ ոճական առանձնայատկութիւններ չի բերեր, չի յաջողիր նուաճել իր հերոսին հոգեկան աշխարհը եւ կրնայ շատ մասնակիօրէն շահեկան ըլլալ՝ Ամերիկայէն եկած կարգ մը կամաւորներու առօրեային կամ կացութեան դծով։ Եւ յանախ ընթերցողը

digitised by A.R.A.R.@

հարց կու տայ, թէ ինչո՞ւ գրուած է «Տօնօն»։ Այլ գործ մը՝ «Հայաստանի Տոն Քիշոթը» (1921) եւս, գեղարուեստական արժէք չի ներկայացներ։

Ինչպէս ըսինք, այս գործերուն մէջ Թոթովենցի արձակը մասնաւորող յատկութիւնները չենք տեսներ, նաեւ դժուար է իր ընկերային յարաբերութիւններու բացայայտման մօտեցումը տեսնել, կամ՝ նման գիտակցութեան մը հետքերը...։ Նման բան չկայ, այլ ամէնէն նախնական խմաստով իրապաշտութիւն մը, որ կը փորձէ կարելի հաւատաստութեամբ ներկայացնել հարցերը։

Միւս կողմէ սակայն, հակառակ նոյնանման ենթահողին, Համաստեղի գեղարուեստական կազմուածքը շատ արագ կ'ընթանայ։ 1920ին, Նիւ Եորքի մէջ, Շերմանզադէին հանդիպելէ ետք, որ իր իսկ խոստովանութեամբ վճռական դեր կ'ունենայ արձակի նկատմամբ իր կողմնորոշումին մէջ («Մեր հանդիպումը պատճառ դարձաւ, որ ես վար իջնէի ոլորտանդէն ու ինքզինքս գետնի վրայ գտնէի» — «Երկեր, Ա.», էջ ժե) կը տեսնենք, որ «Հայրենիք» ամսագրի առաջին թիւին մէջ լոյս կը տեսնէ «Զալոն» (1922, Նոյեմբեր), ապա «Վարդան»ն ու մէյ մէյ պատմուածքները։ Փաստօրէն, 1922էն 1927 յաջորդաբար լոյս կը տեսնէն «Գիւղը» եւ «Անձրեւ» անուն պատմուածքներու հատորները։ «Զալոն»էն սկսեալ՝ Համաստեղ պատմուածքի իր յղացքը ունի, իր աւիւարհն ու տիպարները եւ իր ծանօթ մակարդակը նուաճած է, տատանումներ չ'ապրիր — ինչ գնահատում ալ կատարենք Համաստեղի պատմուածքին։ Այսինքն՝ Թոթովենցի նման երկար հոլովոյթ չարժանապրեր ինքզինք դանելու համար։

Համաստեղի պատմուածքը ինքնին տմբողջութիւն մըն է այս շրջանին։ Ներբ կը կարդանք Տափան Մարդարի նկարագրութիւնը, որ խորքին մէջ գիւղի խրտուիլակներէն մէկուն նկարագրութիւնը կը թուի, խսկոյն կը զգանք, որ անիկա առաւելաբար կը կազմուի բնութեան տարրերուն հետ բազդատութեան եղրերով։ Կարծէք կը տեսնենք այն աշխարհը, ուր մարդը բնութեան, դամէշներուն ու արտերուն հետ միաձուլուած է. այսինքն՝ կրկին գարուն է եւ Տափան Մարգար դամէշներուն հետ դաշտ կ'ելլէ, որոնք «իրենց փնջաձեւերը կը լայնցնէին, թեթեւ փոթորիկի պէս ալեցնող հովերն ամբողջութեամբ կը շնչէին, եղջիւրներով թումբեր կը փորէին» (էջ 15)։

Յետագայն ունինք պատմուածք մը, ուր գործողութիւններ չկան, պարզապէս տեղի կ'ունենայ դէպք մը (եթէ կարելի է դէպք կոչել) կամ պատահար մը, որ շատ բնական կը թուի, կարծէք միմիայն այդպէս կրնար ըլլալ եւ ղլխաւոր տիպարին մէկ հարազատ դրսեւորումը կը բերէ։ Այսպէս, յիշեալ պատմուածքին մէջ՝

«Թթենու ճամբուն վրայ, Տափան Մարգար կայծակէն զարնուած էր։

«Թթենու ճամբուն վրայ, գամէշները գոյգ, քարայրներու մուք բերանները վրայ ահաւոր, ինկած էին անկենդան։

«Մէկին եղջիւրը կոտրած էր, միւսի՝ գետնին մէջ խրած։ Անոնց ճիշդ հետեւ, կաղնիի մը պէս շրջուած էր Տափան Մարգարը» (էջ 17)։

Զարմանալի չի թուիր, որ Մարգար գամէշներուն հետ զարնուի կայծակէն եւ միմիայն կայծակէն, այսինքն՝ բնութեան մէկ տարերքէն, որուն մէկ մասնիկն է, ինչպէս եւ զարմանալի չի թուիր, որ կայծակնահար Տափան Մարգարը, մեռնելէ առաջ չի հարցներ կիներ կամ մէկ այլ հարազատը եւ կը խօսի... գամէշներէն ու կէս մնացած արտին մասին։

Իսկ երբ 1927ին, «Հայրենիք» ամսագրի Ապրիլի թիւին մէջ լոյս կը տեսնէ Համաստեղի «Զրոյց շուքի մը ետեւ» գործը, կը տեսնենք, որ ան հա-

digitised by A.R.A.R.@

մասնակերի մը մէջ առած է այն երկրին ամբողջութիւնը, ուր իր ստեղծագործութիւնը կը շարժի։ Հոն են գիւղը, կամուրջը, եկեղեցին, Սբ. Մարգիսի քարը. տիպարները՝ վարպետ սերմնացան Հովկուլ Կիրոն, Թեթէ Կարսն, կամուրջներ շինող Ուստա Անտոնը, Տէր Մարուքին աղջիկը, «որ աշխարհի էն գեղեցիկ աղջիկն էր», Տատան Մարգարը եւ բազմաթիւ ուրիշներ...։ Հոն է ամայացած գիւղը, ծնողներուն մեռելները, գանկերը եւ ինք՝ այդ աշխարհը կորսնցուցած մարդը, որ «ցեղին որբեր»էն մէկն է այլեւս։

Տուեալ աշխարհի այսքան յստակ պատկերացումն է հաւանաբար, իր այս լայն տեսադաշտով, որ համատեղի տիպարներն ու տեսադաշտը կինդանի կը դարձնէ, իսկ հեղինակը՝ ըսելիքին ծանօթ։

1929ին լոյս կը տեսնէ Թոթովենցի «Ամերիկա» պատմուածքներու հաւաքածոն (Երեւան), զոր կարդացած ենք իր «Երկեր»ուն մէջ (1957)։ Անկասկած որ Թոթովենցի արձակը շատ աւելի հասուն է այստեղ, քան նախորդ գործերուն մէջ, բայց նաեւ ծրագրային եւ արուեստական արձակի մը տպաւորութիւնը կը ձգէ։ Հրատարակման թուականը խօսուն է անշուշտ, որովհետեւ կ'իմանայ Հայաստանի խորհրդայնացման առաջին տասնամեակին մէջ, ուր հակակայսերապաշտ դաղափարական–քարոզչական պայքարը «դրական» առաջնահերթութիւններու շարքին մէջ է։ Ընկերային (նոյնիսկ որոշ չափով դասակարգային) դիրքորոշումը հոս է, որ գլխաւորաբար կը դրսեւորուի Թոթովենցի գրականութեան մէջ։ Սակայն, կը կրկնենք, պատմուածքները ծրագրային եւ բաւական յաջող կերպով մշակուած ըլլալով հանդերձ՝ տիպարներու տեղ կը բերեն տիպեր (type) եւ կանխատրամադրուած մօտեցումներ։ Թոթովենցի Ամերիկան այն աշխարհն է միայն, ուր սեւամորթներ իբրեւ ստրուկ կը շահագործուին, մարդիկ կ'այլասերին, աղջիկներ խաբուելով՝ պոռնիկներու եւ ապա միսիոնարներու կը վերածուին եւ բախտախնդիրներ կը հարստանան։ Ինչպէս կը տեսնենք, յոռի երեւոյթները թանձր գոյներով կը ներկայացուին եւ առաւելաբար քարոզչական մտահոգութիւններ տեղ կը գրաւեն հոն։ Բնականաբար, հոս ոչ թէ կը հերքուին որոշ երեւոյթներ (որոնց մասին ոչինչ կը խօսէր Թոթովենց իր 1921ի «Պատմուածքներ»ուն կամ ամերիկեան փորձառութեան մէջ)՝ այլ՝ Թոմերու, Մէյրիներու, Կերարուդներու, Իզաակլեաններու կամ Ասատուրներու ողբերգութեան մէջ, տիպարներու եւ կացութիւններու ամբողջութիւնը կը պահանջենք, իբրեւ մարդկային գոյութենական կացութիւններ կամ մարդկային ողբերգութիւններ։

Համատեղ եւս յանախ նման կացութիւններու կը մօտենայ, սակայն առանց կանխատրամադրութիւններու կամ դաղափարական մտահոգութիւններու, ինչ որ աւելի կենդանի կը դարձնէ իր տիպարները։

«Պաւրիկը» պատմուածքին մէջ, փոքրիկ Հելէնան զոհ մը է ընկերային անարդարութեան, որովհետեւ հայրը՝ ձուլարաններ կամ 14րդ փոզոցի նաւահանգիստը աշխատող բանուոր Թոմմասը, հակառակ իր տքնեալ աշխատանքին, անհրաժեշտ նուազագոյն կենսամակարդակն իսկ չի կրնար ապահովել իր աղջկան։ Իսկ «Աղջկայ մը յուշերէն» պատմուածքին մէջ նման այլ զոհի մը կը հանդիպինք եւ կը տեսնենք աղջիկ մը, որ կը պատմէ նեւթական անձուկ կացութեան հետեւանքով հօր բարոյական տայթաքումին ու սպանութեան մասին։

Ամերիկեան փորձառութեան մէկ բոլորովին տարբեր երեսը կը բերէ կար Մոն, գաղթական այն հայը, որ գործարանին մէջ կ'երազէ կորսնցուցած աշխարհը, եղեռն ու այդինները եւ, այդ երազանքներուն մէջ ինք–

digitised by A.R.A.R.@

դինք մոռցած՝ մեքենային լծակներուն ու անիւներուն մէջ իյնալով կը մահանայ։

Վերջ ի վերջոյ, Ամերիկան բազմազգեան գաղթականներու երկիրն է, իսկ Ամուլի հոգեվիճակը՝ ուրէք գոյգթականի հոգեվիճակը։ Եւ թելադրականօրէն մեքենան է, որ Նոր Աշխարհին մէջ կը քանդէ մարդն ու անոր երազը, ինչ որ համամարդկային եղբ մը կու տայ Կար Ամուլի կացութեան կամ ողբերգութեան։

Ինչպէս կը տեսնենք, իր փորձառութիւններու ծիրին մէջ, Թոթովենցի պէս, Համաստեղ եւս պատրաստ է ներկայացնելու Միացեալ Նահանգներու տխուր կողմերը կամ ամերիկացի քաղաքացիին հարցերը, ոսկայն առանց դաղափարական կանխաարամադրութիւններու։ Պէտք չէ մոռնալ, որ Համաստեղ չա՛տ աւելի ծանօթ է ամերիկեան շրջապատին, մա՛նաւանդ՝ քաղաքական եւ երեսնական թուականներու անտեսական տագնապին ստեղծած անգործութեան եւ ընդհանուր հոգեվիճակին, սակայն իր տիպարները կու գան իրրեւ առեւալ ժամանակաշրջանի գոհերը, եւ ոչ՝ իբրեւ քարոզչական շրջագիծի մէջ շարժող խամաճիկներ։

Ա՛յս եւ Համաստեղի գրականութեան առումով առանձին տեղ կը գրաւէ «Հրեայ բարեկամս» անուն պատմուածքը, որ ցոյց կու տայ հեղինակին հիմնական մօտեցումը, որ կը կեդրոնանայ տիպարին կամ անոր խառնուածքին վրայ։ Պատմող ենթական (որովհետեւ պատումը կ'ընթանայ առաջին դէմքով) հրեայ Մարիս Սթըրնին կը հանդիպի Հարվըրտի իրիկնային դարձնթացքներու ատեն, ուր միասին փիլիսոփայութիւն կ'ուսանին։

Մարիս, ըստ իրեն, համոզուած ընկերվարական է. կը խօսի Ատամ Սմիթէն, Մարքսի «Քապիթալ»էն, շահագործումներէն. կը հաւատայ, որ իրեն տուիթ չեն տար արտայայտուելու, Մայիս 1 բանուորական ցոյցերու կազմակերպման կը մասնակցի, եւայլն։

Գործի բերումով՝ պատմող տիպարը կը պատրաստուի Նիւ Եորք մեկնիլ եւ հոն աշխատիլ։ 15 տարի ետք, երբ կը յաջողի Պոսթըն վերադառնալ, իր առաջին գործերէն մէկը կ'ըլլայ հրեաներու թաղամասը երթալ՝ Մարիսը պտտելու համար։ 15 տարիներու ընթացքին գրեթէ ոչինչ փոխուած է.

«Այդ տարիներուն չֆաւորութիւնը ուելի շատցաւ, մեքենաները աւելի ուժեղացան։ Չֆաւորութեան հետ շատցաւ արտադրութիւնը։ Գործարանները դուրս թափուած էին բանակները թշուառ պարտուողներուն» (էջ 79)։

Վերջ ի վերջոյ, կարելի կ'ըլլայ գտնել Մարիսը, սակայն ան այլեւս մոռցած է իր անցեալի գաղափարները եւ Պոսթընի առաջնակարգ հագուստեղէնի վաճառատուներէն մէկը ունի։ Մարիս կը ճանչնայ իր նախկին բարեկամը, սակայն իր առաջին գործը կ'ըլլայ ուռուրդի գրուած վերարկու մը ծախել չփոթհար ու չչմած ընկերոջ։ Նաեւ ընկերոջ հացէն կ'ուզէ... վաճառքներու ծանուցումները դրկելու համար։

Ինչպէս տեսնուեցաւ հոս, Համաստեղ ընդհանրապէս կը փորձէ կեդրոնանալ տիպարի խառնուածքին ու հոգեբանութեան վրայ, չեշտը կը դնէ մարդո՛ւն վրայ, մինչդեռ Թոթովենցի սեւեռումը, անկախ քարոզչական կամ գաղափարական նախադրեալներէ, կը կեդրոնանայ ընկերային կառոյցին վրայ։ Մինչեւ մօտեցումները կ'ընդլայնէ անոնց գեղարուեստական տարբերութիւնը։

Ինչպէս նշեցինք, Համաստեղի պատմուածքը իր յղացքը գտած էր առաջին իսկ օրէն, իսկ աւելի ուշ, երեսնական թուականներէն ետք լոյս տեսած արձակի այլ փորձերը ընդհանրապէս նահանջ կ'արձանագրեն։

Ճիշդ հակառակը կը պատահի Թոթովենցի պարագային։ Երեսնական

digitised by A.R.A.R.@

Թուականներէն ետք յստակ հոլովոյթ մը կ՝ապրի Թոթովենցի արձակը եւ յաջորդաբար լոյս կը տեսնէն՝ «Կեանքը ինն հռովմէական ճանապարհին վրայ» (1933), «Ցովնաթան սրդի երեմիայի» (1934) եւ «Բաց կապոյտ ծաղիկներ»ը (1935), որոնք հասուն եւ կենդանի արձակ մը կը բերեն հայ գրականութեան (հասկնալի է, որ ոչ մէկ տեղ չանդրադառնալով Թոթովենցի «Բազուկ» եւ «Հրկիզուած թղթեր» գործերուն, դանոնք այս շարքին՝ իրագործումներուն մէջ չենք դասեր)։

Այստեղ, Թոթովենցի արձակին երկու հիմնական առաջադրանքները՝ անցեալն ու ընկերային հանդոյցը կը միաձուլուին եւ համատեղ կեցութեամբ երեւան կու գան։

Եւ ճիշդ այստեղ է, որ անկախ գրական խիստ կամ ճշգրիտ հասկացութիւններէ, Թոթովենցի եւ Համատեղի արձակը ձեւով մը կը վերահանդիպին։

Բացատրենք։

Վերջին հաշուով ի՞նչ կը բերէ համատեղեան պատմուածքը։ Համատեղի աշխարհը բիւրեղացած դոյներով երկիր մըն է, որ կենդանի կերպով կը շնչէ եւ երբեմն այն տպաւորութիւնը կ՝ունենանք, որ տեղ մը, այդ աշխարհը տակաւին կա՛յ, կ՝ապրի։ Համատեղ կը կենդանացնէ այդ երկիրը իր տիպարներով, բարքերով, շնչաւոր ու անշունչ տարրերով։

Թոթովենցի հետ նոյնը կը պատահի երեսնական Թուականներուն։ «Կեանքը ինն հռովմէական»ի եւ «Բաց կապոյտ ծաղիկներ»ու մէջ հեղինակը կ՝երթայ իր ժանկութեան եւ պատանեկութեան աշխարհը վերազտնելու եւ վերակենդանացնելու։ Իր մօտ եւս կարծէք գիծերն ու գոյները այլեւս խառնուած ու մաքրուած են, աւելորդ մանրամասնութիւններ կորսուած, ուրիշներ՝ շեշտուած եւ մնացած են, մնացած է ինչ որ հիմնական է ու խօսուն։

Տարբերութիւնը այն է, որ աշխարհագրական նոյն շրջանին մէջ շարժելով հանդերձ (Խարբերդ), մէկը կը բերէ գիւղը, միւսը՝ քաղաքը կամ գիւղաքաղաքը։

Ըսենք, որ Թոթովենց հոս այլեւս հաւասարակշռած է իր գրական երկու մտահոգութիւնները, որովհետեւ այդ աշխարհի ամբողջութեան ներկայացման հետ մէկտեղ՝ հեղինակը կը յաջողի հարցադրել ընկերային արժէքներն ու բարոյականը — հիմնականօրէն «Բաց կապոյտ ծաղիկներ»ուն մէջ։ Եթէ «Կեանքը ինն հռովմէական ճանապարհին վրայ» խճանկար մըն է, որ «քնարական» որոշ շունչով, նոյնիսկ հիւմորով, մեկնելով հեղինակին տուն՝ հօրմէն, մօրմէն կամ եղբայրներէն, օրակ առ օրակ դուրս կու գայ, կը տարածուի այդ աշխարհին մէջ եւ կը նուաճէ զայն։

«Ընելիքդի այս յստակ պատկերացումը հեղինակը ընդհանրութիւններէն դուրս կը բերէ եւ կը տանի տիպարներու հոգեբանութեան ու կացութեան վրայ, քանի մը խիտ տողերու մէջ ամբողջ բնաւորութիւններ բացայայտելով։ օրինակ՝

«Հայրս յամառ արիստոկրատ էր։

Մայրս՝ յամառ դեմոկրատ։

Մինչեւ վերջ էլ հայրս չկարողացաւ հաշտուել մօրս դեմոկրատիզմի եւ մայրս էլ՝ հօրս արիստոկրատիզմի հետ։

Մայրս գիտէր, որ հայրս Ստամբուլում «դոստ» ունի։ Բայց այս մասին մօրս սիրտը խաղաղ էր։

Դա թխում էր ոչ թէ նրա անտարբերութիւնից դէպի ամուսինը, այլ խոյսխոսք սիրուց։ Սիրելով նրան՝ սիրում էր եւ նրա յանցանքը» (էջ 22)։

Հոգեվիճակ մը կամ աշխարհ մը, որ յաճախ դժուար է հասկնալ կամ ընդունիլ, սակայն ինքն իր մէջ այնտեղ կը մնայ, իրաւ է եւ ամբողջական։

digitised by A.R.A.R.@

Եւ իրաւամբ, ինչպէս Միլիոնները կամ Տափան Մարգարները ամբողջ աշխարհ մը կը բերեն, Թոթովենցի Մանուկ Փեսաները, ոսկի ակռաներով էշ Օմանիէսները, խենթերը, բախտախնդիր ճէյբսպները, մոխրակոյտի Ալի-ները, Թուրք դրացիները կամ կողովով բոզ տանող Նշան ապտները կրկին ամ-բողջական, նոյնիսկ աւելի բարդ աշխարհ մը կը բերեն։ Իսկ այդ դիւղաքա-ղաքին մէջ կու գայ Թորիկը՝ իր պարզամտութեամբ իսկ չրջանի բարքերը հարցադրելու եւ նոյն ատեն պատկերը ամբողջացնելու։

Ե՛ւ Համատեղ, Ե՛ւ Թոթովենց, երբ մէկը կը բերէ Հայաստանի մէկ աշխարհամասին գիւղը, միւսը՝ գիւղաքաղաքը, յատկօրէն մեծ սէր ու կա-րօտ (nosta'gia) *կը դնեն իրենց տողերուն մէջ։ Այդ աշխարհը կու գայ կեն-դանի կերպով, ինչպէս տեղ մը պիտի մնար տակաւին եւ կը «պատմուի» որոշ խտացումով, լոյսով եւ նոյնիսկ քնարականութեամբ, եւ այդ աշխարհի պատ-կերացումն կամ այդ աշխարհի նկատմամբ իրենց հաւատարմութեան մէջ է, որ հիմնականօրէն կը հանդիպին Թլկատինցիի երկու ուսանողները։*

ՑԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Համատեղ, «Երկեր, Ա. — Գիւղը եւ Անձրեւ», 1966
«Գաչն Նազար եւ 13 պատմուածքներ», 1955
Վ. Թոթովենց, «Պատմուածքներ», 1921
«Երկեր», 1957
«Ազատիներ», 1966
«Տօնօն», *թերթօն* «Զարթօնք» *օրաթերթի*։

digitised by A.R.A.R.@

Ի. ՄԱԼՑԵՎ

ՄԻՋԱԿԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՍԿՈՒԹԵԱՆ ՉԱՓԱՆԻՇԸ

Վիկտոր Աստաֆիեւը սրտառուչ եւ մանրամասնօրէն պատմում է իր կեանքի մասին՝ իր բազմամեայ կոթողային «Վերջին խոնարհութիւն» երկում: Պատմում է սիբիրեան գիւղում ապրած մանկութեան մասին, որը համընկել է ճիշդ կոլեկտիւացմանը, բայց կոլեկտիւացման մասին ոչ մի խօսք չկայ, ոչ մի խօսք միլիոնաւոր ռուս գեղջուկների մասին, որոնք այդ ժամանակ մեռնելու էին քչուել այն նոյն ենիսէյեան ճահճուտները, որոնց մերձակայքում ապրել է Աստաֆիեւը: Նա միայն խուլ կերպով յիշատակում է գիւղին վիճակուած սարսափելի սովի մասին: Իսկ քէ ինչից էր սովը եւ արդեօք միայն նրանց գիւղո՞ւմ էր այդպէս, — այդ մասին լռութիւն է տիրում: Նոյնքան խուլ կերպով («Թագաւոր-ձկան» մէջ) նա խօսք է բացում «հողի հանդէպ գիւղացիների բարբարոսական վերաբերմունքի» մասին, բայց տեղնուտեղը լռում: Ինչի՞ց էր նման վերաբերմունքը: Ինչո՞ւ է գեղջուկը դադարել հողը սիրելուց: Նաեւ ընութի՛ւնը: Եւ նա ոչ մի անգամ, կեանքը Սիբիրում ապրելով եւ այնտեղ ծայրէծայր ճամբորդելով, չի յիշատակում ճամբարների պահակային աշտարակների ու արդելագօտիների մասին, որոնք սիբիրեան քնանկարի անփոփոխ ատրրոգէլիներն են կազմում: Իսկ երբ պատմում է սիբիրեան կայարանում վագոններ կցողի իր աշխատանքի եւ այն մասին, թէ ինչպիսի՛ գնացքներ էին անցնում իրենց երկաթուղային ծայրուղիով, ոչ մի խօսք չկայ տարիքներին լուսաբանիներ ունեցող եւ վերջին վագոնները ցանցապատուած այն սարսափելի գնացքաշարքերի մասին, որոնք ամէն օր գընո՛ւմ ու գնո՛ւմ էին այդ ճանապարհով՝ միլիոնաւոր դժբախտներով: Իր դիտողունակութեամբ ու մանրամասնութիւնների սրատեսութեամբ, ուրիշի տառապանքի հանդէպ ունեցած իր սուր զգայնութեամբ՝ ինչպիսի՜ էշեր կարող էր նա պարզեւել:

Աստաֆիեւն իր բոլոր հզօրքերն ուղղում է պատերազմին: Բայց չէ՞ որ կոլեկտիւացումից աւելի շատ են զոհուել, քան պատերազմում, չխօսելով արդէն ճամբարների մասին: Եւ պատերազմը չէ՛, որ լրջել է ամբողջ ռուսական կեանքը ու այն դարձրել պղտոր մղձաւանջ: Նա շատ բառերով ու մանրամասնօրէն պատմում է այն ամէնի մասին, ինչ որ իրեն վիճակուել է իմանալ կեանքում, միայն թէ ո՛չ իր եւ բոլորիս փորձի հանդուցային դրուագների մասին: Այդ յամառ լռութեան մէջ նոյնիսկ մի տեսակ մարտահրաւէր է զգացւում: «Այդ բանների մասին կա՛մ ամէն ինչ, կամ էլ ոչինչ», — գիտակցութեամբ ակնարկում է նա իր գրքի վերջում: Ցամենայնդէպս, դա աւելի՛ ազնիւ վերաբերմունք է, քան Աբրամովի ողեւերային ճամբարներն ու նրա կատակերգութիւնները՝ անձնագրային կարգի մասին:

Նաեւ Շուկշինն է շատ լաւ, քանի դեռ նկարագրում է անտառում գայլերի հանդիպելը, կամ կնոջ դաւաճանութիւնը, կամ էլ որդու մահը. այդ ամէնը՝ մի ինչ-որ վերացական շրջանակի մէջ, չգիտես որտեղ ու երբ կատարուած: Բայց

digitised by A.R.A.R.@

նա հաղիւ մտնում է ընկերային միջավայր եւ ջանում մանրամասնութիւններով ճշդել ժամանակն ու տեղը, — անմիջապէս երեւան է գալիս անճշդութիւնը։

Եթէ գիւղացիները խնդիրներից թաքնւում են բանահիւսութեան մէջ, ապա դա ա՛յլ կերպ է անում Տրիֆոնովը, նա մտնում է «մտերմութիւն», մասնաւոր կեանք ու հոգեբանութիւն։ Բայց ինչպէս որ Բաբաեւսկու մօտ իր ժամանակ կային հնարովի կոլանտեսականներ, հնարովի բերքեր եւ հնարովի երջանկութիւն, այնպէս էլ Տրիֆոնովի մօտ կան հնարովի հոգեբանութիւն, հնարովի բախումներ եւ հնարովի տառապանքներ։ Փոխւել են միայն երանդապնակի գոյները, բայց մեթոդը մնում է՝ իրականութեան փոխարինումը կեղծ-իրականութեամբ։ Իրականում բնաւ դրանով չեն ապրում այսօր ռուս մարդիկ, այդ մասին չեն խօսում, այդպէս չեն խօսում, դրանից չէ որ տառապում են։ «Ցունը գետափին» վէպում Տրիֆոնովը պատմում է ստալինեան ժամանակի մասին, բայց մենք այնտեղ զուր կը փնտռենք այդ ժամանակի բոլորիս ծանօթ նշանները։ Ինչպէս Տարկովսկու «Հայելի» ֆիլմում։ Յօսել Ստալինի օրոք անած սերընդի պատանեկութեան մասին՝ եւ ո՛չ միայն ցոյց չտալ այն, ինչ որ ձեւաւորել ու այլանդակել է մանկական հոգիները, երկար ժամանակով, թերեւս էլ ընդմիշտ, որոշել մարդկանց բնաւորութիւնը, այլեւ՝ նոյնիսկ ոչ մի տեղ չփախել Մեծ Առաջնորդի լուսանկարը։ Դրա փոխարէն Տարկովսկին ցոյց է տալիս մեզ... Մաօ Ցզէ Դունին։ Ինչպէս այն պուարճապատումի մէջ.— «Մի բաժակ ջուր՝ օշարակով։ Օշարակ չկա՞յ։ Եւ վեթարարնուելիք մանրադրամ Է՞լ չկայ։ Դէ՛հ, այն ժամանակ տուէք չորս բաժակ մաքուր ջուր»։

Բայց եթէ Տրիֆոնովի «Ցունը գետափին»-ի մէջ դէթ կար մթնոլորտի նըման մի բան, թէկուզ եւ շատ թոյլ ու հեռաւոր, բայց այնուամենայնիւ, ստալինեան ժամանակաշրջանի մթնոլորտը յիշեցնող, ապա նրա «Մերունին» այլ բան չէ, քան վէպի արտաքին տեսք։ Ինչպէս որ նեխած ընկոյզի կեղեւը տեսքով կարծես թէ ընկոյզ է, իսկ եթէ սեղմես՝ ներսը սոսկ դատարկութիւն է։ Ես ասում եմ «վէպի արտաքին տեսք», որովհետեւ ձեւական բոլոր նշաններով այդ երկը կոչւած է լինելու արդի ռուս գրականութեան նշանակալի իրադարձութիւն։ Իրականում, դրքի հերոսը հին բոլշեւիկ է, մեն-մենակ իր խղճի ու յուշերի հետ։ Արդիւնքների հանրագումար՝ մօտեցող մահուան առջեւ։ Նիւթն իսկապէս գրաւիչ է, — ի՞նչ պէտք է մտածի այն մարդը, որն իրեն ամբողջովին նուիրել է կուսակցութեանը, այն կուսակցութեանը, որն իրագործել է բոլոր յեղափոխութիւններից ամենաարմատականը, սկսել է վերափոխել մեծ երկիրը՝ նոր երջանիկ հասարակութիւն կառուցելու «գիտական» դեղատոմսին լիովին համապատասխան եւ, ի վերջոյ, երջանիկ ու արդար հասարակութեան փոխարէն՝ կառուցել է զօրանոցային մռայլ պետութիւն, առանց լոյսի ու օդի, առանց ազատութեան, առանց շարժման ու կեանքի։ Այդ մարդը, եթէ նա դեռեւս իրեն բոլշեւիկ է զգում, ի՞նչ արդարացումներ պիտի տայ իր կուսակցութեան թափած արեան ծովերին, նրա կատարած բռնութիւններին ու ոճրագործութիւններին, այն ամէն ու խաբէութեանը, որոնց դիմել է նա՝ իր նպատակներին հասնելու համար եւ, վերջապէս, ինքնաբնաջնջման արարքին, որի հետեւանքով նա զրկւել է գոյութիւն ունենալ իբրեւ քաղաքական կուսակցութիւն եւ վերածուել է տիրապետութեան ու հարկադրանքի բիւրոկրատական, խիստ նուիրապետական ապարատի։ Ինչպիսի՞ տարակուսանքներ ու զղջումներ են նրան վիճակուել յաղթահարելու։ Ինչպիսի՞ հարցեր են ծագել նրա ուղեղում ու, թերեւս, այնպէս էլ պատասխան չստացել։ Դրաւիչ նիւթ՝ արուեստագէտի համար, հակայական հեռանկարներ։ Բայց ի՞նչ է ստացուել Տրիֆոնովի մօտ։ Դատարկութիւն, բոլոր հարցերի մասին խնամատուութիւն։ Գարգապէս ինչ-որ հոգեբանական դիտարկումներ մեռնող ծերունու վրայ, որը չգիտես ինչու բոլշեւիկ է կոչ-

digitised by A.R.A.R.@

ված։ Առանց հենց այդ հոգեբանականութիւնը անայնպէսդիտական է։ Գրուանից եւ Ջոյից յետոյ այդպէս գրեն արդէն ամօթաւոր է։

Իսկական կրքերի եւ տառապանքների փոխարէն՝ շինծու կրքեր։ Դատարկութիւնը որեւէ բանով լցնելու համար Ֆրիֆոնովին վիճակուել է նոյնիսկ գիմել իրեն ոչ յատուկ մելոդրամատիզմի (սէրը Ասիայի նկատմամբ)։

Նման մի բան ենք տեսնում նաեւ Տենդրեակովի մօտ։ Նա եւս Տրիֆոնովի նման մեծ նիւթերի հակում ունի, բայց, ինչպէս եւ Տրիֆոնովը, նա սոսկ դոփում է շուրջը։ Տենդրեակովին չգիտես ինչու գրաւում է կրօնական վերածնութեան եւրոպայի արդի նուաստանում։ Հազիւ թէ հարկ լինի բաւերը մսխել ու ապացուցել բոլորին յայտնի բաները։ Թէ ինչ գան է ժամանակակից ռուսական կրօնական վերածնունդը՝ գիտեն բոլորը։ Թէ դա ռուս հասարակական գիտակցութեան խարբերի ինչպիսի կարեւոր տեղաշարժերի մասին է վկայում՝ նոյնպէս հասկանալի է բոլորին։ Միայն թէ՝ ո՛չ Տենդրեակովին։ Նրա գրքերում այդ երեւոյթը ներկայանում է ինչպէս ծուռ հայելում, անճանաչելիութեան հասնող խեղաթիւրուած գծերով։ Այդ իմաստով յատկապէս բնորոշ է, թերեւս, նրա վերջին՝ «Խաչարում» վիպակը։ Քրիստոնեայ քարոզիչն այստեղ ներկայացուած է իբրեւ խաբեբայ եւ անբան։ Հնդամին Տենդրեակովը ձեւացնում է, թէ իբր իրեն ոչինչ յայտնի չէ ԽՍՀՄ-ում հաւատացեալներին հալածելու եւ կրօնական քարոզչութեան համար ճամբարներում նստած նման քարոզիչների մասին։ Աւելի՛ն. նա նոյնիսկ ձեւացնում է, որ չգիտի պորտաբոյծների վերաբերեալ խորհրդային օրէնք գոյութիւն ունենալու մասին։ Որովհետեւ եթէ այդպիսի օրէնքի մասին ինչի՛ զանբանն անմիջապէս հերոս կը գտնոյ կամ, յամենայնդէպս, նահատակ։ Զէ՞ որ մեծ անձնազոհութիւն է նպակասար՝ հաբկապիր աշխատանքի ու հանրապարապիր անասունածութեան երկրում աշխատանքային պարհակից խուսափելու եւ նոյն ժամանակ կրօնական քարոզչութեամբ զբաղուելու համար, դրանով իսկ իրեն դատապարտելով անխուսափելի ձերբակալման։ Շատ ցաւալի է այդ ամբողջ սուտը տեսնել մի հեղինակի մօտ, որը մի ժամանակ մեզ զարմացրել է իր «Օրավարձը կարճ ժամանակ է» վիպակի սրութեամբ։

Իսկ ինչ վերաբերում է կրօնական նիւթին, ապա դա Տենդրեակովի կողմից հրամցուում է այնպիսի մակարդակով, որ մեր ապշում ես. մի՞թէ այդ ամէնը ապում է մի գրիչում, որը ճանաչել է Վլադիմիր Սոլովիովին, Ֆլորենսկուն, Անբսէյ Բուլգակովին, Ֆրանկին, Շեստովին։ Ինչպիսի՞ անկման հասած պէտք լինի գրականութիւնը մեր երկրում, որ նման գռեհկութիւնները հրամցուեն ընթերցողին իբրեւ խոր յայտնագործումներ։ Վիպակի հերոսների գաղտնութիւնները Աստծու, մահուան, կեանքի իմաստի, յաւիտենութեան, եւայլնի մասին զարմացնում են ո՛չ միայն ապիկութեամբ ու նախնամտութեամբ, այլեւ՝ ա՛յն մոլեգին, նոյնիսկ ոգեւորուած խանձաձեւով, ինչպէս որ գրողը դրանք ներկայացնում է, համոզուած լինելով դրանց խորիմաստութեան մէջ։ Իսկ չէ՞ որ դրա կողքին կան կրօնական ընդարձակ ինքնահրատարակչութիւն, յուրջ հեղինակներ, իսկական միտք։ Տենդրեակովը չի կարող դա չիմանալ, քանի որ նման բաների մասին է գրում։ Եւ ահա՝ միթէ անի քննադատ, եթէ գրողն ասպարած է մշտապէս յիշողութեան կորուստ ձեւացնել։ Զուր չէ, որ ինքնահրատարակչական լաւագոյն հանդէսներից մէկը կոչում է «Ցիշողութիւն» անունը։

Այն ատեան դէպքերում, երբ միջնադարեան յանկարծ խախտում են իրենց ընդունած արգելքը (թաբուն) ու վախով մտնում իրենց համար անսովոր ընկերային քնագաւառը, հոգը փախչում է նրանց ուղքերի տակից, նրանց իրապաշտութիւնից հետք անգամ չի մնում, նրա տեղը գալիս են պայմանականութիւնն ու կեղծիքը։ Իր պատմուածքներից մէկում («Երիտասարդ Վագանովի տառապանքները») գայտուն դիմանկարիչ Շուկշի՛նը վճռում է յոյց տալ խորհրդային

digitised by A.R.A.R.@

քննիչին։ Բայց ո՞ւմ։ Շէյնինի ու Կոժեւնիկովի յոյց տուածներն նմաններին։ Նոյնիսկ ոչնարդ չկայ իշխանութեան հանդէպ ժողովրդի եւ ժողովրդի հանդէպ փչիանութեան փերարերմունքի իսկական բնոյթի մասին, — մէկ կողմից անվստահութեան, վախի ու թշնամութեան, իսկ միւս կողմից՝ գոհհիկ լկտիութեան եւ քաղցր-մեղցր զիջողամիտ հովանաւորութեան, կարծես փոքր երեխաների դիմաց է գտնուում, որն է՛լ աւելի անտանելի է, քան լկտի ճնշումը։ Շուկշինեան քննիչը, որը արտաքոյց զրոյցներ է վարում ամբաստանեալի հետ ու նոյնիսկ նրան օգնում գուրս դալու անյուսալի վիճակից, բանդագուշանք է։ Եւ, ի հարկէ, ո՛չ թէ նրա համար, որ խորհրդային իշխանութիւնը կրողների շարքում չկան բարի մարդիկ, ոչինչ է որ լինեն նաեւ այդպիսի՛ք, բայց նրանք ստիպուած են իւրացրնել թեղհանուր ոճը, եթէ ուզում են մերապրել այդ միջավայրում։

(Վերցուած են նաեւ Շուկշինի նոյնպիսի այլ երկեր։— ԹԱՐԳՄ.)։

...եւ, տեսա գիւղացիներն զգացին, որ անկարելի է դրել ռուս գիւղացիութեան մասին ու լուութեան տալ նախատարրական, բնականները՝ կոլեկտիւացումը։ Եւ Մոժաեւը գրում է «Գեղջուկներն ու գեղջկուհիները» վէպը, իսկ հեղինակ՝ «Նախօրեակները» 20ական թուերի վերջի ժամանակագրութիւնը։ Երկուսն էլ (մա՛նաւանդ Բելովը) տալիս են ռուսական նախակոլանատեսային գիւղի կեանքի բուսական հետաքրքրական մանրամասնութիւններ։ Բայց այդ նկարագրութեամբ էլ, որը չի չօշափում իրերի էութիւնը, գործեալ սպառում է ամէն ինչ։ Նրանք չեն կարողացել, ի վիճակի չեն եղել կամ չեն համարձակուել բացայայտել մեծ աղէտի իմաստը։ Բաքելի խրճ եւ գեր-արդէնուած պատմուածքում — որը սարսո՛ւռ է ազդում — ինչպէս եւ Գրոսմանի «Ամէն ինչ հոսում է» գրքի նշանաւոր, առայժմ չգերազանցուած էջերում շատ աւելի՛ է բացայայտուած նրա սարսափելի էութիւնը, քան այդ երկար վէպերում։ Երկուսն էլ, թէ՛ Բելովը եւ թէ Մոժաեւը, անհերկիրա կերպով դատապարտում են կոլեկտիւացումը, բայց նոյնիսկ ուղղափառ Սէյֆուլինան, որը մեծ դէմ չէր կոլեկտիւացմանը, շատ աւելի ցայտուն կերպով է իր ժամանակ, թարմ յիշողութեամբ, գրոշմել ոգորդութեան գծերը։ Իսկ յիսուն տարուայ բարձունքից սեսադաշտը անհամեմատ աւելի լայն է, եւ կարելի էր ապասել մի որեւէ առաւել նշանակալի բան։ Զարիպկինը, որն իր «Իրտիշի վրայ» վիպակում չէր յաւակնում լայն ընդգրկում եւ փերրոսծութեան խորութիւն, ոյնուամենայնիւ, կարողացել է շատ աւելին ասել։

Իրենց այդ պատմական վէպերում, որոնք, թւում է, գրուել են հենց նրա համար, որ բացայայտեն ռուսական պատմութեան իմաստը, Բելովն ու Մոժաեւը, ինչպէս եւ վիպակներում, աւելի շատ ընդգծուած են բուսահոգի, քան հասարակութեան մէջ։ Գեանական թուերը նրանց կողմից խոէալականացում են, փոխ կոլեկտիւացումը պատկերում է իբրեւ որիկոյ Ստալինի անհեթեթ հնարանք, որը իւրացրին անխիղճ պաշտօնատարներն ու «խոտորիչներ»։ Բելովը նոյնիսկ կուսակցութիւնից հեռացնում է (անդամագրմամբ չմուծելու համար) իր փերոտ Իգնատի Սոպրոնովին՝ բանի կոլեկտիւացման կեղտոտ գործը նրան յանձնարարելուց առաջ։ Եւ դա նրա համար, որպէսզի ծառայամտօրէն յայտարարի. «(Գիւղացիները) արտեղի՞ց իմանային, թէ Օլիմպիադա գլխիցում ոչ ոք Իգնատին կուսակցութեան անդամ չէր համարում, եւ թէ կուսակցութիւնն այստեղ մեղք չունի»։ Ճայտնի երգ... Կուսակցութիւնը միշտ էլ մեղք չունի։ Երկրում զանգուածային ահաբեկչութիւն է կատարում, իսկ կառավարող կուսակցութիւնը մեղք չունի, միլիոնաւոր գիւղացիներ են բնաջնջուում, երկիրը սովի է մատնուում, իսկ կուսակցութիւնը մեղք չունի։ Մի ատոչների համար է նախատեսուած այդ տարբերակումը։

Բելովը նոյնիսկ աւելի հեռուն է գնում։ Նա փորձում է կոլեկտիւացումը ներկայացնել (յատկապէս վէպի վերջին մասերում) իբրեւ յաւիտենական, միշտ ու ամէնուրեք ընթացող պայքար՝

digitised by A.R.A.R.@

մարդկանց տարբեր հոգեկան ու բնախոսական տեսակների միջև։

Քոանական թուերը բնաւ չեն եղել հըբաշալի հովուերգական ժամանակներ, որոնք յանկարծ խզուեցին պայծառ երկընքում պայծառ ամպրոպի նման կոլեկտիւացմամբ։ Քոանական թուերին տեղի էր ունենում ամբողջատիրական դաղափարատիրական պետութեան կառուցում։ Քաղաքական ու քաղաքացիական ազատութիւնների, արհմիութիւնների ու եկեղեցու ոչնչացումից յետոյ, ուստ մտաւորականութեան ծաղիկը արտասահման արտաքսելուց եւ այլախոհների համար համակենտրոնացման ճամբարներ ստեղծելուց յետոյ՝ կոլեկտիւացումը օրինաչափ ու ամենահրամայական քայլ էր։ Եւ ո՛չ միայն նրա համար, որ պետութիւնից անկախ գիւղացին չէր մնում հաւաքապաշտական կենտրոնացուած ու ամբողջատիրական համակարգի մէջ, այլեւ որովհետեւ հողի, աղգային աւանդոյթի ու կրօնի հետ կապուած գիւղացին վտանգաւոր էր դաղափարապետութեան համար։ Նրան հարկաւոր էր արմատազուրկ, դիմազրկուած ու կոպտատաշուած «հոմո սովիետիկուս» (խորհրդային մարդ), որի ստեղծման համար նա յաջողութեամբ գործում էր, եւ աղատ գիւղացին նրան պակաս չէր տալիլ, քան ինքնուրոյնաբար մտածող մտաւորականը։ Կոլեկտիւացումը միայն տնտեսական միջոցառում չէր։ Դա հոգեւոր արժասների իր հետեւանքներով ստրապելի սղոցում էր, այլ՝ ոչ-կոմունիստական մշակոյթի, բարոյականութեան աղբիւրների ոչնչացում, ժողովրդական գիտակցութեան խլացում։ Դա անձնական սեպհականի ու անձնական աղատութեան փոխարինում էր հաւաքապաշտական սեպհականով։ Կոլեկտիւացման մասին իսկական ռուսական վէպը դեռ պիտի գրուի։

Ռուս ընթերցողը այլեւս չի կարող բաւարարուել այստեղ-այնտեղ ցրուած առանձին ակնարկումներով, բացատական պերսոնաժների բերան դրուած համարձակ նախադասութիւններով, անմիջապէս հաւատարմական վերապահումներով չէղոքացուող վտանգաւոր պընդումներով, եւայլնով։ Լիարժէք գրական երկը չի կազմուում անձեւ կամ նոյնիսկ տարասեռ մարմնի մէջ այստեղ-այնտեղ ցօղուած առանձին յաջող մասերից։ Գրական երկը ամբողջական մարմնակազմ է (օրգանիզմ)՝ սեպհական զարկերակով ու շնչառութեամբ։ Այդ մարմինը կա՛մ կայ՝ ապրում եւ շնչում է, կա՛մ պարզապէս չկայ։ Երրորդ ելք գոյութիւն չունի։ Ոչ մի ամենանուրբ զալուանա-արարողութիւն չի կարող կենդանացնել դիակը։

Ապագայում, եթէ ենթադրենք, որ գալիք ընթերցողը կ'ուզենայ դրանք կարդալ, այդ բոլոր «միջակայ» գրքերը հարկ կը լինի օժտել թերեւս բուն գրքերից աւելի երկար ծանօթագրութիւններով, պարզաբանումներով, թէ այստեղ գրողը երբ նկատի է ունեցել այս կամ այն, ակնարկում է այս կամ այն, այստեղ նա ասում է այս, բայց իրականում բնաւ այդպէս չի եղել, այլ ուրիշ կերպ, բայց նա չէր կարող դա ասել, որովհետեւ... եւայլն։ Եւ այդ ծանօթագրութիւնները կը լինեն, թերեւս, բուն գրքերից շատ աւելի հետաքրքրական։

Արեւմտեան շատ «յառաջադէմ» քընադատներ պնդում են, թէ այդ գրաքննութեան ենթակայ խորհրդային գրողները, ի տարբերութիւն այլախոհ գրողների, ամբողջովին չեն մերժում խորհրդային վարչակարգը, այլ խորհրդային հասարակութեան խնդիրների լուծում են որոնում բուն խորհրդային վարչակարգի շրջանակում, ուստի եւ՝ նրանց տալիս են, իսկ այլախոհներին չեն տալիս ու հալածում են։ Առաջինները մնում են սոցիալիստներ ու մարքսիստներ, իսկ երկրորդը՝ հակամարքսիստներ ու հակասոցիալիստներ, եւ դրա մէջ է կայանում ամբողջ տարբերութիւնը։ Նման պնդումները կը լինէին ճշմարտանման, եթէ խորհրդային գրաքննութեան ենթակայ գրողները բարձրացնէին նոյն խնդիրները, ինչ որ այլախոհները, բայց այդ հարցերին տային այլախոհներից տարբեր պատասխաններ։ Իսկ իրականում միջակայ գրողները պարզապէս շրջանցում են այդ խնդիրները, խուսափում դրանցից։

digitised by A.R.A.R.@

Ով որ իսկապէս համոզուած է իր իրաւացիութեան մէջ՝ նա չի խուսափում բանավէճից, այլ, ընդհակառակն, որեւէ առիթ է փնտռում՝ իր տեսակէտը յայտնելու, դա ըստ հնարաւորին աւելի համոզիչ հիմնաւորելու, ուրիշներին իր իրաւացիութեան հանգէպ համոզել փորձելու համար: Իսկ խորհրդային հասարակութեան ամենասարսափելի խոցերն ու նրա ամենաուժգին բախումները լռութեան տալը վկայում է, որ ո՛չ այդ գրողներ, ոչ էլ այն իշխանութեան մօտ, որը թոյլատրում է նրանց գրքերի հրապարակումը, համոզիչ պատասխաններ չկան այլախոհների կողմից բարձրացուց հարցերին, ուստի եւ՝ այդ հարցերը չօչափելը վտանգաւոր է: Մնում է միայն մէկ բան՝ լռել ու արգելել: Խորհրդային հասարակութեան սարսափելի արատների մասին խօսել չի կարելի, քանզի դրանք ո՛չ միայն անյարգահարելի են խորհրդային վարչակարգի շրջանակում, այլեւ հանդիսանում են նրա օրինաչափ ծնունդը:

Ի վէպ, երբեմն նոյնիսկ կասկած է ծագում, թէ արդեօք այդ միջակայ գրողները իրականում մինչեւ վերջ հասկանո՞ւմ են ռուսական կացութեան ամբողջ ողբերգականութիւնն ու նրա ամբողջ զարհուրանքը: Նրանց գրքերում երբեմն կան մանրամասնութիւններ, որոնք բացայայտում են ժողովրդական նուաստացման ու իրաւազրկութեան այնպիսի՛ մի անդունդ, որ զայրոյթից ցնցւում ես: Բայց այդ մանրամասները այդ գրողների կողմից տրւում են մի տեսակ անգիտակցաբար, իբրեւ մի տեսակ բնականոն ու ինքնին հասկանալի բան, որը պարզապէս ինքնաբերաբար արձանագրւում է կենցաղի միւս մանրամասնութիւնների կողքին, առանց ընթերցողի վրդովմունքը յարուցելու նուազագոյն դիտաւորութեան, քանզի հենց հեղինակներն իրենք ոչ մի վրդովմունք չեն զգում: Բելովին, օրինակ, հանդիսա, ի միջի այլոց, հաղորդում է, որ գիւղում յայտնաբերուեց «կամաւոր» ձրի կիրակնօրեակ եւ «եկաւ հրահանգ», որ առաւօտեան վառարանները չվառուեն ու բոլորն էլ գլխովին խոտհնձի գնան: Կոլտնտեսութեան նախագահը, հաշուապահն ու բրիգադավարը գիւղում շրջում էին բադիայով ու ջուր ցանում կոլտնտեսականների վառարանների վրայ, որոնք, այնուամենայնիւ, վառւում էին՝ նախաճաշ պատրաստելու համար: Դա մի տեսակ մղձաւանջային երեւակայութիւն է Սալտիկով-Շչեդրինից, իսկ Բելովն այդ ամէնի մասին խօսում է իբրեւ մի դուարձալի մանրամասնութեան մասին, — մի կին չդիմացաւ ու ինքը ուրից-գլուխ ջրով ողողեց բրիգադավարին: Ահա եւ ծիծաղ...

Մոժաեւը, նոյնպէս ի միջի այլոց, իբրեւ մի տեսակ սովորական բանի մասին, ասում է, թէ նախագահը կոլտնտեսականներին արդելեց, իրենց դրամով, իրենց մարզաւանային բաժինները հաւելու համար նախագահին անձեռնտու գիւղացիներին յանձնելը: Եւ գիւղացիներից ոչ ոք նոյնիսկ չմտածեց չենթարկուել, ոչ ոքի (այդ թւում եւ հեղինակի) մտքով չի անցնում, որ նախագահը չի կարող արդելելու այդպիսի իրաւունք ունենալ: Մոժաեւը մի այլ տեղ, նոյնքան արձակունակ ու միապաղաղ, միւս մանրամասնութիւնների շարքում հաղորդում է մեզ, թէ գիւղացիներին արգելուած է սեփական ձեռքի ջուլհակահատողներով իրենց համար կտաւ գործել: Այն, ինչ որ նրանց չի արգելուել դարերով, նոյնիսկ ճորտատիրութեան ժամանակ, վտանգաւոր ու արգելուած է դարձեալ տոկիալիզմի օրօք: Բայց գրողը չի էլ մտածում խորանալ այդ թաւուտներում: Եւ ահա մտածմունքի մէջ ես ընկնում, թէ գուցէ՞ նրանց նկարագրողականութիւնը ոչ թէ անապատութեան, գրաքննական կաշկանդումների հետեւանք է, այլ ուղղակի մտահոգիզոնի նեղութիւն եւ մեծ գրականութեան մակարդակին բարձրանալու անընդունակութիւն:

Բայց եթէ նոյնիսկ մի կողմ դնենք Ռուսաստանի բոլոր լուրջ ընկերային խնդիրներն ու ցաւերը եւ նայենք պարզապէս այն տոնայնութեանը, որով հրատարակւում է ռուսական կեանքը միջակայ կենցաղագիրների կողմից, ապա տեսնում ենք, որ այդ նկարագրութիւնները

digitised by A.R.A.R.@

եւ իրապաշտական չեն։ Կենցաղը գուն-նազարդւում է, խորհրդային առօրեայի մղձաւանջն ու անհեթեթութիւնը սքողւում։ Եւ ա՛յ միայն քաղաքային, որտեղ անհամեմատ շատ են երեւան դալիս վարչակարգի բոլոր պակասները, այլեւ՝ նոյնիսկ գիւղականի։ Ժամանակակից ռուսական գիւղը գիւղացիների մօտ սճաւորուած է, գեղջուկները՝ իռէալիստացուած։ Չէ՞ որ ժամանակակից խորհրդային կեանքում ամենաառարսափելին, թերեւս, քաղաքական ճնշումը չէ, ոչ ալ նիւթական կարիքը ու նոյնիսկ հանրապարտադիր՝ մտքերը բթացնող գաղափարական աւուրը. այդ ամէնքը անմիջապէս կ'անհետանան՝ հենց որ վարչածեւը ասպարէզից։ Շատ աւելի սարսափելի է ժողովրդի վայրենացումը, նրա քարոյական այլասերումը, հոգիների աղքատացումը, բնաւորութիւնների մանրացումը, արմատների կորուստը։ Դրանից բուժւելն այնքան էլ հեշտ չէ։ Ով որ ապրել է աւարուայ ռուսական գիւղում՝ նա չի կարող այնտեղից ծանր տպաւորութիւններ տարած չլինել իր հետ։ Համատարած հարբեցութիւն, գազանային կռիւներ՝ յանախակի ապտութիւններով, անխղճութիւն, մանր շահամոլութիւն, թշնամութիւն ու կասկածամտութիւն՝ անծանօթ մարդկանց հանդէպ եւ, իբրեւ անկման ցայտուն արտայայտութիւն, զզուելի հայհոյախօսութիւն, որը լեզուական հաղորդակցման կանոն է դարձել, նոյնիսկ իշխանութեան պաշտօնական ներկայացուցիչների խօսակցութեան մէջ, նոյնիսկ կանանց մէջ ու երեխաների ներկայութեամբ։ Ռուս մարդու Ֆիզիկական տեսքն անգամ փոխուել է, չքացել են երբեմնի բարեհոգի, բացսիրտ, անխորամանկ դէմքերը (այդ մասին լաւ է գրուած Սոլժենիցինի «Օգոստոս»ում եւ Բիտովի «Պուշկինեան տուն»ի մէջ)։ Խորհրդային գիւղի այդ ճնշող, ախտաւոր մթնոլորտը կարողացել է հաղորդել Սոլժենիցինը՝ իր նշանաւոր գրաքննութեան ենթարկուած «Մատրենայի ծխում»։ Այնտեղ պահպանուած է լոյսի ու խաւարի, առաքիններն ու ոչ-առաքիններն իրական յարաբերակցութիւնը։ Իսկ գիւղացիների մօտ համատարած առաքիններ գամ կիսա-առաքիններ են։ Դա հասանելիօրէն ռուս ազգի մնացորդները փրկելու, խորհրդային խայտառակութեան թաւուններում դեռեւս անարատ մնացած ռուսական հոգին որոնելու հասկանալի ձգտման հետեւանք է։ Բայց հարկաւոր է ոչ այնքան հիանալ անհոգիութեան դիւրուայ մէջ հրաշքով փրկուած այդ սուրբ կայծերով, որքան որ հաւանգ հնչեցնել-ու վտանգը ցոյց տալ։ Բունինի անմոռոք «Գիւղում» եւ Զեխովի «Գեղջուկներ»ում անհամեմատ աւելի շատ մատնանշուած է դպացում ռուս ազգի ճակատագրի հանդէպ, քան Նեկրասովի օպերային գեղջուկների (մուժիկների) մէջ։

Բնորոշ է եւ այն, որ գիւղացիները բարքերի անկման մեղքը դնում են ոչ թէ հակահոգեկան վարչակարգի վրայ, որը հնեւանողականօրէն յիմարացրել է մարդկանց ու մարդ-մեքենաներ դատարկել, այլ ուղղակի՝ քաղաքային քաղաքակրթութեան այլասերիչ ազդեցութեան։ (Փակագծում նշեմ, որ այդ տեսակէտը ինձ եւս զգալի չափով արդար էր թւում, քանի դեռ չէի եղել Արեւմտեան Եւրոպայի գիւղերում)։ Գիւղացիների մօտ մտաւորականները միշտ պատկերուած են հեգնանքով։ Ազգային ոգու խկական կրող կարող է լինել սոսկ հասարակ ժողովրդից ելած, չփչացած, այսինքն՝ նախնամիտ, բնազդական կեանքով ապրող մարդը։ Ցգիտութիւնն ու յեսամնացութիւնը մաքրութեան անհրաժեշտ պայմաններ են։ Ժողովուրդ կոչուելու իրաւունքը վերապահւում է միայն գիւղաբնակներին։ Բայց «ժողովրդի» առջեւ քծնելն արդէն իսկ նշանակում է իրեն զրաւել նրանից, չէ՞ որ անկարելի է ինքն իր առջեւ քծնել։ Եւ այդ սքանչացումները հացէպրուած են գրքերը կարդացող մտաւորականներին (գեղջուկները գիրք չեն կարդում) այն վստահութեամբ, թէ այդ մտաւորականներն ընդունակ են ընկալելու ազգային խոհաները եւ հայրենիքի հանդէպ սիրով այրուելու։

Այդ ամէնի մէջ մէկ կողմից կան միամիտ ռուսոյականութեան ուշացած

digitised by A.R.A.R.@

արձագանգները։ Զգիշացած, բնական մարդու բնազդական բարոյականությունը բնական էակի գիտակից բարոյականությունից աւելի բարձր է դառնում։ Իսկ չէ՞ որ արդէն վաղուց է ապացուցուած այն հեքիաթների անհիմնությունը, թէ բնական մարդը բարի է, իսկ քաղաքակիրթը՝ չար։ Բնական մարդը դազան է, չար կենդանի։ Ոչ մի բնական բարոյականություն չկայ։ Բարոյականությունը մշակոյթի ու, մասնաւորապէս, ուսուցիչների մօտ, քրիստոնէական մշակոյթի արտադրանք է։ Այդ մշակոյթի փոխարինումն էլ խորհրդային դատարկությամբ (քանզի հօ չի՛ կարելի մշակոյթ կոչել նշանախօսքերի հաւաքածոն ու քարոզչությունը) հացնում է անասնացման զարհուրանքին։ Իսկ միւս կողմից էլ՝ այդ ամէնի մէջ դարձեալ մեր միեւնոյն առաւական հին հիւանդությունն է՝ հնաբոյր նարոդնիկությունը (ժողովրդապաշտությունը)։ Դեռեւս կենդանի է այն, ինչ օր Բերդեաեւը կոչել է ռուս յեղափոխության տոլստոյական ոգի։ Արհամարհանք մտաւորականի հանդէպ, նրա ամբողջ փայլով, արհամարհանքը անձի հանդէպ, նրա քաղաքակրթությամբ, երկրպագությունը զանգուածի («ժողովրդի») առջեւ, նրա համահաբթիչ տարերքի առջեւ։ Այդ ամէնն արդէն այնքա՞ն դժբախտություններ է պատճառել Ռուսաստանին ու հասցրել այն քանին, որ «մտաւորական» բառն իսկ հայհոյանք է դարձել, եւ այն քանին, որ մեր մեծ սէրությունը կառավարում են անդրագէտ Խրուշչովներն ու Բրեժնեւները։

Անկարելի՛ է անտեսել այն իրողությունը, որ ազգային գիտակցության զարթօնքը եւ ազգային վերածնության առաջին նշանները այսօր նկատւում են հենց մտաւորականության միջավայրում, այլ ոչ թէ գիւղերում։ Եւ հոգեւոր (քրիստոնէական) վերածնության կրողն այսօր մեզ հրաշալի, նոր, խելացի հրատարակությունն է, այլ ոչ թէ գեղջուկները։ Հենց դրա համար էլ, իրենց բոլոր գեղարուեստական արժանիքներով հանդերձ, այնքա՞ն արհեստական են թւում Խաչատուրեանի վէպերը։ Մի ինչ-որ միտք ուտոպիականություն կայ այդ յամառ ցանկության մէջ՝ գիւղը ներկայացնել իբրեւ հաւատի ու ուանդոյթի մաքուր արգելավայր, որտեղից պիտի բխի Ռուսաստանի նորոգումն ու փրկությունը, եւ նոյնքան յամառ չկամությունն մէջ՝ հոգեւոր իսկական նորոգումն ու քրիստոնէական վերածնունդը տեսնել մեր մշակութային միջավայրում, որտեղից է՛լ աւելի չուտ կը գայ (եւ արդէն գալիս է) երկրի առողջացումը։ Արդեօք դրանից չէ՞ Խաչատուրեանի գրքերի անելանելի ողբերգականությունը։ Նրանից չէ՞ արդեօք, որ նա իր հոգու խորքում ըմբռնում է իր յոյսերի ուտոպիականությունը, տեսնում գիւղի այլասերումը ու չի հաւատում մշակութային ընտրանու ուժին, ամբողջ ժողովրդի կեանքը փոխելու նրա ընդունակությունը։ Ու պատահական չէ, որ Խաչատուրեանի այդպիսի կաթոսախտային քրիստոնէությունը, միամիտ-բանահիւսային, կարողացել է հասնել խորհրդային մամուլ, իսկ Սոլժենիցինի, Մաքսիմովի ու հիմա էլ ուշ Ակսիոնովի տագնապալի-որոնող, բարոյապէս լարուած քրիստոնէությունը վերանգաւոր ու անընդունելի համարուեց վարչակարգի համար։

Ահա եւ այստեղ մենք ընդհուպ մօտեցանք այն հարցին, թէ ինչն է ընդունելի, ինչը՝ ոչ, ինչու են ապում միլիկանեերին, ինչպէս է պատահել, որ այն դրողները, ովքեր դեռեւս մի քանի տարի առաջ ըմբոստներ էին համարւում, այսօր դարձել են վարչակարգի պատւաւոր, եւ նրանք, ում համար դեռեւս մի քանի տարի առաջ սահմանը կողպուած էր, այսօր յանկարծ սկսել են ճամբորդել արտասահմանում՝ իբրեւ խորհրդային լիչիանության դեսպանորդներ։ Արդեօք լիչիանությունն՞ըն են ազատականացել, թէ՞ գրողներն են այլասերուել։ Ո՛չ մէկը, ոչ էլ միւսը։

Սամիզդատի (ինքնահրատարակչության) եւ տամիզդատի (արտասահմանում հրատարակչության) ամենը զգաստացնող՝ խորհրդային դրականության վիճակը պնալով աւելի է զժուարացել։ Սոֆրոնովի կամ Կոչետովի նման հեղի-

digitised by A.R.A.R.@

նակների (կամ աւելի ճիշդ՝ միայն այդ-պիսիների) գրուածքների տպագրումը վարչակարգի համար աւելի շուտ վնասակար, քան օգտակար է դարձել։ Ցափազանց ակնյայտ է դարձել այդ գրականութեան սուտն ու աղքատութիւնը՝ ազատական ազատ խօսքի համեմատութեամբ։ Չէ՞ որ արդէն բանը հասել է նրան, որ Կոչետովի «Էլ ի՞նչ նս ուզում» վէպը խակական բեստ-սելլեր է դարձել՝ իբրեւ երգիծական երկ. դա ձեռքից ձեռք խլում, միմեանց համար բարձրաձայն կարդում ու քրքջում էին ուշադնաց լինելու չափ։ Իշխանութիւնները փաստօրէն գտնուեցին այլ ընտրանքի առջեւ, — կա՛մ դադարեցրնել գրաստութիւնն առհասարակ, իբրեւ անհպասակայութիւն ու նոյնիսկ վարչակարգի համար վնասակար զրաղմունք, կա՛մ էլ՝ արմատապէս փոխել իր գործելակերպը։ Իսկ գործելակերպ մշակելու հարցում՝ գրականութեան արդի տէրերը վարպետներ են։ Անցել են ժդանովի նման բութ ու սահմանափակ դիլետանտների ժամանակները։ Այսօր վարչակարգն իր ծառայութեան տակ ունի իսկական մասնագէտների, խելացի, անպատուաբեր, ճարպիկ ծառաների, որոնք հիանալի տեղեակ են, ամէն ինչ հասկանում եւ կատարելագործուած են՝ հոգիներն այլասերելու, թոյլերին մոլորեցնելու, նուրբ, գրեթէ անզգալի կաշառանքի ու օշ-պակաս նրբօրէն վախը ստատկացնելու, սեփական անզօրութեան ու դիմադրելու անիմաստութեան զգացում ստեղծելու մեթոդների մէջ։ Բաւական է տեսնել, թէ գրականութեան այդ նոր տէրերը ինչպիսի՛ հարպկութեամբ հաշիւ տեսան «Մետրոպոլ»ի խմբի հետ, — ոմանց ճնշել, ոմանց էլ վախեցնել, իսկ միւսներին չոյել ու հրատարակել...

Իսկ ինչպիսի՛ նուրբ հաշիւ՝ Ռասպուտինի տպագրման հարցում, որն այնքա՛ն օտար է խորհրդային գրականութեան ոսրոզ ոգուն, որ նրա գրքերի հրատարակումը գրեթէ անհաւատալի է թւում։ Ոմանք նոյնիսկ խօսում են խորհրդային գրաքննութեան վրիպման մասին։ Բայց միայն խորհրդային գրաքննութեան աշխատանքին բոլորովին անծանօթ միամիտ մարդիկ կարող են հաւատալ այդպիսի լուրջ վրիպման հնարաւորութեանը։ Դա՝ բազմաթիւ ու բազմաստիճան վերստուգման ու ինքնապահովագրման պայմաններո՞ւմ, եւ ծիծաղելի է կարծել, որ չարքային գրաքննիչը իր գլուխը վտանգի ենթարկի ու ստանձնի այնպիսի խռովարար վիպակի հրապարակման պատասխանատուութիւնը, ինչպիսին է «Վերջին ժամկէտը»։ Ո՛չ, այստեղ որոշումն ընդունուել է ամենաբարձր մակարդակով։ Վարչակարգը բընակչութեան հետ գէթ ինչ-որ կէտերում շփուելու կարիք ունի։ Միայն բռնութեան ու միայն ատի վրայ երկար չես յենուի։ Հօ Ռուսաստանում լիովին վարկաբեկուած մարքսիզմի մէջ չե՛ն որոնելու շրջման այդ կէտերը։ Բնական է թւում ազգայնականութեանը, հայրենասիրութեանը դիմելը, որը միշտ էլ այնքան ուժեղ է Ռուսաստանում եւ անխզելիօրէն կապուած է ուղղափառութեան հետ։ Նոյնիսկ Ստալինը գժուարին պահին փաղաքշեց ուղղափառ եկեղեցուն եւ տաճարները բացեց։ Բայց առայժմ այդ բոլորը սոսկ առաջին զգոյշ քայլերն են։ Ռասպուտինն տպեցին, իսկ ահա նրա մասին խակական ու լուրջ քննադատութիւնն արգելեցին։ Թող նա, ով արդէն հասել է այդ դաղափարներին, դրանց ուրախութեամբ դիմաւորի այդ գրքերում, իսկ նրանց համար, ովքեր դեռ չեն հասել, կարիք չկայ բացատրութիւն տալ։ Դեռ վաղաժամ է։ Եւ՝ վտանգներով յղի։

Բաբաեւսկիների եւ Կոչետովների պրկանութիւնը կորցրել է իր պաշտպանական դերը։ Այլասերման ընթացքը շատ հեռու է գնացել, նեխման հոտը արդէն սկսել են զգալ բոլորն ու ամէնուրեք, եւ նման թոյլ օծանելիքներով անկարելի է այն չեզոքացնել։ Այսօր սոցիալիստական դրախտի վերաբերեալ հեքիաթներով արդէն ոչ ոքի չես խաբի, հարկաւոր է ընթերցողին զոնէ նրանո՛ւմ համոզելու փորձ անել, թէ ԽՍՀՄ ուրիշ երկրներից աւելի վատ չէ։ Այժմ որքան աւելի ճշմարտանման լինի՝ այնքան աւելի լաւ։ Ընդգծում եմ՝ աւելի ճշմարտանման, այլ ոչ թէ աւելի ճշմարտացի։ Եւ միջականե-

digitised by A.R.A.R.@

ը լիովին գլուխ են բերում այդ խնդիրը։ Նրանց մօտ ամէն ինչ այնպէս է, «ինչպէս որ կեանքում», ամէն ինչ, դըլխաւորից բացի։ Նրանց դրքերից մենք չենք իմանում, որ խօսքը վերաբերում է մի երկրի, որտեղ աւելի քան երեք միլիոն մարդ տառապում է համակենտրոնացման համբարներում, որտեղ լեփ-լցուն յատուկ հոգեբուժարաններում տանջում են մարդկանց, որտեղ վլադիմիրեան բանտում մի քանի չարթում մարդ հիւանդանում է տարաճումով, որտեղ դործադուլաւոր բանուորներին ճզմում են հրասայլերով, որտեղ գիւղացիները փաստօրէն պետական սարուկներ են, որտեղ դատարանները անձեռնտու անձանց հետ դատաստան են տեսնում կուսակցութեան ցուցումով, իսկ դաղտնի ոստիկանութիւնը դիմում է դանդատերական մեթոդների, ծեծելով ու նոյնիսկ սպանելով ընդդիմադիրներին, որտեղ անհամաձայնութեան ուզած դրսեւորում պատժւում է իբրեւ պետական յանցադործութիւն, որտեղ պետական անվտանդութեան կոմիտէի վիթխարի ապարատը վերահսկում է քաղաքացիների ամբողջ կեանքը, որտեղ մարքսիստական ուսմունքը հանրապարտադիր ուշխարհահայեացք է եւ այն չընդունողներին խելագար են հռչակում, որտեղ փիլիսոփայական երկեր ընթերցելու համար հաւաքուած երիտասարդներին ձերբակալում եւ փակում են խենթանոցներում, որտեղ կառավարական հիմնարկութիւնների մօտ հերթապահութիւն են անում ոստիկանական ու սանիտարական մեքենաները՝ դանդատաւորներին կուռուզկաներ (բանտախցեր) ու խենթանոցներ տեղափոխելու համար, որտեղ ՄԱԿի Մարդու Իրաւունքների Ցայտարարագիրը արգելուած փաստաթուղթ է, բռնադրաւում է խուղարկութիւնների ժամանակ, որտեղ կառավարութեան ստորագրած միջազգային համաձայնագրերի կատարման օգտին հանդէս եկող մարդկանց ուղարկում են համակենտրոնացման ճամբարներ, որտեղ սահմանները պահպանւում են բանտի պարիսպի նման, եւ երկրից փախչել փորձողներին դատապարտում են 10 տարուայ ճամբարի, որտեղ տիրում է հարկադիր աշխատանքը, որտեղ մէկն ու կէսն արդէն պերճանքի առարկայ են դարձել՝ քշերին մատչելի, որտեղ ալքոհոլամոլութիւնը դարձել է ընկերային աղէտ, իսկ դողութիւնը (պետութիւնից) բնականոն երեւոյթ, որտեղ միջին հաշուով իւրաքանչիւր երեք օրը երկու մահավնիռ է գործադրւում, որտեղ մինչեւ հիմա անյայտ առանձնաշնորհների համակարգ է ստեղծուել, որը տարածւում է այնպիսի բնագաւառների ու այնպիսի բաների վրայ, որոնք դեռ երբեք ու ոչ մի տեղ առանձնաշնորհներ չեն եղել, որտեղ պետական բոլոր կարեւոր որոշումներն ընդունւում են ժողովրդից գաղտնի, իսկ իշխանութիւնների գործողութիւնները ոչ ոքի կողմից չեն վերահսկւում, որտեղ կենտրոնական Վիճակագրական Վարչութիւնն ամէնից գաղտնիացուած հաստատութիւն է (իսկ երբեմն դուրս հանուող վիճակագրական տուեալները չչմեցնում են), որտեղ սուտը հասարակական կեանքի չափանիշ է դարձել, իսկ անիրաւութիւնը՝ անձնական վարքի չափանիշ։

Ո՛չ, բոլորովին ուրի՛շ երկիր է երեւում միջակայ դրողների դրքերից։ Ոչ թէ այն այլանդակ հասարակական մարմինը, որի նմանը դեռ չի արտադրել պատմութիւնը, այլ՝ մի սովորական հասարակութիւն, բոլոր ուրիշների նման, ի հարկէ՝ թերութիւններով (իսկ որտե՞ղ չկան այդ թերութիւնները), բայց որը ոչ մի սարսափելի բան չի ներկայացնում իրենից։ Հենց դրա մէջ էլ կայանում է միջակայ դրականութեան դերը՝ Ֆոստրկել աՆդումը։ Մրագիրը յստակօրէն արտայայտուած է Տրիֆոնովի կարճ խօսքում։ Խուլական հեռուստատեսութեան համար ունեցած իր հարցազրոյցում նա վերջերս ասաց (կարծես թէ նա իսկապէս կարո՛ղ է հարցազրոյց ունենալ)։ «Ի հարկէ, մեր երկրում դեռեւս շատ թերութիւններ կան, եւ մենք գրում ենք նրանց մասին»։ Սակայն միայն «թերութիւններ»։ Ու՝ «դեռե՛ւս»։ Այսինքն՝ այդ մանրուքները («թերութիւնները») ասպիճանաբար յաղթահարւում են։ Իսկ գլխաւորը՝ այդ «թերութիւնների» քննադատութիւնը թոյլատրե-

digitised by A.R.A.R.@

լի է, այսինքն՝ երկրում կայ բաց բանավիճելի հնարաւորութիւն: Եւ դա ազդում է, որովհետեւ դա աւելի ճշմարտանման է: Ա. Զինովիեւի գրքերը, որոնց մէջ խորհրդային հասարակութիւնը պատկերուած է գրեթէ նատուրալիստական ձեւով, ամբողջ աշխարհում ընկալւում են իբրեւ զգոնական երեւակայութիւններ, իբրեւ չափազանցուած երգիծանք, իսկ Տրիֆոնովի կամ Աբրամովի գրքերը՝ իբրեւ իրապաշտական:

Այն բանից, թէ արեւմտեան կոմունիստները ինչպիսի՛ պատրաստակամութեամբ իւրացրին այդ ամբողջ միջակայ գրականութիւնը, ինչպիսի՛ հաճոյքով են նրանք թարգմանում, հրատարակում ու տարածում այդ գրքերը, հրապարակային նշոյլներն համար հրաւիրում նրանց հեղինակներին, կարելի է եզրակացնել, որ խօսքը վերաբերում է խորհրդային իշխանաւորների հետ մտածուած ու համաձայնեցուած գործելակերպի: Եւ նրանց հոտառութիւնն անսխալ է: Այն ամենը, ինչ որ քիչ թէ շատ բարձրանում է սողացող նկարագրականութիւնից — որը կդիտուի սրճանագրում է սոսկ երկրորդականը, ոչ-գլխաւորը — անմիջապէս անընդունելի է դառնում: Եւ ոչ անպայման խորհրդային հասարակութեան մեծ խնդիրները բարձրացնող գրքերը, այլ պարզապէս այն գրքերը, որոնց մէջ իր համապատասխան արտայայտութիւնն է գտնում գտնում խորհրդային կեանքը, նրա սրեւէ կողմով, եւ խորհրդային հասարակութեան իսկական մթնոլորտը: Այդ առումով թերեւս ամէնից բնորոշը Բիտովի եւ Ակսիոնովի օրինակն է, որանք ոչ թէ ընդերային, այլ աւելի շատ ինքնաղիտողական տեսակի գրողներ են: Իշխանութիւնը շատ էր շահագրգռուած այդ երկու տաղանդաւոր գրողներին ընտելացնելու մէջ: Նրանց ներողամտաբար թոյլ տուին այն, ինչ որ խստագոյնս արգելուած էր ուրիշներին, պակաս տաղանդաւորներին: Ցպեցին նոյնիսկ Ակսիոնովի «Ժամերի արանումները» ու նոյնիսկ առանց վերջաբանը փոխելու: Բայց հենց որ Բիտովն ակսեց խօսել լեռաձայն ու ընտանեցնեց իր խոշորագոյն ու լուսագոյն երկը, որտեղ ամբողջովին դրսեւորւում է հեղինակի արտասովոր անձնաւորութիւնը, անմիջապէս դա անընդունելի դարձաւ խորհրդային մամուլի ու նրա արեւմտեան գաղափարակիցների համար: Եւ հենց որ Ակսիոնովը, իր վաղագոյն կեղծ վիպակներից յետոյ, աստիճանաբար ազատուելով պայմանականութիւններից ու գրաքնութեանը զիջումներ անելուց, ակսեց ընթանալ դէպի իսկական ստեղծագործութիւն եւ աճել իբրեւ անձնաւորութիւն ու իբրեւ գրող, — նա ե՛ւս դարձաւ անընդունելի:

(Ներկայումս Ակսիոնովը գտնւում է արտասահմանում. — Թարգմ.):

Իսկական արուեստը, որի մէջ բացայայտւում է մարդկային անձնաւորութիւնը՝ իր ամբողջ խորութեամբ ու բոլոր խնդիրներով, սարսափելի է խորհրդային գրաքնութեան համար: Անձնաւորութիւնն ու ազատութիւնը անբաժանելի են: Իսկ ազատութիւնը՝ ամբողջատիրական իշխանութեան առաջին թշնամին է:

Բայց ինչպէ՞ս վերաբերուել այդ միջակայ գրողներին: Հարցը հեշտ չէ: Չէ՞ որ նրանց մեղքը չէ, որ վարչակարգն իրենց օգտագործում է իբրեւ իր քարոզչութեան գործիք: Դա չէ՛, որ նրանք կամենում էին: Նրանք ուզում էին թոյլատրուածի սահմանում դէթ մի քիչ ճշմարտութիւն ասել, ուստ ընթերցողին տալ գրականութեան հետ գէթ որեւէ նմանութիւն ունեցող մի բան: Եւ բոլորը չէ՛, ոչ հերոսներ են, բոլորը չէ՛, որ բաւարար համարձակութիւն ունեն, որպէսզի Խորհրդային Գրողների Միութեան անդամատոմսը չպրտեն իշխանութեան երեսին, իրենց ձեռագրերը ինքնահրատարակչութեան յանձնեն ու պատրաստ լինեն ձերբակալութեան կամ հալածանքների: Ռուսական տարածուած առածն այսօր ասում է. «Ջո չափին համապատասխա՛ն խաչ ընտրիր»:

Եւ այնքա՞ն հեշտ է ներողամիտ լինել այդ գրողների հանդէպ, որ նոյնիսկ առանց ուսի ապրելու մեր մեծ քարոզիչը (Խօսքը Սոլժենիցինի մասին է.— Թարգմ.) մեծահոգութեամբ (եւ շնորհա-

digitised by A.R.A.R.@

կալութեամբ՝ մի կատր ճշմարտութեան համար) Նրանց ներել է ամէն բան ու նոյնիսկ աւելի բարձր դասել Նրանցից, ովքեր իսկապէս շարունակում են այսօր ռուսական դասական գրականութեան աւանդոյթը, առաւելագոյն ճշմարտութեան ու հոգեւոր խիզախութեան աւանդոյթը, մի աւանդոյթ, որն արտայայտուել է երկու պատուիրաններով.— «Ձեմ կարող լռել» եւ «ապրել՝ առանց ստի»:

Թուս գրականութիւնը միշտ էլ եղել է լուրջ գործ, իսկ այսօր մենք ապրում ենք չափազանց լուրջ ժամանակներում: Հասել է պահն ինչ իր անունով կոչելու ժամանակը: Երեխայական խանդավառութեան մէջ ընկնելու ժամանակը չէ՝ գրաքննիչին «խաբած» յոլով ակնարկումների կամ «փաբէական ճանապարհով» կորած ճշմարտացի տողերի համար: Գրաքննութի՛ւնն է խարում մեզ, այլ ոչ թէ՝ մենք նրան: Թոյլատրուած ճշմարտութիւնը կասկածելի է հենց իր թոյլատրման իրողութեամբ: Նշանակում է, իշխանութիւնը լուրջ պատճառներ ունի այդ ճշմարտութիւնը թոյլատրելու եւ դրանով իսկ մեւ աւելի կարեւոր ու աւելի ռարբափելի ճշմարտութիւնն է՛լ աւելի հաստատուն կերպով փակելու համար:

Եւ ժամանակը չէ՛ հիանալու, որ ահա վերջապէս սկսել են Արեւմուտք այցելել իսկական ռուս մարդիկ: Երեւում են ոչ թէ կա-զէ-բիատական (գաղտնի ոստիկանական) կերպարանքներ, որոնք աշխարհում տարօրինակ տպաւորութիւն են ստեղծում ռուս ազգի մասին, այլ՝ բնականոն ռուսական դէմքեր: Ահա, իրը, լաւ է, — թէ նրա՛նք աշխարհ կը տեսնեն եւ թէ աշխարհը կը տեսնէ նրա՛նց: Կա-զէ-բիատական կերպարանքը իշխանութեան ճշգրիտ պատկերն էր, իսկ այդ ռուսական լաւ դէմքերը՝ այն դիմակները, որոնց յետեւում թաքնում է մոլեգնած իշխանութիւնը: Ազատօրէն զբօսնելով Փարիզի եւ Հռոմի փողոցներում, լրագրողների հարցերին պատասխանելով եւ հանդէս գալով հեռուստագործիքների առջեւ՝ այդ ազնիւ գրողները անազնիւ խաղ են խաղում: Խաղի կանոնները պահանջում են բացայայտութիւն, բայց բաց ու ազատ է միայն մէկ կողմ, իսկ միւս կողմը խաղանենգաբար առալ է քչում վախից կաշկանդուած գրողին: Եւ որքան էլ որ նա յաջողակ դուրս գայ իրեն ուղղուած հարցերի պատասխանների մէջ, սուտ է նրա ներկայութիւնն իսկ Արեւմուտքում (ուր գնալու ճանապարհը փակ է խորհրդային շարքային քաղաքացու համար), իրրեւ ազատ մարդու, սուտ է հենց նրա ներկայութիւնը ամբիոնի վրայ կամ հեռուստատեսուդիայում, իրրեւ ազատ հեռուորի, որն ազատօրէն արտայայտում է իր տեսակէտը: Ազնիւ գրողի պարտքն է հրաժարուել այդ երեւոյթներից, այդ հարցազրոյցներից ու թերեւս էլ այդ ուղեւորութիւններից: ԵԹէ նա իսկապէս ազնիւ գրող է, պէտք է յիշի, որ իր ելբնատարդ գրչակիցները, որոնք մերժում են ստել, աշխատում են իրրեւ հնոցապաններ, գռնապաններ, բեռնողներ, որ մի ամբողջ գրականութիւն քչուած է ընդյատակ, որ այդ ամէնը, այսպէս թէ այնպէս, բարոյական պարտականութիւն է դնում նաեւ իր վրայ:

Կան վարչակարգեր, որոնց նախաձեռնած հետապնդումներն ու հալածանքները պատիւ են, իսկ բարեբարութիւններն ու փաղաքշանքները՝ ամօթ: Սիցիլիական նշանաւոր գրող եւ պատմաբան Իգնազիո Լա Լումիան, որն ապրում էր բուրբոնեան վարչակարգի ժամանակներում, ինչ որ անչափ պակաս դաժան էր ու հեղծ, քան խորհրդայինը, իմանալով այն մասին, թէ իշխանութիւնները որոշել են բարեբարութիւն անել իրեն, յուսահատութեան մատնուեց ու յայտարարեց, որ ինքը կը փախչի երկրից: «Ինքէ դուք ինձ փաղաքշէք, ես կը հեռանամ, իսկ եթէ վատ վարուէք ինձ հետ՝ կը մնամ», — իշխանաւորների երեսին դոչեց նա: Արժանաւոր խօսքեր: Մի մարդու խօսքեր, որ կարողացաւ ազատ մնալ անազատութեան պայմաններում:

ԻՎՐԻ ՄԱՅՑԵՎ

Թարգմ. Լ. ՄԿՐՏՉԵԱՆ

(Շար. 2 եւ վերջ)

digitised by A.R.A.R.@

Ն. ՉԱՐԽՈՒՏԵԱՆ

ԱՐԳԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԻՄԱԳԻԾԸ ԵՒ ՏԱԳՆԱՊԸ

ԳԻՏԱԵՐԵՒԱԿԱՅԱԿԱՆ ՎԷՊԸ

Ո՞ւր կը սկսին եւ ո՞ւր կը վերջանան գիտաերեւակայական (science-fiction) գրականութեան սահմանները։ Այս հարցումին պատասխանելու համար՝ նախ պէտք է ստուգենք անոր նշանակութիւնը։

«Էարուս»ը կու տայ բացատրութիւն մը, որ առաւելութիւնը ունի կարճ եւ ընդհանրական ըլլալու։ Ըստ հոլչակաւոր բառարանին՝

Գիտաերեւակայականը վիպագրական սեռ մըն է, որ կը զարգացնէ ժամանակի հոլովոյթին կամ արտերկրային տարածութիւններու մէջ կատարուած ճամբորդութիւններու թեման։ Այդ վէպին մէջ հեղինակը կը նկարագրէ մարդկութեան էպոխութիւնը, զայն վերագրելով գիտութեան յառաջդիմութեան։

Այս սեռին մասնագէտներէն Պոլ Օլսըն կու տայ հետեւեալ սահմանումը.

«Գիտաերեւակայական վէպին առանցքը կը հանդիսանայ գիւտ մը կամ իրագործում մը, որ կրնայ կարելի դառնալ, եթէ ճկատի առնենք գիտութեան իսկական նուաճումները»։

Հարցին մասնագէտները գիտաերեւակայական վէպերը եւ պատմուածքները կը դասեն ութ ենթաբաժիններու տակ, նայած զարգացուած նիւթին՝ «ճամբորդութիւն անցեալի եւ ապագայի մէջ», «Ռոպոթները», «Աստղանաւային ճամբորդութիւններ», «Ախտերկրային էակներ», «Մոլորակներ», «Խորհրդաւոր ուժեր», «Միրկաթիններու նուաճումը», «Ձեւափոխուող էակներ»։

Ո՞ւր փնտռել գիտաերեւակայական գրականութեան առաջին նմոյշները, Աստուածաշունչի՞ն մէջ, «Ոդիսական»ի՞ն, հեթանոս կրօններու առասպելներո՞ւն, թէ «Հազար ու մէկ գիշերներ»ու էջերուն։ Անկասկած որ այս կրօնները եւ առասպելները մեզի կը խօսին գերագոյն եւ խորհրդաւոր ուժերու մասին, որոնց ներգործութիւնը կը ստեղծէ անբացատրելի կամ հրաշալի դէպքեր։ Արտերկրային էակներու գոյութիւնը կը հանդիսանայ Աստուածաշունչի հաւատամքներու գլխաւորը։ Այդ էակները մեզի ծանօթ են հրեշտակ անուններ տակ։

Սակայն այս բոլորը կը մնան բուն գրականութեան կալուածէն դուրս, որովհետեւ անոնք չեն հանդիսանար այդ գործերուն գլխաւոր թեման եւ կը ծառայեն փաստելու անգենականին կապակցութիւնը երկրայիներուն հետ։

Եթէ կ'ուզենք հանդիպիլ արդիական իմաստով եւ յղացումով գիտաերեւակայական բնոյթ ունեցող գործերու, պէտք է ստում մը ընենք դէպի ետ, դէպի ԺԷ. դարուն սկիզբները, ուր կը հանդիպինք Սիրանո տը Պերժըրաքի «Լուսնի եւ արեւի պետութիւններուն կատակերգական պատմութիւնը» անուն յատկանշական գործին։

Նոյն դարու վերջաւորութեան, Մանչի միւս ափին լոյս կը տեսնէր իր-

digitised by A.R.A.R.@

լանտացի ձոնաթը Սուլիվանի աշխարհահռչակ «Կիլիվէրի ճամբորդութիւնները» վէպը, որ կը պատմէ մարդ արարածի մը այցելութիւնը, նախ՝ դահաճներու, յետոյ՝ հսկաներու ու, վերջապէս, նահուներու երեւակայական երկիրները:

Ժէ. դարու կէսերուն, Վոլթէր լոյս կ'ընծայէր իր «Միքրոմեկաս» պատմուածքը, որուն մէջ կը պատմէ Երեւակ մոլորակէն երկրագունտ իջած արտերկրային հսկայի մը արկածախնդրութիւնները:

Պերժերաքի գործը ունի երդիծական բնոյթ, իսկ Սուլիվանի եւ Վոլթէրի գործերը ունին փիլիսոփայական եւ քննադատական յատկութիւններ:

Ինչպէս ոսոիկանական, նոյնպէս գիտաբեւեւակայական սեռին ձեւաւորման եւ զարգացման շրջանը ԺԹ. դարն է: Վիպագրութիւնը դրական ու գեղարուեստական շարժում մը չեկաւ միայն: Ան ունէր իր փիլիսոփայութիւնը. ան ունէր իր արտերկրային դէմքերը, մէկ կողմէն՝ հրեշտակները եւ, միւս կողմէն՝ սատանան, այն խորհրդաւոր ու ամենակարող տիտանը, որուն դահավիժումը կը ներշնչէր վիպագրող բոլոր բանաստեղծները եւ արուեստագէտները: Մինչ սատանան չէ՞ր մեր նախածնողքին ականջին ըմբոստութեան հրաւէրը փոխանցողը: Մի՞թէ սատանան չէր գիտութեան դուռներուն պահապանը.

«Եթէ ճաշակէիք գիտութեան ծառին պտուղը, պիտի ճամանիք աստուածներու»:

Նմանի՛լ սատուածներու: Մինակ միջոցը գիտութիւնն է, որ մարդուն կու տայ գերազանց կարողութիւն: Գիտութիւնը նոյն իմաստը չունեցաւ դարերու ընթացքին: Սկիզբները ան կը նշանակէր մոգականութիւն: Գուշակները ապագան կը խուզարկէին կարդալով աստղերուն քարտէսը, ալքիմիագէտները կ'որոնէին հարստութիւն, իշխանութիւն եւ անմահութիւն եւ կը կարծէին գտած ըլլալ հրաշալիքներու հրաշալիքը՝ Փիլիսոփայական քարը, որ կրնար կապարը վերածել ոսկիի:

ԺԹ. դարը անդրադարձաւ, որ գիտութիւնը մարդուն կու տայ ամէն տեսակ կարողութիւն եւ նոյնիսկ արարչութեան կարգ ու սարքէն ներս միջամտելու հնարաւորութիւն: Գիտնականը իր ունեցած կարողութիւնը կրնար գործածել բարի կամ չար նպատակներու համար, նայած իր խառնուածքին եւ ձգտումներուն: Եւ յաճախ կը պատահէր, որ բարիք ապահովելու համար եղած գիւտ մը դառնար պատուհաս:

Ի՞նչ կը հետապնդէ գիտաբեւեւակայական գրականութիւնը:

Մեկնելով գիտութեան ներկայ եւ դալիք նուաճումներէն՝ գիտաբեւեւակայական վիպասանները կը հետապնդեն մարդկային դարաւոր եւ յաւիտենական երազը, այսինքն՝ խորտակել մարդուն անխուսափելի ճակատագիրն եղող մահուան պատնէշը, մէկ խօսքով՝ անոնք կը շարունակեն հին առասպելներու եւ միջին դարու ալքիմիագէտներու ուղին: Անոնք կը շարունակեն որոնել Փիլիսոփայական քարը ո՛չ միայն տարբերուածարաններու մէջ, այլեւ՝ անծանօթ մոլորակներու վրայ, ուր, ըստ իրենց, կ'ապրին ուրիշ յառաջացած քաղաքակրթութիւններ: Մէկ խօսքով՝ անոնք կը փնտուեն գերմարդեր ստեղծելու միջոցները:

Այդ միջոցը միջին դարու ալքիմիագէտներուն համար խորհրդաւոր եւ հրաշագործ բաղադրութիւն մըն էր, որուն կու տային Փիլիսոփայական քար անունը: Այս բաղադրութիւններուն տարաղը անծանօթ կը մնայ, որովհետեւ ալքիմիագէտները կը նախընտրէին մեռնիլ, քան զայն հրապարակել կամ փոխանցել ուրիշի մը, հրաշագործ փոշի մըն էր, որ ունէր զլխաւոր երեք յատկութիւն.

digitised by A.R.A.R.@

— Փիլիսոփայական քարը կրնար ոսկի վերածել կարդ մը մեռելներ եւ, մանաւանդ՝ կազարը։

— Անիկա կրնար դարմանել բոլոր հիւանդութիւնները։

— Անիկա կրնար երկարել կեանքը եւ նոյնիսկ մարդը դարձնել անմահ։

Գիտաբեւեռակայական վէպերու հեղինակները կը նմանին այդ ալքիմիագէտներուն, ա՛յն տարբերութեամբ, որ առաջինները կը մեկնին աւելի հաստատուն տուեալներէ, այսինքն՝ գիտութեան նուաճումներէն։

Ժթ. դարու սկիզբները, երբ տակաւին քիմիագիտութիւնը եւ բնագիտութիւնը նոր հասակ կը նետէին, բժշկութիւնը կը դոնուէր արդէն իր հաստուն տարիքին մէջ։ Եւ այս է պատճառը, որ գիտաբեւեռակայական երանգ ունեցող առաջին վէպին գլխաւոր հերոսը բժիշկ մըն է եւ կը կոչուի Ֆրանսիս-Ոըշթայն, աւելի հիշելի՝ Տոքթոր Ֆրանքենշթայն։

Այս դարհուրելի վէպին հեղինակը անգլիացի ծանօթ բանաստեղծ Փըրսի Շելլիի կողակից Մէյրի Շելլին է։

Այս վէպը, որ լոյս տեսաւ 1817ին, այսինքն՝ վիպագրութեան կազմաւորման տարիներուն, կրնայ նաեւ դասուիլ սարսափի գրականութեան մէջ։ Մէյրի Շելլի, հաւանաբար ազդուած Կէօթէի Ֆաուսթէն եւ Պայրընի ըմբոստ ու յաւակնոտ հերոսներէն, որոնք կ'ուզէին մրցիլ Աստուծոյ հետ, ուզած է անոնց տալ համեստութեան դաս մը։

Ֆրանքենշթայն երիտասարդ եւ անսկզբունք բժիշկ մըն է, որ կ'աշխատի ստեղծել կատարեալ մարդ մը։ Այս ծրագրին յաջողութեան համար ան ո՛չ միայն նոր մահացածներուն մարմնին մասերը կը գողնայ, այլեւ, ի պահանջել հարկին, ոճիրներ ալ կը գործէ։ Մահացածներու մարմինին այդ մասերը կը տանի իր խորհրդաւոր որջին մէջ եւ իրարու կը միացնէ՝ ունենալու համար մարդկային կատարեալ մարմին մը, որուն կը պակսի միայն շունչը։ Այդ շունչը տալու համար՝ կը դիմէ այդ օրերու գիտութեան մեծագոյն նը-ւանումը եղող էլեկտրականութեան։ Էլեկտրական հոսանքը անցնելով մարմնին միացած մասերէն՝ կեանքի կը կանչէ Տոքթոր Ֆրանքենշթայնի ձեռքով կառուցուած մարդկային այդ արարածը եւ երկուքին միջեւ կը ստեղծուի կապ մը, արարողի եւ արարածի խորհրդաւոր կապը։ Արարածին գոյութիւնը կախում ունի արարողին հոգածութենէն...։ Սակայն վերջ ի վերջոյ բեռը այնքան ծանր կ'ըլլայ երիտասարդ բժիշկին համար, որ փախուստ կու տայ՝ լքելով իր արարածը։ Բայց արարածը շուքի մը պէս կը հետեւի իրեն ո՛ւր ալ երթայ։ Վէպին վերջին պատկերը խիստ պատուորիչ է։ Ձարահատ՝ Տոքթոր Ֆրանքենշթայն փախած է բեւեռային սառուցեալ շրջանները, ուր իրեն կը սպասէ մահը, բայց արարածը արդէն գտած է իր հետքերը...

Հարցին բոլոր մասնագէտներուն համար՝ գիտաբեւեռակայական վէպին օրինաւոր հայրը կը կոչուի Ժիւլ Վեռն (1828–1905)։

Հարիւրի մօտեցող իր վէպերուն մէջ, օգտագործելով ժամանակակից գիտութեան կարելիութիւնները եւ անոր ապագայ նուաճումները՝ Ժիւլ Վեռն մարգարէական ներշնչումով մը հախուռնած ու ձեւաւորած է մեր ժամանակներու իրագործումները, կորիզային ռումբէն մինչեւ նոթիլուս սուզանաւը, ուղղաթիռէն մինչեւ պատկերասփիւռը, ասղանաւերը եւ հրթիռները, որոնց շնորհիւ կը կատարուին ճամբորդութիւնները դէպի լուսին եւ երկրին կեդրոնը։

Հերպերթ-Ճորճ Ուէլս (1866–1946) կամուրջ մը կը հաստատէ Ժիւլ Վեռնի եւ մեզի ժամանակակից հեղինակներու միջեւ։

Ժիւլ Վեռնի աշխարհը, որքան ալ երեւակայածին եւ արտակարգ, կը մնար մարդկային, որովհետեւ անոր տուեալները իրական էին։ Ուէլս փորձեց մուտք գործել անծանօթ աշխարհներու սահմաններէն ներս, որոնք ոչ

digitised by A.R.A.R.@

մէկ կապ ունէին իրականութեան հետ։ «Մոլորակներու պատերազմը», «Անտեսանելի մարդը», «Ժամանակի մեքենան», «Առաջին մարդիկը լուսնին վրայ» կը հանդիսանան Ուէլսի ամէնէն ծանօթ գործերը։

Ուրիշ գրագէտներ իրենց աւանդական արտադրութիւններուն համընթաց գրած են նաեւ գիտաբերեւակայական բնոյթ ունեցող վէպեր, ինչպէս Կասթոն Լերուս., որուն հանդիպեցանք ոստիկանական սեռի պարագային։ Կասթոն Լերուի գրիչին կը պարտինք «Հրատ մոլորակի կայանատեղը», «Վամփիռներու պատերազմը», «Արիւնոտ տիկնիկը»։

Անշուշտ երկար պիտի ըլլայ թուել անունները այն բոլոր ծանօթ կամ անծանօթ հեղինակներուն, որոնք գիտակցաբար կամ անգիտակցաբար արտադրած են գիտաբերեւակայական բնոյթ ունեցող վէպեր։ Առանցքէ դիչենք Սթիվընսընի «Տոքթ. Ճեքիլ Էնտ Մրսթր Հայտ»ը, Քանրն Տոյլի «Կորսուած աշխարհը», Ժան Լա Հիրի «Շանթ-ահարող անիւը», եւայլն։

Ինչպէս ոստիկանական, նոյնպէս ալ գիտաբերեւակայական վէպ՝ը ունին համաշխարհային բնոյթ, ա՛յն իմաստով, որ անոնք կը կարդացուին աշխարհի բոլոր երկիրներու մէջ։ Սակայն արտադրութեան գծով կրնանք ըսել, որ անիկա մենաշնորհն է ճարտարարուեստական եւ յառաջադէմ երկիրներու, ինչպէս Մեծն Բրիտանիա, Գերմանիա, Ֆրանսա, Ճապոն եւ, մա՛նաւանդ՝ Միացեալ Նահանգներ։

Այս վերջին երկրին մէջ գիտաբերեւակայական սեռը ո՛չ միայն փնտրուած, այլեւ լայնօրէն շահագործուած մարզ մըն է։ Ո՛չ միայն հոն կը պատրաստուին գիտաբերեւակայական բնոյթ ունեցող շարժապատկերներ եւ կը հրատարակուին մասնայատուկ շարքեր, այլեւ կը հրատարակուին այս սեռին նուիրուած տասնեակներով պարբերաթերթեր։

Գիտաբերեւակայական սեռը ունի իր թեմաները։

Այդ թեմաներուն գլխաւորը մարդկութեան գոյատեւման եւ ապագային մասին տիրող խուլ անձկութիւն է, անձկութիւն մը, որ կու գայ անցեալի խորերէն։ Նախամարդոց մեծագոյն վախն էր արեւին մարելը կամ անշարժանալը։ Ներկայ մարդուն համար կորիզային պատերազմն է եւ կամ արտերկրայիններու արշաւանքը։ Արշաւող արտերկրայինները կրնան ըլլալ մարդակերպ արարածներ, կենդանիներ կամ բոյսեր, բայց նաեւ խորհրդաւոր եւ անտեսանելի ուժեր, որոնք կը տիրանան մարդոց մարմնին ու հոգիին եւ զանոնք կը վերածեն ստրուկներու։

Կարեւոր թեմաներէն մէկն ալ այն վախն է, որ ունինք արդի թեքնոլոժիի ախալ գործածութիւնէն, անհաւասարակշռելի ռոպոթներէն, որոնք յանկարծ կը դառնան անհնազանդ եւ կ՝ըմբոստանան զիրենք պատրաստողներուն եւ գործածողներուն դէմ։ Այս թեման շահագործած է Էյ. Սի. Քլարք, իր հռչակաւոր «2001 — անջրպետի ոդիսականը» գործին մէջ։

Կայ նաեւ փիլիսոփայական եւ բարոյախօսական թեման։ Ո՞ւր կ՝երթայ մարդկային ընկերութիւն մը, որուն աստուածը թեքնոլոժին է։ Իր հռչակաւոր «Ֆարենհայթ 451»ի վէպին մէջ, Ռէյ Պրեատբրի կը նկարագրէ այդպիսի ընկերութիւն մը, ուր կը տիրէ զգացական եւ մտային պարապութիւն մը եւ ուր գիրքը արգիլուած առարկայ մըն է։ Իշխանութիւնները արշաւ բացած են գիրքին դէմ, կը խուզարկեն տուները, կը ձերբակալեն ու կը պատժեն անոնք, որ գիրք կը պահեն։ Ծանր պատիժներու եւ նոյնիսկ մահուան կը դատապարտուին բոլոր անոնք, որոնք կ՝աշխատին փրկել մարդկութեան այս անկրկնելի դանձը՝ գիրքերուն պարունակութիւնը գոց տրվելով։

Հարկաւ գիտաբերեւակայական սեռին կարեւորագոյն թեման անջրպետային ճամբորդութիւններն են։ Անջրպետը կը հանդիսանայ վիպասաններուն եւ գիտնականներուն նուաճելիք միջոցը։ Անջրպետը իր համաստեղու-

digitised by A.R.A.R.@

թիւններով, իր խորհրդաւոր մոլորակներով՝ կը պարզէ նուաճման կարօտ նոր աշխարհներ, նոր էլտորատոներ, ուրկէ մարդկութիւնը պիտի ստանայ իրեն պակսող անհրաժեշտ հում նիւթերը։ Այդ մոլորակները ապագային պիտի ընդարձակեն մարդկութեան կենսական միջոցը՝ նոր Ամերիկան, ուր պիտի գաղթեն մարդկային զանգուածներ։ Ուրկէ՝ դիտաբերեւակայական սեռին դիւցազներգական բնոյթը։

Աստղանաւորդները կը հանդիսանան քսաներորդ դարու թուփտող տպկանները, ոսկեղեղմը որոնող արկոնոթները, նոր ցամաքամասեր որոնող Քոլոմպոսները։

Դիտաբերեւակայական սեռը ժամանցի եւ զբօսանքի գրականութիւն մը չէ միայն, ինչպէս շատեր կը կարծեն։ Անոր գլխաւոր նպատակներէն մէկն է հարցադրել մեր քաղաքակրթութեան ապագան եւ մարդուն լինելութեան հոլովոյթը, ինչպէս նաեւ անոր անձկութիւնը գիտութեան նուաճումներուն եւ իր վախճանին հեռանկարին առջեւ։

Դիտաբերեւակայական սեռը չի սահմանափակուիր թեքնիք իրագործումներով կամ երկարատեւ համբորդութիւններով։ անիկա կը ձգտի աւելի յարձրին։ Անիկա գերբնականին փնտռտուքն է, թերեւս այլուր փոխադրուած գրախտին որոնումը, ուր անվեհեր ուխտաւորը կը յուսայ գտնել երմէ յաւէտ ցաժնուած իր մարդ եղբայրները։

Սխալ է կարծել նաեւ, որ այս սեռը մաս կը կազմէ մանկապատանեկան գրականութեան։ Շատեր, որոնք իրենց զարգացածի հովեր կու տան, դիտաբերեւակայական գործերը կը դասեն հեքիաթներու շարքին, այն տարբերութեամբ միայն, որ երբեմնի պարիկները, գամաճները, մոգական հիպոտները, կախարդուած գղեակները, գեւերը եւ խորհրդաւոր ուժերը փոխարինուած են հրատցիներով եւ էլեկտրոնիք ու դիրարդիական կազմածներով։

Դիտաբերեւակայական վէպերը կառուցուած են ենթադրութիւններու վրայ, որոնց մէկնակէտը գիտութեան յարատեւ նուաճումներն են։ Այդ ենթադրութիւնները կրնան չհամապատասխանել իրականութեան, սակայն ընթերցողը պէտք է զանոնք ընդունի իբր իրականութիւն, կարենալ հետեւելու համար վէպի հոլովոյթին եւ ճշմարտանման դանել դէպքերու յաջորդականութիւնը։ Անիկա կը նշանակէ, որ այս տեսակի վէպ մը, մեկնելով հանդերձ ենթադրական տուեալներէ, պէտք է ունենայ իր ներքին տրամաբանութիւնը եւ կառոյցը։

Սակայն ի՞նչ է քննադատներուն կարծիքը այս սեռի գրական արժէքի մասին։ Ոմանց համար դիտաբերեւակայականը երկրորդական սեռ մըն է, որ իր յաջողութիւնը կը պարտի մեր ժամանակներու մտայնութեան։ Ուրիշներ այս սեռին մէջ կը գտնեն գրականութեան ապագան եւ փրկութեան լաւագոյնը։

Անշուշտ որ դիտաբերեւակայական բոլոր վէպերը եւ պատմուածքները հեռու են գլուխ-գործոցներ ըլլալէ, սակայն անոնց մէջ չեն պակսիր գրական արժանիքներով օժտուած գործեր, որոնք նուազ արժէքաւոր չեն մրցանակներու տիրացած գործերէ։ Այդ գործերը, որոնցմէ տուինք քանի մը անուններ, արդէն մաս կը կազմեն Գրականութեան։ Այդ անուններուն վրայ կրնանք աւելցնել ճորճ Օրուէլի «1984»ը, Լավրենթիի «Վախարդուած լեռները», Սիմաքի «Վաղը՝ շաբաթը», Լեռիսի «Երկրագունդի լուրիները»։

Դիտաբերեւակայական գրականութեան առանցքը մարդն է եւ տիեզերքը։ Աւանդական գրականութիւնը աւելի կը ծանրանար մարդուն վրայ, կը վերլուծէր անոր ինքնութիւնը եւ հոգեբանութիւնը, որովհետեւ հոն՝ աչերդքը տեսիլ մըն էր, իսկ կարեւորը՝ մարդկային փոխյարաբերութիւնները։ Դիտաբերեւակայական սեռի պարագային շեշտը դրուած է մարդուն եւ տիե-

digitised by A.R.A.R.@

վերջին յարաբերութեան վրայ։ Հերոսը, անհատը քիչ անգամ կը գործէ առանձին, ան ընդհանրապէս մաս կը կազմէ ամբողջութեան մը, խումբի մը։ Հին էպոսները ընդհանրապէս անհատի դիւցազներգութիւններն էին, գիտաերեւակայական սեռը՝ հաւաքականութեան մը դիւցազներգութիւնն է, դիւցազներգութիւն մը, որ կ'աշխատի ստեղծել իր առասպելները եւ չեչտը կը դնէ այն իրողութեան վրայ, որ մարդկութիւնը, արդի մարդկութիւնը, չընորհիւ գիտութեան նուաճումներուն, երկրայինէն աւելի սկսած է դառնալ անջրպետային արարած մը եւ նետուած է անջրպետային տարողութիւն ունեցող արկածախնդրութեան մը մէջ։

Հակառակ նախապէս մեր մատնանշած անձկութեան եւ յոռետեսութեան, գիտաերեւակայական վէպերն տեսարանները քոլորովին մութ չեն տեսներ մարդկութեան ապագան։ Որովհետեւ մարդ արարածը իր մէջ ունի անսահման կարելիութիւններ։ Նոյնիսկ անկարելիին առջեւ մարդը չի հրաժարիր պայքարէն։

«Աշխարհի ծոգովուրդները,— *կը դրէ Թոպրրթ Հենլին,*— այժմ կը մղեն պայքար մը, շատ երկար պայքար մը, որուն ելքը անորոշ է։ Այս պայքարին մէջ միլիոններ մեռած են արդէն եւ հաւանաբար ուրիշ հարիւրաւոր միլիոններ մեռնին 2000 թուականէն առաջ։ Բայց բոլորը պիտի չմեռնին»։

Իր այս տեսակէտը Հենլին կը բացատրէ՝ ըսելով.

«Ես խորունկ ու հաստատ վստահութիւն ունիմ մարդուն վրայ՝ ինչպէս որ է, անկատար եւ յաճախ ատելի եւ աւելի մեծ վստահութիւն ունիմ իր կարողականութեան վրայ։ Ի՞նչ կարեւորութիւն ունին դժուարութիւնները, երբ մարդը զանոնք միշտ ալ կը յաղթահարէ»։

Գիտաերեւակայական վիպասանները կարելի է բաժնել երկու դասակարգի։ Կան անոնք, որոնք կ'արտայայտեն իրենց ապրուստը ապահովելու համար, լեցնելու համար պարբերաթերթի մը էջերը կամ շարքի մը նախածրագրուած թիւերը, իսկ կան անոնք, որոնք կ'ուզեն բան մը ըսել եւ այդ բանը ըսել լաւ ձեւով։

Գրականութիւնը հետաքրքրողը այս երկրորդ դասակարգն է, որուն մէջ կարելի է զանազանել անուանի գրագէտներ, ինչպէս՝ Հաքսլի, Ուէլզ, Ժիւլ Վեռն, Օրուէլ կամ Փիէռ Պուլ։ Ասոնք ընդհանրապէս կ'անցնին առեւտրական նկատումներէն անդին եւ մեծ կարեւորութիւն կու տան կառոյցին եւ ոճին։

Ասոնց կողքին կան իսկական դիտնականներ եւ գիտութեան թլնամիներ, որոնք կ'ուզեն արտադրել լուրջ գործ մը, ինչպէս՝ Ցրէտ Պոյլ, Ազիմով, Հենլին, Էֆրեմով, Լեուիս, Եւայլն։

Եւ կան անոնք, որոնք կը ծանրանան հարցին փիլիսոփայական եւ բարոյական երեսին վրայ, ինչպէս՝ Ցրեատերիք Փոհլ, Վան Վոկթ եւ, մ'նաւանդ՝ «2018 թուական», «Մ'ադ, վերադարձիր երկրագունդ» եւ «Ժամանակին յաղթանակը» վէպերուն հեղինակ Ճէյմս Պլիշ։

Գիտաերեւակայական սեռը կ'ապրի իր բարգաւաճութեան շրջանը, սակայն անոր ապագան անորոշ կը մնայ։ Ոմանք կը կարծեն, որ թեմաներու սպառումը կրնայ պատճառ դառնալ անոր անկման։ Շատեր սակայն կը կարծեն, որ գիտութեան իրագործումները, որոնց դագաթնակէտը եղաւ Յուլիս 1969 թուականը, երբ առաջին մարդը ոտք դրաւ լուսնին վրայ, նոր հորիզոններ պիտի բանայ գիտաերեւակայական սեռին առջեւ եւ նոր ներշնչում պիտի տայ անոր վիպասաններուն։

ՆՈՒՊԱՐ ՉԱՐԽՈՒԴԵԱՆ

(Շար. 7 եւ վերջ)

digitised by A.R.A.R.@

Կ. ՇԱՀԻՆԵԱՆ

ՊԱՏԿԵՐԱԿԵՐՏՈՒՄԸ ԳՐԱԿԱՆ ԵՐԿԻՆ ՄԷՋ

Արուեստագէտ գրողին գերագոյն նպատակն է ստեղծել երկ մը, որուն լեզուն միաժամանակ իր խորքն ու արտայայտչամիջոցն է։ Ու գրական երկին եւ, մասնաւորաբար, բանաստեղծութեան մէջ քննադատին համար դժուարագոյն հարցերէն մէկն է զատորոշել նիւթը ձեւէն։ Որովհետեւ արուեստի մէջ գոյութիւն չունի դաղափար մը, զոր կարելի ըլլայ անջատել իր ձեւէն. եւ եթէ մենք կրնանք նիւթն ու ձեւը իրարմէ անջատել տրամաբանօրէն, իրականութեան մէջ անոնք իրարմէ անջատ գոյութիւն չեն կրնար ունենալ։

Արուեստի գործի մը ամբողջականութիւնը, ի տարբերութիւն ուսողական ամբողջականութեան, մասերու գումարումէն չի յառաջանար։ Այդ ամբողջականութիւնը մասերու միջեւ փոխյարաբերութիւնն է, եւ ոչ՝ մասերու գումարը, ինչպէս է պարագան ուսողական ամբողջականութեան։ Արուեստի գեղեցիկութիւնը կամ գեղարուեստը կը գտնուի այդ փոխյարաբերութեան մէջ, եւ գրեթէ անկարելի է պատկերացնել գրական ստեղծագործութիւնները քննարկելու մեթոտ մը՝ ամբողջին եւ անոր մասերուն միջեւ փոխյարաբերութեան տարողութեան թափանցելէ դուրս։

Ռընէ Ուելէք եւ Օսթըն Ուորրն իրենց «Գրականութեան տեսութիւն» հատորին մէջ կ'ըսեն, թէ նախընտրելի է գեղագիտական առումով չէզոք բոլոր տարրերը կոչել «նիւթեր», եւ այն եզրակը, որուն միջոցով մնացեալ տարրերը իրենց գեղագիտական ներդործականութիւնը (efficiency) կը նուաճեն, անուանել «վառոյց»։ Զոյգ հեղինակները կ'աւելցնեն, որ այս զատորոշումը «բովանդակութեան» եւ «ձեւի» պարզ վերանայումը չէ, որովհետեւ «նիւթեր»ը կը բովանդակեն թէ՛ այնպիսի տարրեր, որոնք նախապէս բովանդակութեան մասնիկները կը նկատուին եւ թէ նախապէս ձեւական նկատուող մասեր։ Իսկ «վառոյց»ի յղացքը կը պարփակէ բովանդակութիւնը եւ ձեւը ա՛յնքան, որքան անոնք երկուքը կարմակերպուին գեղագիտական նպատակներու համար(1)։

Սակայն գրական երկի մը մէջ գեղագիտական առումով չէզոք «նիւթեր»ու եւ այլ տարրերու գեղագիտական ներգործականութեան ձեւաքերման եղանակին զատորոշումը եւս դիւրին չէ։ Որովհետեւ որեւէ «նիւթ» կարելի չէ վերջնականօրէն չէզոք ու անշարժ նկատել, տրուած ըլլալով, որ գրական ստեղծագործութիւնը կը բացատրուի կամ կը մեկնաբանուի զանազան մշակոյթներու կամ մշակութային ժամանակաշրջաններու ընդմէջէն, եւ մասամբ ենթակայ է մշակութային տուեալ ժամանակաշրջանի մը ստածողութեան։ Գրական երկին այս յաբափոփոխ ու շարժուն վիճակը կը բխի «երկրորդ լեզուի» ստեղծումէն։ «Եթէ բառը ունենար միայն մէկ իմաստ, ա՛յն՝ որ բառարանին մէջ նշուած է,— կ'ըսէ Ռոլան Պարթ,— եթէ երկրորդ լեզուն չըխախտէր և չազատագրէր լեզուի հաւատարիութիւնը, գոյութիւն չէր ունենար նաև գրականութիւնը»։ «Երկրորդ լեզուն» միշտ վերաթարմացման հոլովոյթի մը մէջ կը գտնուի, միշտ նոր գիծերով ու խորքերով կրնայ հանդէս գալ։ Անշուշտ, այս վերաթարմացումին տարողութիւնը կախում ունի ընթերցումի ներգործակա-

digitised by A.R.A.R.@

նութեան տարողութենէն, եւ ստեղծագործութեան «չէղոքացուած» տարրերը վերակենդանացնելու ընթերցողին կարողութենէն։ Այս պատճառով, քերթուածի ընթերցումի եղանակը որոշ առումով կարելի է համարել անոր ձեւը, եւ ձեւին արժեւորումը պէտք է անպայմանօրէն կապել անոր պաշտօնին, այսինքն՝ այդ ձեւին տպաւորելու կարողութեան հետ։

Այս առումով՝ դրականութիւնը լեզու մըն է, որ յարատեւօրէն նոր իմաստներով կը լիցքաւորուի կամ նոր իմաստներ կը թելադրէ։ Գրական երկը որքան ալ բառերու վրայ հիմնուի, կը յատկանշուի բառերը շրջանցելու կարելիութեամբ կամ կարողութեամբ։ Այս շրջանցումը կը կատարուի գլխաւորաբար պատկերի միջոցով։

Գրականութեան մէջ լեզուն անմիջականօրէն կը ծառայէ կեանքի պատկերաւորումին, այսինքն՝ ընթերցողին կը ներկայացնէ մարդկային կեանքի թանձրացեալ վիճակներ։ Այս պատճառով՝ քննադատին ուսումնասիրութեան գլխաւոր առարկան պէտք է դառնայ լեզուի դերը պատկերակերտումի գծով։

Գրողը պատկերաւորութեան կրնայ հասնիլ թէ՛ բառային կամ դարձուածքային պատկերներու (համեմատութիւն, փոխաբերութիւն, փոխանունութիւն, շրջասութիւն, կրոթեսք, եւայլն) միջոցով, եւ թէ տուեալ իրի մը կամ երեւոյթի մը էական կողմերու այնպիսի հարազատ բացայայտումով, որ վերջաւորութեան կը կազմուի կենդանի պատկեր մը, առանց օգտագործելու բառային կամ դարձուածքային որեւէ պատկեր։ Սրինակ, Վարուժանի «Պատուէր» քերթուածին մէջ կը հանդիպինք հետեւեալ քառատողին.

Տղեկ մ'ուշիմ, եւ բոպիկ, առաջնորդէ պիտի քեզ
Տուն հայրենի՝ շինուած ջինջ, զով առուակի մեզերիմն,
Որուն քիւին կը մնջեն ազաւնիներ տարփակէզ,
Եւ պատերուն երկայնքին վառ կակաչներ կը ծաղկին։

Հոս կը հանդիպինք «տարփակէզ ազաւնիներ» եւ «վառ կակաչներ» բառային կամ դարձուածքային պատկերներուն, որոնք որոշ չափով փոքրառու եւ նորութեան հետամուտ ժամանակակից ընթերցողի մը կողմէ բաւական «մաշած» կըրնան նկատուիլ ու նոյնիսկ պատկեր չհամարուիլ, քանի որ այդ պատկերները գործած են շատ ընթացիկ լեզուական արտայայտութիւններ։ Այսուհանդերձ, նոյնիսկ այդ «մաշած պատկերներուն չէզոյութեան պարագային (օրինակ, երբ «տարփակէզ» բառին փոխարէն գործածուի «տարփայոյզ»ը, եւ «վառ»ին փոխարէն՝ «կարմիր»ը), յիշեալ քառատողը ամբողջութեամբ դիտուած՝ կրնայ կազմել առանձին պատկեր մը։

Ինչպէս Ռեւէրդի եւ Օսթրն Ուորրն իրենց «Գրականութեան տեսութեան» մէջ կը թուեն պատկերակերտումի մէջ գոյութիւն ունեցող զանազան գաղտնիքներ։ Այսպէս, գոյութիւն ունի կարեւոր գաղտնիք մը հաստատուն պատկերակերտումի (static imagery) և շարժական պատկերակերտումի (kinetic imagery) միջեւ։ Իսկ համազեղագիտական (synaesthetic) պատկերակերտումը այն է, որ երկու զգայարանքներու միջեւ փոխանցում կը կատարէ· օրինակ, ձայնը կը վերածէ գոյնի։

Վերջապէս, գոյութիւն ունի բանաստեղծութեան ընթերցողին համար օգտակար գաղտնիք մը՝ «կաշկանդուած» և «ազատ» պատկերակերտումներու միջեւ։ Առաջինը՝ լսողական ու դնդերային պատկերակերտում մըն է, որ անհրաժեշտաբար հանդէս կու գայ նոյնիսկ երբ ընթերցողը կը կարդայ մտովի, եւ բոլոր ասակ ընթերցողներուն մօտ կը յատնշացնէ մօտաւորապէս նոյն ազդեցութիւնը։ Իսկ երկրորդը՝ տեսողական կամ այլ տեսակի, շատ կը տարբերի անձէ անձ կամ տիպարէ տիպար։

«Տեսութեան» գոյգ հեղինակները կը յիշեն նաեւ նշանաւոր քննադատ Ի՛ֆշրըտսի ա՛յն կարծիքը, ըստ որուն՝ ինչ որ պատկերի մը ներգործականութիւն կու տայ, անոր կենսունակութենէն (vividness) աւելի անոր հանգամանքն է իրբեւ դէպք մը, որ իւրայատուկ ձեւով առնչ-

digitised by A.R.A.R.@

եած է զգայնութեան (sensation)։

Ուելէք եւ Ուորրըն ասկէ կը հետեւցընեն, թէ պատկերին ներգործականութիւնը կու գայ զգայնութեան ներկայացում մը ըլլալու անոր համադրմանէն։

«Նոյնիսկ տեսողական պատկերները պէտք չէ առանձնացուած դիտուին նկարագրական բանաստեղծութեան մէջ։ Եւ «պատկերաբաշխ» կամ «Գիրքական» բանաստեղծութիւն գրել փորձողներէն քիչեր յաջոդած են իրենք զիրենք ահմանափակել արտաքին աշխարհի պատկերներով։ Իրապէս, անոնք հաղուադէպօրէն ուզած են այդպէս ընել։ Էզրա Փաունտ՝ բանաստեղծական քանի մը շարժումներու տեսաբանը՝ «պատկեր»ը սահմանած է ո՛չ իբրեւ պատկերային ներկայացում (pictorial representation), *այլ՝ իբրեւ «ա՛յն, որ կը ներկայացնէ մտային ու զգայական բարդութիւն մը բոպէի մը ընթացքին», «տարբեր դաղափարներու միացում մը»*(2)։

Գիտնական Մէթիսըն իր «Թ. Ս. Էլիոթի վաստակը» անունով ուսումնասիրական հատորին մէջ Փաունտի կողմէ գրական պատկերին տրուած վերոյիշեալ բնութագրումը կը նմանցնէ Էլիոթի «առարկայական համադրո»ին։ «Ամուսնի ձեռով զգացում արտայայտելու միակ ճամբան «առարկայական համադրո» մը գտնելն է, — կ'ըսէ Էլիոթ։ — Այլ բառերու շարք մը, կացութիւն մը, դէպքերու շղթայ մը, որ պիտի ըլլայ այդ յատուկ զգացումին նշանացոյցը (formula)։ *Այնպէս որ՝ երբ կը տրուին արտաքին դէպքերը, որոնք զգայական փորձառութեան պէտք է յանգին, անմիջապէս կը վերակոչուի զգացումը»*(3)։ *Մէթիսըն կ'աւելցնէ, թէ ինչպէս Էլիոթի «առարկայական համադրո»ի ըմբռնումը, նոյնպէս Փաունտի ահմանումը կարելի է կիրարկել Էլիոթի հետեւեալ տողին վերլուծման մէջ.*

Կեռնիքս սուրճի դգալներով չափեցի...

Թէեւ Փաունտի քննադատական կարծիքներու գերակշիռ մասը կընայ առիթ տալ եզրակացնելու, թէ ան կ'ուզէր, որ ընթերցողը կամ քննադատը բանաստեղծութիւնը կարդայ իբրեւ «պատկեր», ճիշդ այնպէս՝ ինչպէս կը դիտէ պատատառ մը, եւ այս ձեւով այդ ընթերցողը իր յայտնագործումը կատարէ իր իւրայատուկ դիտողականութեան միջոցով, սակայն, ինչպէս Ուելէք եւ Ուորրըն կը նշեն, ան միշտ կողմնակից չէ եղած գրական երկի մը ըմբռնումի ընթացքին դիտողականութեան տիրապետող դեր չնորհելու կեցուածքին։

Ցամենայնդէպս, պէտք է ընդդծել, որ գրականութեան մէջ պատկերակերտումը միայն տեսողական չէ։ Եւ, կրկնենք, արուեստի գործի մը ամբողջականութիւնը կը դոյանայ ո՛չ թէ անոր մասերուն դումարումէն, այլ՝ այդ մասերուն միջեւ փոխյարաբերութենէն։ Այս պատճառով, ինչպէս գրական ստեղծագործութիւնները, նոյնպէս ալ գրական պատկերները (իրենց զանազան տեսակներով) պէտք է քննարկել անոնց ներքին եւ արտաքին փոխյարաբերութիւններու շրջանակներուն մէջ։

Կ. ՇԱՀԻՆԵԱՆ

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

1) René Wellek and Austin Warren, «Theory of Literature», Penguin Books, 1970, էջ 140-141։

2) Նոյն, էջ 187։

3) Selected Prose of T. S. Eliot, Edited by Frank Kermode, Faber and Faber, 1975, էջ 48։

digitised by A.R.A.R.@

Ս. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ-ՏԱՏՈՅԵԱՆ

ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ՆՈՐԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐԴԻԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Յառախս չփոթ կերպով սահմանուած կամ միայն քանակականօրէն զատորոշուած այս երիք եզրերը, առնուազն արուեստի մէջ, կը բնութագրեն իրարմէ հիմնովին տարբեր իմաստներ.— արդիականութիւնը յատկանիշ է, արդիապաշտութիւնը՝ գեղարուեստական ուղղութիւն, նորարարութիւնը՝ գործելակերպ (երբեմն ալ՝ սիստանչան):

Այս եզրերուն (եւ տակաւին բազմաթիւ ուրիշներու) գեղագիտական ճշգրիտ բովանդակութեան շուրջ գոյութիւն ունեցող անորոշութիւնը ուղղակի հետեւանքն է Սփիւռքի մէջ արուեստաբանութեան բացակայութեան (մասնաւորաբար կերպարուեստին առընչուած), մասամբ նաեւ՝ modernism բառին թարգմանութեան, իբրեւ արդիականութիւն, արդիապաշտութիւն եւ արդիասիրութիւն; կարգ մը լեզուաբաններ «արդիապաշտութիւնը» կը նկատեն չափազանց արդիասիրութիւն, «արդիականը»՝ արդիասէր, մոտերնիստ, որ, իր կարգին, կը նշանակէ նորութիւններ սիրող. իսկ «նորարարութիւնը»՝ նորութիւններու հեւամոլութիւն ու իրագործումը:

Սովորական գործածութեան ընթացքին, իմաստաբանական այս ակնարեւ չփոթը լուրջ խնդիրներ չի յարուցեր. սակայն, արուեստի պատմութեան եւ առհասարակ գեղագիտութեան մարզին ներս, անիկա կը ստեղծէ դժուարութիւններ: Արդիականութեան, արդիապաշտութեան եւ նորարարութեան փոխն ի փոխ գործածութիւնը, իբրեւ միեւնոյն յղացքին երանգաւորումները՝ կը մատնանշէ ենթակային անտեղեակութիւնը. իսկ այս բառերուն «լրագրական» իմաստը կը հիմնուի մեծ չափով ժխտական սահմանումի մը վրայ (ժխտական բառը առնուած՝ ոչ-ստորոգիչ իմաստով), այսինքն՝ անոնք կը բացատրուին իբրեւ հակադիր երեւոյթներ՝ դասական եւ իրապաշտ ուղղութեանց, որոնցմով կը հակնան սովորական եւ ճանաչելի ձեւերու օգտագործումը միայն:

Պարզ է, որ արդիականութիւնը դասականութենէն խլում չէ, որովհետեւ երկուքն ալ անհրաժեշտօրէն չեն սահմանուիր ժամանակի ստորոգութեամբ: Թէեւ ճիշդ է, որ դասականութիւնը՝ պատմականօրէն առնուած, կը բնորոշէ հնագոյն դպրոցները (յունական եւ հռոմէական), սակայն տեսականօրէն անիկա գեղարուեստական ուղղութիւն մըն է, որ անպայմանօրէն միա՛յն անցեալին չի պատկանիր: Ուրեմն, «դասականը» հինը չէ, ոչ ալ «արդիականը»՝ նորը: Շարունակելով տրամաբանութեան նոյն վրիպանքը արդիականութեան սահմանումին նկատմամբ, կը կարծուի, թէ արդիապաշտութիւնը՝ արդիականութեան (իբրեւ կեցուածք) պաշտօնականացումն է ինքնուրոյն գեղարուեստական ուղղութեան մը մէջ: Պարզ է, որ այս սահմանումը հիմնովին անընդունելի է: Տակաւին, արդիապաշտութիւնը իր ծայրայեղ ձեւով նորարարութիւն չէ, որովհետեւ այս երեք եզրերը (արդիականութիւն, արդիապաշտութիւն եւ նորարարութիւն) դասականութենէն կամ իրապաշտութենէն ասոյնանական եւ հանգրուանային բաժանումի մը փուլերը չեն ներկայացներ: Իրողութիւնը այն է, որ ընդհանուր առմամբ ճիշդ չէ հիմնուիլ օրեւէ յղացքի ժխտական սահմանումին վրայ, որովհետեւ ժըխ-

digitised by A.R.A.R.@

տական սահմանումները՝ իրենց ընդարձակութեամբ եւ անորոշութեամբ, առհասարակ յստակ տեղեկութիւններ չեն փոխանցեր իրենց առարկային մասին։ Այսինքն՝ այս պարզայնին արդիականութիւնը սահմանել իբրեւ «հակա-դասականութիւն» կամ «հակա-իրապաշտութիւն»՝ կը ստեղծէ աւելի թիւր հասկացողութիւններ, քան թէ կը բնորոշէ տուեալ եզրը։

Արդիականութիւնը այժմէականութիւն է, իսկ իբրեւ գեղագիտական եզր՝ անիկա կը նշանակէ ուղղակի եւ անմիջական առընչուածութիւն տուեալ ժամանակին եւ անոր խնդիրներուն։ Այս առընչուածութիւնը բնականաբար ունի իր ձեւարանական կողմն ալ, սակայն այդ չէ արդիականութեան նախապայմանը։ Ճիշդ է, որ արուեստի գործին ձեւական կողմը ուղղակիօրէն կը պայմանաւորուի իր պարունակած դաղափարներովը, սակայն անիկա նա'եւ ենթակայ է ժամանակաշրջանի կենցաղային ազդակներուն, տեսակէտներուն։ Նկարիչը իրերը կը տեսնէ ըստ այդ պայմաններուն տրված ֆիզիքական-հոգեբանական «ոգիներուն», «գիծերուն»։ Արդ ակնարկ մը՝ տարբեր ժամանակներու պատկանող նկարներու վրայ, կը հիմնաւորէ այս նկատողութիւնը։ Բայց ձեւական հարազատութիւնը արդիականութիւն չ'ապահովեր հեղինակին։ Այս դարու մենծագոյն կերպարուեստագէտներէն Մ. Գ. Էշերը գործածած է չափազանց «մինիմալիստական» ձեւեր, նիւթեր եւ արտայայտութեան միջոցներ. սակայն իր գործը դերազանցապէս արդիական է, այսինքն՝ ա'յս դարուն մարդոց եւ հարցերուն առընչուած։ Ուրեմն, արդիականութիւնը ձեւական յատկանիշ չէ. ձեւերու նորութիւնը գործը արդիական չի դարձներ։ Նոյն ժամանակին մէջ ապրող եւ ստեղծագործող երկու նկարիչներ կրնան ունենալ հակադիր ոճեր, մէկը՝ ծայրայեղօրէն վերացական, միւսը՝ ֆիկիւրատիւ, եւ կարելի է երկուքն ալ հաւասարապէս արդիական նկատել։

Ձեւապաշտական մօտեցումները, երբեմն ալ՝ մակերեսային արժեւորումները, առաջնորդած են հասարակութիւնը արուեստները տեսնելու երկու ստորոգութիւններու տակ — դասական (կամ՝ իրապաշտ) եւ արդիական (կամ՝ վերացական)։ Աւելի՛ն. այս երկուքը նկատել իրարու հակադիր ուղղութիւններ, իբրեւ թէ արդիականութիւնը առաջացած ըլլար իբր «հակա-դասականութիւն»։

Դասականութիւնը (classicism), ինչպէս Շ. Ռ. Պէրպէրեան կ'ըսէ, սահմանուած է կա'մ շատ նեղ եւ կամ շատ լայն տարազներով, եւ երկու պարագաներուն ալ սահմանումները վրիպած են։ Դասական չի նշանակեր միա'յն տիպարային, օրինակելի, հետեւելի գործ (սկսնակներու համար). անիկա նա'եւ չի նշանակեր միայն յունական եւ հռոմէական մշակոյթն ու արուեստները բնորոշող եզր։ Իր գեղագիտական դասախօսութեանց մէջ, Շ. Ռ. Պէրպէրեան կ'ըսէ.

«Արուեստի էութեան իմացման տեսակէտով (դասականութիւնը)՝ ձեւապաշտութիւն է. Արուեստագիտական ստեղծագործութեան պայմանաւորման տեսակէտով՝ բանապաշտութիւն. Արուեստի դերին, վախճանին տեսակէտով՝ Տիեզերականութիւն. եւ Արուեստի մէջ իտէականի սահմանումի տեսակէտով՝ Գեղապաշտութիւն...» («Գեղագիտութիւն եւ գեղարուեստ», էջ 61)։

Ուրեմն, դասական գործը կ'ենթադրէ արուեստագէտին ստեղծագործական ուժերուն ամբողջական գործունէութիւնը՝ բանականութեան սկզբունքներուն ենթակայ, ի խնդիր կատարեալ, տիեզերական եւ յաւիտենական ճշմարտութեանց ու գեղեցկութեանց վերբերումին։ Ճաստակ է, որ իբրեւ սահմանում, անիկա շատ սեղմ եւ շատ «քացարձակ» է, հետեւաբար՝ կը նսեմացնէ

digitised by A.R.A.R.@

հոգեկան-զգացական ուժերուն դերը ստեղծագործական աշխատանքին մէջ։ Բայց միշտ ալ, ամէն սահմանում պարզաբանում մըն է եւ որոշ չափով ենթակայ հեղինակին խառնուածքին։ Ցիշեալ սահմանումը Գէրպէրեանի գեղագիտութեան մասին ներդաշնակ տեսակէտ մը կը պարզէ, ասկայն անիկա նաեւ մասչելի կը դարձնէ դասականութեան նման բարդ յղացք մը։ Այն՝ ինչ որ կ'ուզենք շեշտել հետեւեալն է.— եթէ դասականութեան մէջ արամաբանութեան եւ չափի տարրերը ունին առաջնակարգ կարեւորութիւն, անոնք անհրաժեշտօրէն չեն անտեսուած արդիապաշտութեան մէջ։ Նոյնիսկ այսպէս կոչուած «հակա-արամաբանական ուղղութեանց մէջ, ֆրոյիզմի կամ գերիրապաշտական դպրոցներուն նման, իրականութեան «անարամաբանականութիւնը» արտայայտելու համար կ'օգտագործուին իմացակա՛ն ուժեր։ Նման օրինակ մըն է փիլիսոփայութեան կարեւորութեան եւ անհրաժեշտութեան փաստարկը։ Փաստելու համար փիլիսոփայութեան անմիջական դոյութիւնը, Արիստոտէլ կ'ըսէ իր «Ցորդորական»ին մէջ, թէ նոյնիսկ անոնք, որ կը ժխտեն անոր դոյութիւնը, կը դիմեն փիլիսոփայութեա՛ն միջոցներուն, առով իսկ կ'ապացուցէն փիլիսոփայութեան դոյութիւնը։

Զկայ ոչ-բանական արուեստ։ Նոյնիսկ վիպապաշտութիւնը (romanticism), որ կու գար իբրեւ հակազդեցութիւն դասականութեան բանապաշտութեան (rationalism), շեշտը դնելով զգացումին ու հոգիի՛ն վրայ, վերջին հաշուով ինքն ալ, իր կարգին, կ'անցնէր դասականութեան կողմը. Կէօթէի «Ֆաուստ»ը կամ Հիւկոյի եւ ժամանակակիցներուն գործերը «դասական» են այսօր։

Դասականութեան այս հասկացողութեամբ կարելի չէ սահմանել «արդիականութիւնը» իբրեւ հակա-դասականութիւն։ Ի՛նչ իմաստ ալ տրուի անոր, հակազդեցութիւն մը չի կրնար նկատուիլ, որովհետեւ իբրեւ յատկանիշ, անիկա զուրկ է դաղափարաբանական բովանդակութենէ։ Ամէն գործ իր ժամանակին նկատմամբ կրնայ արդիական կամ հակառակը ըլլալ եւ կը դասականանա՛յն գործերը, որոնք չեն կորսնցներ իրենց արդիականութիւնը՝ իրենց պարունակած ճշմարտութիւններուն եւ գեղեցկութիւններուն տիեզերականութեան շնորհիւ։ Շէյքսպիրի, Մոլիէրի, Գրեխովի թատերգութիւնները գասական են եւ միաժամանակ, եւ մա՛նաւանդ՝ արդիական։ Նոյնն է պարագան Թինթորէթոյի, Վան Կոգի եւ Փիքասոյի նկարչութեան։

Երբ արդիականութեամբ կը հասկցուի պարզապէս եւ միա՛յն ոճային նորարարութիւն, եւ անիկա կը վերածուի գեղարուեստական ուղղութեան մը, որ ձեւական նորութիւնը կ'առնէ, իբրեւ գեղեցկութեան չափանիշ՝ արդիւնքը կ'ըլլայ «նորարարութիւն»։ Ընդհանուր առմամբ նորարարութիւնը՝ ուշադրաւ դառնալու աշխատանքը, ընկերային-հոգեբանական գոհունակութեան «պակաս»ի մը ներկայութեան հետեւանքն է, քան գեղագիտական լուրջ տեսակէտներու արտայայտութիւնը։

Արդիականութիւնը եւ նորարարութիւնը ընդհանուր ոչինչ ունին արդիապաշտութեան հետ. մէկը միւսին շարունակութիւնը չէ, ոչ ալ՝ ատիճանական զարգացումը։

Արդիապաշտութեան անցնելէ առաջ, լուսաբանութիւն մը պէտք է կատարել «Արդի արուեստին» (Modern Art) մասին։ Արդի բառը ոճի կամ բնոյթի բացայայտում չէ, այլ՝ ժամանակի։ «Արդի արուեստը» ամբողջութիւնն է այն գործերուն (եւ անշուշտ գեղարուեստական ուղղութեանց), որոնք անմիջապէս կը յաջորդեն 19րդ դարու սկիզբը գործած՝ իրապաշտ շարժումէն, այսինքն՝ անիկա կը սկսի տպաւորապաշտութեամբ եւ կը շարունակուի մինչեւ այսօր։ «Արդի» մասնաւորաբա՛ր չի նշանակեր վերացական (abstract),

digitised by A.R.A.R.@

նոյնիսկ եթէ վերացական ոճեր, ոչ–ակադեմական ձեւեր սկսէին գործածուիլ Արդի արուեստին» մէջ։

Արդիապաշտութիւնը ինքնին ուղղութիւն մըն է «Արդի արուեստին» մէջ, որ, իր կարգին, կը պարունակէ բազմաթիւ երեւոյթներ։ Արդիապաշտութիւնը կը հիմնուի իրականութեան որոշ հասկացողութեան մը վրայ, անիկա չեշտը կը դնէ մարդուն եւ իր շրջապատին, անհատին եւ իրականութեան (մասնաւորաբար ընկերային պայմաններուն) արմատական, էական կա՛ն տարբերութեան վրայ։ Թէեւ անձնակեդրոն, բայց խորապէս մարդկայնական (հիւմանիստական) այս աշխարհահայեացքը իր արդարացումը կը դտնէ մարդուն ողբերգական կացութեան մէջ, անոր առանձնութեան՝ իբրեւ ուղղակի հետեւանքը ներքին եւ արտաքին իրականութիւններու բաժանումին։ Արդիապաշտը կը մերժէ ընկերութիւնը, հոն մասնանշելով բովանդակուած մակարդակները, մարդկային արժէքներու կորուստը։ Դրական դաստիարակութեան մը բացակայութեան, անիկա կը մատնուի անյաղթահարելի յուսալքումի, անձկութեան։ Արդիապաշտին դժգոհութիւնը դասական իրապաշտներուն կեցուածքէն տարբեր պատճառներ ունի, նաեւ՝ տարբեր հետեւանքներ իւրաքանչիւրին արուեստին վրայ։ Պալզաքի, Թոլսթոյի, Կոկոլի, Սթանտալի եւ ուրիշներու իրապաշտութիւնը նպատակաուղղուած է. այս հեղինակները իրենց ժամանակի ընկերութեան ամէնէն դառն քննադատութեան պահուն իսկ, կը մնան հիւմանիստներ, յոյսի մակարդակի մը խարբսխուած, կապուած՝ տեսակ մը utopian իտէալի մը, որ իրենց կ'արգիլէ հաշտիլ եւ տեղի տալ յուսահատութեան։ Կան ուրիշ հանճարեղ հեղինակներ, Ֆլոպէրի նման, որոնք նոյնիսկ այդ իտէալական տեսիլքին բացակայութեան՝ իրենց աշխարհահայեացքին մէջ, չեն յանձնուիր յուսահատութեան կամ անձկութեան։ Այս ալուլստաղէտներուն համար մարդը՝ որքան ալ խեղաթիւրուի իր մարդկային գոյացութիւնը (substance), ընկերային էակ է եւ, ատով ալ՝ դրական կերպար։

Անհատին եւ իր շրջապատին յարաբերութիւնը երբ կը սահմանուի իբրեւ հիմնական տարբերութիւն, անանցանելի խոչընդոտներու մարզ՝ կը ստեղծուի անհեթեթ կացութիւն մը։ Պեքէթի թատրոնը կը պարունակէ այսպիսի տրամադրութիւններու ամէնէն զեղեցիկ արտայայտութիւնները։ Արդիապաշտ արուեստները կը պատկերեն մարդկային կացութեան տագնապալի եւ մութ շերտերը՝ օգտագործելով ալամաղրելի բոլոր արտայայտամիջոցներն ու ոճերը։ Ուրեմն, հիմնաւորուած չէ ա՛յն տպաւորութիւնը, թէ արդիապաշտը անպայման վերացական ոճերու ջատագովն է։ Առհասարակ կարելի չէ արդիապաշտներուն մօտ ոճային ընդհանրութիւններ գտնել։

Հակառակ իրենց կեդրոնացումին մարդկային կացութենէն շատ նեղ եւ «վիրաւոր» շերտի մը վրայ, արդիապաշտ արուեստի գլուխ–գործոցները դասական, վիպապաշտ կամ իրապաշտ վարպետներու գործերէն նուազ վաւերական եւ կամ նուազ ոգեշունչ չեն։ Գեղարուեստական զեղեցկութեան չափանիշը պատկան ուղղութեան զաղափարաբանական «ճշդութիւնը» չէ անպայման։ Գաղափարը, որքան ալ զեղեցիկ եւ ճշմարիտ ըլլայ, գործին մեքենականօրէն յաջողութիւն չ'ապահովեր։ Ցամէնայնդէպս, գեղարուեստական զեղեցկութեան կամ ձեւի եւ բովանդակութեան յարաբերութեան հարցը գեղագիտութեան կեդրոնական նիւթերէն է եւ պատմութեան սկիզբէն ի վեր զբաղեցուցած իմաստասիրութեան եւ արուեստի մարդիկը։

ՍԵԴԱ ԳԱՐՍՈՒՄԵԱՆ–ՏԱՏՈՑԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՆՈՊԷԼԵԱՆ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ ԿԱՊՐԻԷԼ ԿԱՐՍԻԱ ՄԱՐՔԷՋ

Աբսայոյտուելով իր գրչակից ընկերոջ՝ Կապրիէլ Կարսիա Մարքէզի վաստակի մասին, լիւիցի հանրածանոթ բանաստեղծ Փաւլօ Ներուտա այս մեծ վիպագիրին գրականութիւնը կը նկատէր «Սիրվածդէսի «Հոն Քիշոթէն ետք ամենակարեւոր յայտնութիւնը՝ ապաներէն լեզուի մէջ»։ Որքան ալ յարգանքի տուրք կամ յափշտակուած քուն Ներուտայի յայտարարութիւնը՝ անիկա կը պարփակէ բացայայտ ճշմարտութիւն մը — Մարքէզ կը մնայ ապրող ամենակարեւոր արձակագիրը սպանագիր գրականութեան։

Գոլոմպիացի արձակագիրին գրականութիւնը սերտօրէն առընչուած է իր ծննդավայրին եւ Հարաւային Ամերիկայի ընդհանուր իրականութեան հետ։ Լրագրութեամբ սկսած՝ Կապրիէլ Կարսիա Մարքէզ ծնած է Գոլոմպիոյ Ծովափնեայ գիւղերէն մէկուն մէջ՝ Արքաթաքա, 1928ին։ Հիւսիսամասն պաշտօնեայի մը 16 զաւակներէն մէկը՝ Մարքէզ, իր կեանքի առաջին 8 տարիները անցուցած է մօրենական մեծհօր ու մեծմօր մօտ։ Մեծ հարցը, որ կրնայ նախատիպարներէն մէկը ըլլալ Մարքէզի «Ոչ ոք կը գրէ Գոլոնելին» անուն կարճ պատմուածքին, հին զինուոր մըն էր՝ թաղուած քաղաքացիական պատերազմի յիշողութիւններուն մէջ, իսկ մեծ մայրը լաւ պատմող մը, որ մանուկին երեւակայութիւնը կը բեռնաւորէր սգիներու պատմութիւններով եւ երբեմն կը զրուցէր... մեռելներուն հետ։

Այդ տարիները Մարքէզին սորվեցուցին առանձնութեան իմաստը։ Մեծ տան մը մէջ, ծեր ու տարտոց ազգականներու ընկերակցութեամբ, Մարքէզ սաստիկաբար կը զգայ փոքրութիւնն ու իմաստը առանձնութեան, որ ապագային, երբեւ հիմնական թեմա պիտի դրսեւորուի իր գրականութեան մէջ։ Ինչպէս գրական քննադատ մը պիտի ըսէ. «Պարիսպերէն ալուէր» վէպի բռնատէրին համար կայ իշխանութեան պատճառաւ ընտիրուած առանձնութիւնը։ «Լուսն իր կատուին մէջն է» պատմուածքին մէջ՝ գեղեցկութեան առանձնութիւնը, իսկ գնչուին համար, որ կը պատմէ Մոմատս բնակիչի յայտնդակում վեց սերունդներուն պատմութիւնը «Հարիւր տարուան մենութիւն» հատորին մէջ՝ գոյութիւն ունի առանձնութիւնը՝ մաքր։

Կարճ ժամանակաշրջան մը իրարանցութիւն ուսանելէ ետք, Մարքէզ կ'անցնի լրագրութեան եւ յաջորդ երկու տասնամեակներուն Հարաւային Ամերիկայի ժամուղին թղթակցութիւններ կը գրէ Հաւանայէն, նաեւ Եւրոպէն եւ եւրոպական մայրաքաղաքներէն։ Այս մասին Մարքէզ կ'ըսէ. «Կը հաւատամ, որ լրագրութիւնը իմ հիմնական կոչումն է... լրագրութիւնը արտօնած է ինծի մեծագոյն կապի մէջ ըլլալ իրականութեան հետ»։

1967ին լոյս կը տեսնէ «Հարիւր տարուան մենութիւն» անուն վէպը, որ կարճ ժամանակաշրջանի մը ընթացքին 32 լեզուներու կը թարգմանուի, առնչի քան 10 միլիոն ապատումով։ Այդ գործը գինք հանրածանոթ անուն կը դարձնէ։ 1975ին լոյս կը տեսնէ «Պատրիարքին աշունը» եւ այսպէս, յաջորդաբար, իր բոլոր գործերը՝ մինչեւ «Ցայտաբարուած մահուան մը ժամանակագրութիւնը»։

Որքան սուղարաւ է դրողը, նոյնքան եւ ուշադրաւ է մարդը։ Ամբողջ տասնամեակներ ուժգնօրէն ընդդիմացած Հարաւային Ամերիկայի բռնակալական վարչակարգերուն, Մարքէզ՝ երբեւ մտաւորական եւ լրագրող, ծանօթ է ընկերային ու տնտեսական բարեկարգումներու ի նպաստ տուած իր կեցուածքներով։ Անձնական բարեկամ Ֆիտել Քաստրոյի եւ Ֆրանսուա Միթերանի՝ տե

digitised by A.R.A.R.@

նիւթական եւ բարոյական աչխոյժ ժամանակցութիւն բերած է ազգային ու ընկերային յեղափոխական յարժումներուն։ Դեռ 1975ին Մարքէզ կը յայտարարէր, թէ կը հրաժարի գրելէ, մինչեւ Զիլիի բռնատէր զօրավար Օկոսթօ Փինոչէի անկումը։ Իսկ անցեալ ապրիլ, ազմկաձայն մեծով մը կը ժպիր հայրենիքը՝ Գոլոմպիան եւ փախուստ կու տար Մեքսիքօ, յայտարարելով որ իշխանութիւնները կեղծ քննադատութիւններ կը պատրաստեն զինք ձերբակալելու համար։ Իսկ Ներկայիս կը մտադրի Նոպէլեան մրցանակէն ստացած նիւթական պարգեւը, շուրջ 157 հազար տոլար, յատկացնել Գոլոմպիայի մէջ հրատարակելի ժխալոգժեան աշխարհահայեացքով թերթի մը հիմնումին։

Ամէն պարագայի, անկախ իր քաղաքական այլեալ հաւայեացքէն, Մարքէզ կը մնայ գրող մը, որ իր տիպարներով, հարցերով, բնաչխարհի հենդանի ներկայացումով եւ մթնոլորտով կը բերէ ամբողջ ցամաքամաս մը՝ իր մարդկային, ընկերային, մշակութային, տնտեսական եւ քաղաքական իրականութիւններով ու հակասութիւններով։ Իր բերած գիւղը՝ Մաքոնտոն, կարծէք մէկ աբեւագարձային տարբերակն է Ծոյլ-ներրի Եռանփաթուիային, ուր իրականն ու ներկայանը կը միմուլուին եւ, այս իսկ պատճառով, իր գրականութիւնը կը բնորոշուի իրրեւ էկխարդական իրապաչառութիւն։

Ինչպէս իր հերոսներէն զնչու Մելքուիատէսը կը յայտարարէ. «Իրերը իրենց տատնձին կեանքը ունին...» Հարցը պարզապէս անոնց ոգիները արթնցնելու մէջ կը կայանայ», Մարքէզ նաեւ կը փորձէ իրերու ներքին աշխարհը, կենդանի ոգին գտնել։ Իսկ իրեն համար՝ երբեմն իրականը չատ աւելի անիրական կը թուի, քան երեւակայութիւնը։

Նոպէլեան մրցանակի արժանանալուն առթիւ, բնականաբար մամուլին ու գրական շրջանակներու մէջ հարց պիտի դառնար նաեւ ընդհանրապէս Գոլոմպիայէն դուրս ապրելու պարագան — երբեմն՝ գործի բերումով, երբեմն՝ ընտրովի եւ երբեմն ալ պարտադիր։ Այս հարցը արծարծող ամերիկեան «Նիւզուիք» շաբաթաթերթի հարցումին պատասխանելով, թէ՝ իր գրականութիւնը փոփոխութիւններ կրա՞ծ է իր աշխարհի մէջ ապրելուն իրրեւ հետեւանք՝ Մարքէզ կ'ըսէ.

«Զարգացում մը զոյութիւն ունի իմ արձակիս մէջ, սակայն չեմ կարծեր, թէ կը բխի տարածէն։ Ձեւով մը միշտ ալ տեղի մէջ եղած եմ։ Շուրջ 25 տարի Գոլոմպիոյ մէջ չեմ ապրած, սակայն չեմ ըսեր, թէ հապտեկան տեղի մը եմ, այլ՝ գրական։ Ես մէկ տեղէն միւսը կը ճամբորդեմ հանկնալու համար դրդապատճառները եւ փորձելով ըմբռնել իրականութիւնը։ մասնաւորաբար Լատին Ամերիկայի իրականութիւնը»։

Հարանաբար ճիշդ այս պատճառով ալ լուսաբանող է մէկ այլ քննադատի մեկնաբանութիւնը Մարքէզի գործին, որ կ'ըսէ, թէ իր գրականութիւնը կարգալով՝ կը զգանք, որ իւրաքանչիւր քայլափոխին մեր մէջ ոգեր պատմութեան մէջ է, միւսը՝ ապագային։

Լուսաբանը Մարքէզի գրականութեան վրայ կեդրոնացնելով՝ ամբողջ ցամաքամասի մը իրականութիւնը կը յայտնուի մեր դիմաց։

digitised by A.R.A.R.@

ՀԱՄԱՊԱՏԿԵՐ

ԱՐԵՒՄՏԱՀԱՑ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՀԱՏՈՐ

ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏ ՍԵՐՈՒՆԴ

Յ. ՕՇԱԿԱՆ՝ Յ. ՕՇԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ԳԱՐԵԳԻՆ Բ.

Աթոռակից Կաթողիկոս

646 էջ, գին՝ 60 լ. ոսկի՝ թղթակազմ, 20 տոլար

Ստանալու համար դիմել

Librairie
Du Catholicossat Arménien
Antilias - Liban

digitised by A.R.A.R.@

ԼԻԲԱՆԱՆ

Հատավաճառ	12	Լ· Ո·
Տարեկան բաժնեգին	125	Լ· Ո·

ՍՈՒՐԻԱ

Հատավաճառ	15	Ս· Ո·

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեգին	40	Ամերիկեան տոլար

باكين

مجلة شهرية ، ادبية وفنية علمية

المدير المسؤول

السيد ارتين كارنيك قزانجيان

•

PAKINE

REVUE MENSUELLE

LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire

Dr. A. KAZANDJIAN

•

ԲԱԳԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

Խմբագիր

ՊՕՂՈՍ ՄՆԱՊԵԱՆ

Խմբագրութեան անդամներ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Վարչական պատասխանատու

ՎԱՀԷ ԲՐՈՒՏԵԱՆ

B. P. 11-8404 - Beyrouth - LIBAN

Tel. 296898

digitised by A.R.A.R.@